Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

38002
нмц.

38002

# ՎԱՐԺՈՒԹԻՒՆ
# ՁԱՅՆԱՒՈՐ ՄԱՆԿԱՆՑ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱՑ
Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ. ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ
Տ. ԵՍԱՅԵԱՅ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ
Տ. ՆԵՐՍԷՍԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

38002

*Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ*
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ
1877

ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

# ՏՊԱԳՐԵԱԼ

ԸՐԴԵԸՄԻՒՔ

ՄԵԾԱՊԱՏԻՒ

## ԱԲԻԿ ԷՖԷՏԻՒ ՈՒՆՃԵԱՆ

*Ի ՅԻՇԱՏԱԿ*

Ի ՏԷՐ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

ԲԱՐԵՊԱՇՏՕՆ ՀՕՐ ԻՒՐՈՅ

ՄԵԾԱՊԱՏԻՒ

## ԿԱՐԱՊԵՏ ԷՖԷՆՏԻՒ

## ՈՒՆՃԵԱՆ

ԵՒ ԵՐԿՈՒՑ ՀԱՐԱԶԱՏԱՑՆ

*ՄԵԾԱՊԱՏԻՒ*

ՍԵԳՐԱԿ ԵՒ ՄԻՍԱՔ ԷՖԷՆՏԻՆԵՐՈՒՆ

# ԿԱՆԽԱԲԱՆ

Ներկայ Գրքոյկս որ եկեղեցական երգերու հաւաքածոյ մ՚ է, յատկապէս պատրաստուած է Եկեղեցւոյ երգեցիկ մանկանց համար։ Ազգային վարժարանաց մէջ այս երգերու դասերը մինչև ցարդ երբեմն բերանացի և երբեմն Շարականներու, Ժամագրքերու և Տաղարաններու և շատ անգամ ալ ձեռագիր թղթիկներու վրայ կ՚աւանդուէր. և թէ այս մասին ի՛նչ մեծ դժուարութիւններ կային, պատուարժան դասատուք քաջ գիտեն. ուստի և վստահ եմք որ սոյն հրատարակութիւնս օգտակար պիտի ըլլայ թէ Հոգաբարձութեանց և թէ Ուսուցչաց և ուսանողաց։ Քանզի իւրաքանչիւր երեք աշակերտի մէկ օրինակ հաշուելով, տասներկու աշակերտի չորս չորս հատ Շարական, Ժամագիրք և Տաղարան պէտք էր ձայնաւորի դասերը կանոնաւոր կերպիւ աւանդելու համար, մինչդեռ հիմա, ինչպէս կը յուսամք, կարողութիւն ունեցող աշակերտք մէկ մէկ հատ իրենց համար պիտի առնան. և եթէ այսպէս ալ չըլլայ, դարձեալ՝ Վարժարանի Հոգաբարձութիւնք փոխանակ քանի մը հարիւր ղուրուշ ծախք ընելու, միայն մէկ օրինակ շարականի գնով շատ օրինակ պիտի կարենան առնել գրքոյկէս 'ի պէտս ձայնաւոր աշակերտաց, որք թէ Վարժարանի և թէ Եկեղեցւոյ մէջ կարող են գործածել, և ասով երկու դժուարութիւն ևս պիտի անհետանայ. Նախ՝ աշակերտք դասարանի մէջ պարապ չեն նստիր և իրենց սովրածն կրնան սերտել պէտք եղած ատեն, երկրորդ՝ Եկեղեցւոյ մէջ բազմաթիւ տղայք մէկ օրինակ շարականի վրայ երգելու չեն ստիպուիր։

Երգարանիս մէջ գլխաւորապէս այն երգերը ամփոփեցինք ինչ որ տղայք կ՚ուսանին Եկեղեցւոյ տարեկան շրջանին մէջ. շատ երկար երգերէն, որոնց ամեն տան եղանակները միևնոյն են, քանի մը տուն միայն դրինք, դասատուութեան համար բաւական ե-

ղածին չափ ։ Մի քանի ալ սաղմոսներ և փոխեր աւելցուցինք․ փոխերէն ամբողջ կարդացուածները ամբողջապէս գրինք․ իսկ միւսներէն քանի մը տուն․ վասն զի տղայք եթէ ասոր մէջ եղածները ընթեռնլոյ չափ վարժին, կրնան միացեալները ժամագրքին մէջ կարդալ ։ Վերջապէս Տօն և Կիրակի օրերու համար եղածներուն աւելի մտադրութիւն ըրինք որ ըստ կարելւոյն անոնցմէ պակաս բան չգտնուի ։

Մի քանի երգեր կան որոց համար տեղ տեղ մասնաւոր սովորութիւններ կան․ օրինակի համար, Խաչահանգստի առեն շատ տեղ այս կամ այն երգերը կ'երգեն․ մեք Պոլսոյ մէջ ընդհանուր եղածը գրինք․ շատ տեղ ալ սովորութիւն կայ՝ Առաքելոց Համբարձմին վերջը Սրբ․ ողորմեա և Նո համբարձեալ երկու տուն շարական կը յաւելցընեն․ և որովհետև Տօնացուցին մէջ չկայ այս, ուստի մեք 'ի վերջոյ յաւելցուցինք որ ուզողը հոն գտնէ, եւ ։

Խազերը ըստ վաղեմի սովորութեան գրինք, բայց միայն երկարելու տեղերը, քանի մը անհրաժեշտ բարեփոխութեամբք․ շատ պէտք եղած տեղեր Սուղ նշանն ալ գրինք որ ոգելու վանկերը տղայք դիւրաւ ըմբռնեն ։ Եւ եթէ դժրադդարար մեր եկեղեցական երաժիշտք եղանակներու մասին դեռ անհամաձայն են միմեանց, սակայն ոչ այնպէս երգերու մասին․ ուստի սոյն Երգարանս ամենքն ալ կրնան գործածել 'ի դիւրութիւն իւրեանց, ինչ կարծիք ալ որ ունենան երգերու եղանակաց մասին ։

Սոյն հրատարակութիւնս որ անցեալ 1876 թուականէն 'ի վեր մամլոյ ներքև էր, թերևս դարդ իսկ չկարենայինք 'ի լոյս ածել վասն թանկութեան թղթոյ և ծախուց տպագրութեանն, եթէ չէր ձեռնտու լեալ մեզ Ազգասէր Բարերարին որ հաճեցաւ նուիրել զսա 'ի յիշատակ բարեպաշտ Հօր իւրոյ և երկուց Հարազատացն 'ի Տէր հանգուցելոց, որոց յիշատակն օրհնութեամբ պիտի գովի յեկեղեցւոջ, քանի որ սովաւ փառաբանի Բարձրեալն 'ի բերանոյ մանկանց և տղայոց Ս․ Եկեղեցւոյ մերոյ ։

Ե․ Մ․ ՏՆՏԵՍԵԱՆ

## ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

Տպագրութեան ժամանակ թերևս խազերու վրիպակներ սպրդած և ոմանք ալ կոտրտած լինին, ուստի թէ՛ այս խազերը և թէ՛ ք տառը զոր միշտ ներգործութեամբ դրինք պէտք եղած տեղը, արդոյ դասատուք կրնան բարեփոխել երբ բանաւոր հարկ մը տեսնեն ։

# ԽՐԱՏՔ

## ՍԿՍՈՒԱԾՔ ԵՐԳՈՑ Ի ՁԱՅՆԻ ԴԱՍԷՆ

Տէր զի բազում փառօքն և ցնծութեամբ ։ Աստուածոյ լուսոյ ։ Կանոնագլուխ ։ Հանգստեան շարական և Սաղմոս ։ Աստուած անեղ ։ Տէր ողորմեայ փոքրունք ։ Ալէլուի ։ Մեծացուսցէ ։ Ողորմեա ։ Սուրբ Աստուած (քանիցս և երգի) ։ Մանկունք ։ Սաղմոս ։ Նորաստեղծեալ ։ Կեցո ։ ԱՐԽԻԱԳԱԼԻ Ցորեկից ։ Ճշմարտութեան ։ Ճանապարհ ։ ՃԱՇՈՒ Օրհնեմք զՏէր ։ Ճաշու շարական ։ Համբարձի ։ Շնորհեա ։ Նայեաց սիրով ։ իսկ մնացեալքն ամենայն սկսանին 'ի կողման դասէն ։ Յորժամ Թուականն Հայոց փարթ լինի, բուն ձայնքն ԱՁ ԲՁ ԳՁ ԴՁ յաջակողման դասուն լինին ուր սուրբ աւազանն է. և յորժամ զոյգ լինի՝ ձախոյն լինին, սկսեալ 'ի Բուն բարեկենդանէ ։



Ուրախացիր սրբուհի գաբրիէլի աւետեօքն. որ քարոզեացն ըզգալոյ ըստ արքային տեառն 'ի յերկնից ։ Ողջոյն ընդ քեզ մարիամ 'ի քեզ սուրբ հոգին եկեսցէ. և զօրութիւն բարձրելոյն 'ի վերայ քո հովանասցի ։ Որ ծնանելոցն է 'ի քէն խորայելի առաջնորդ. և ընդհանուր քարոզի աստուած հզօր անմահ բանն ։

Ուրախ լեր բերկրեալ ամենասուրբ կոյս. որ ծնար աշխարհի զարդարութեան արեգակն. որ լուսաւորեաց զազգս որդւոց մարդկան ։

Ուրախ լեր բերկրեալ դուռըն կընքեալ. որ ծընար աշխարհի ըզլծագաւորըն քրիստոս. որ նըստի 'ի վերայ անարուեստ աթոռոյ ։ Գեղմն իմանալի զոր եսես գեդէօն յառաջ քան զայս հաւատացեալ. իմանամք զանճառելի ըզծընունդ. և երկըրպագեմք որ 'ի կուսէդ մարմնացաւ աստուած ։

Ողորմեա ։ ԲՁ

Անկանիմք առաջի քո աստուածածին. և աղաչեմք զանարատ ըզկոյսդ ։ Բարեխօսեա

վասն անձանց մերոց. և աղաչեաւ զմիածին որդին։ Փրկեալ ըզմեզ 'ի փորձութենէ. և յամենայն վտանգից մերոց։

Ճաշու ԳՁ։ (մեծա.)

Զանճառելի լուսոյ մայր, և ըզընակարան անըսկըզընակից որդւոյն. օրհնութեամբ մեծացուցանեմք։ Զանհաս տնօրէնութեան մայր, և զանձնաւոր տաճար աստուծոյ բանին. օրհ"։ (Փառ.ք". Այժմ և".) Զբոլորից փրկութեան մայր, որ զանտանելին էից 'ի յարգանդի եբարձ. ըզնա ամենեքեան օրհնութեամբ մեծա"։

---

Օրհնութիւն Ծննդեան տեառն մերոյ տաղն։ ԴԿ

Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւքն երգեն ընդ հրեշտակս տան աւետիս աշխարհի։ Ծնաւ նոր արքայ 'ի բեթլեհէմ քաղաքի. որդիք մարդկան օրհնեցէք զի վասն մեր մարմնացաւ։ Անբաւելին երկնի և երկրի 'ի խանձարուրս պատեցաւ. ոչ մեկնելով 'ի հօրէ 'ի սուրբ այրին բազմեցաւ։

Այսօր ցընծան երկինք 'ի վերուստ մեծապայծառ աւետեօք. և արարածք ամենայն



զգեցան հանդերձ փրկութեան։ Այսօր յայրին ընծայեցաւ քրիստոս որդին աստուծոյ. և հրեղինաց բազմութիւնքն յերկնից յերկիր վայր իջեալ։ Այսօր հովուացն տեսեալ զարդարութեան արեգակն. և ընդ հրեշտակս երգէին փառք 'ի բարձունս աստուծոյ։

Ի հօրէ ծագեցար լուսաւորել զարարածս. արդարութեան արեգակըն տէր փառըք քեզ։ Ծընար 'ի յայրին ընծայեցար բեթլէհէմ. ա"ր"։ Հովուաց յայտնեցար երկրպագեալդ 'ի մոգուցն. ա"ր"։ Եւ մեք երգեսցուք որ 'ի կուսէն մարմնացար. ա"ր"։

Ալէլուիա Ծննդեան Տեառն Յիսուսի 'ի ճիշերային ժամուն։

(Ա.Ձ) Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։
Տէր հովուեսցէ զիս և ինձ ինչ ոչ պակասեսցի։ Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս. և առ ջուրս հանգըստեան սընոյց զիս։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։
Իջցէ որպէս անձրև 'ի վերայ գեղման. որպէս ցօղ զի ցօղէ յերկիր։ Ծագեսցի յաւուրս նորա արդարութիւն. բազում խաղաղութիւն մինչև կատարեսցի լուսին։

Փառք և երկրպագութիւն հօր և որդւոյ և

հոգւո՛յն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենի՛ց. ամէ՛ն:

Զնոյն ամենայն տէրունական տօնի որ Ա.Զ լինի՝ ըղնամ տաա՛:

Դա՛սք հրեշտակաց օրհնեն զքեզ Քրիստոս.
ալէ՛լուիա. մարդկա՛ն ազգ սաղմոսեն քեզ.
ալէ՛լուիա՛:

(ԱԿ) Ալէլուիա. ալէլուիա. ալէ՛լուիա:
Լո՛ւր դուստր և տե՛ս. խոնարհեցո՛ զունկըն
քո. մոռա՛ զժողովուրդ քո և զտուն հօր քո.
զի ցանկացաւ թագաւոր գե՛ղոյ քոյ: Զա՛ ինքն
է տէր քո՝ երկիրպագցես սմա. և դուստրը
ծուրայ երկիրպագցէ սմա. և պատարագօք
զերեսս սորա պաշտեսցեն մեծամեծք 'ի ժո-
ղո՛վրդո՛ց:
Ալէլու՛: Նա՛ կարդասցէ առ իս՝ հայր իմ ես
դու. աստուած ընդունող փըրկութեա՛ն իմոյ:
Ե՛ս անդրանիկ արարից զնա. և բարձր քան
զամենայն թագաւո՛րս երկրի՛:
Փա՛ռք և եր՛: Ա՛յժմ և՛: Ալէլու՛: (երեք անգամ)

(ԲԶ) Ալէլուիա. ալէլուիա. ալէ՛լուիա:
Իջցէ՛ որպէս անձրեւ 'ի վերայ գեղման. որպէս
ցօղ զի ցօղէ՛ յերկիր: Ծագեսցի՛ յաւուրս նո-
րա արդարութիւն. բազում խաղաղութիւն մին-
չեւ կատարեսցի՛ լուսի՛ն:



Ալէլու՛: Եցո՛յց տէր զփրկութիւն իւր. առա-
ջի ազգաց յայտնեաց զարդարո՛ւթիւն իւր:
Յիշեա՛ց ողորմութեամբ իւրով զյակոբ. ճշմար-
տութեամբ իւրով զտունն իսրայէլի. և տեսին
ամենայն ծագք երկրի զփրկութիւն աստու-
ծո՛յ մերո՛յ:
Փա՛ռք և երկրպա՛: Ա՛յժմ և միշտ՛: Ալէլու՛:

(ԲԿ) Ալէլուիա. ալէլուիա. ալէ՛լուիա:
Նա՛ կարդասցէ առ իս՝ հայր իմ ես դու. աստ-
ուած ընդունող փրկութեա՛ն իմոյ: Ե՛ս անդ-
րանիկ արարից զնա. և բարձր քան զամենայն
թագաւո՛րս երկրի՛:
Ալէլու՛: Ընդ քե՛զ է իշխանութիւն աւուր զօրու-
թեան. 'ի վայելչութիւն սրբոց քոց յարգանդէ
յառաջ քան զարուսեակ ծնա՛յ զքեզ: Երդ-
ուա՛ւ տէր և ո՛չ եւս զղջասցի. թէ դու ես
քահանայ յաւիտեան ըստ կարգին մելքիսեդե-
կի. և տէր ընդ աջմէ՛ քումմէ՛:
Փա՛ռք և երկրպա՛: Ա՛յժմ և միշտ՛: Ալէլու՛:

(ԳԶ) Ալէլուիա. ալէլուիա. ալէ՛լուիա:
Եցո՛յց տէր զփրկութիւն իւր. առաջի ազգաց
յայտնեաց զարդարո՛ւթիւն իւր: Յիշեա՛ց ո-
ղորմութեամբ իւրով զյակոբ. ճշմարտութեամբ
իւրով զտունն իսրայէլի. և տեսին ամենայն

ծագք երկրի զփրկութիւն աստուծո՞յ մերո՛յ ։
Ալէլու՛՛ ։ Յիշեա՛ տէր ըզդաւիթ, և զամենայն հեզութի՞ւն նորա ։ Որպէ՛ս երդուաւ տեառն. և ուխտս եդ աստուծոյ յա՞կոբա՛յ ։
փա՛ռք և երկրպա՛՛ ։ Ա՛յժմ և միշտ՛՛ ։ Ալէլու՛՛ ։

(Գկ) Ալէլուիա. ալէլուիա. ալէ՞լուիա ։
ընդ քե՛զ է ըսկիզբն աւուր զօրութեան. 'ի վայելչութիւն սըրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծընա՞յ ըզքեզ։ Երդուա՛ւ տէր և ո՛չ եւս զղջասցի. Թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին մելքիսեդեկի. և տէր ընդ աջմէ՞ քումմէ՛ ։
Ալէլու՛՛ ։ Տէ՛ր ասաց ցիս որդի իմ ես դու. և ես այսօր ծընա՞յ ըզքեզ։ Խնդրեա՛ յինէն և տաց քեզ զհեթանոսս 'ի ժառանգութիւն. և իշխանութիւն քեզ ընդ ամենայն ծա՞գս երկրի՛ ։
փա՛ռք և երկրպա՛՛ ։ Ա՛յժմ և միշտ՛՛ ։ Ալէլու՛՛ ։

(Գձ) Ալէլուիա. ալէլուիա. ալէ՞լուիա ։
Յիշեա՛ տէր ըզդաւիթ, և զամենայն հեզութի՞ւն նորա ։ Որպէ՛ս երդուաւ տեառն. և ուխտս եդ աստուծոյ յա՞կոբա՛յ ։
Ալէլու՛՛ ։ Տէ՛ր հովուեսցէ զիս. և ինձ ինչ ո՛չ պակա՞սեսցի ։ Ի վայրի՛ դալարւոջ անդ բնակեցոյց զիս. և առ ջուրս հանգըստեան սը՞նոյց զի՛ս ։
փա՛ռք և երկրպա՛՛ ։ Ա՛յժմ և միշտ՛՛ ։ Ալէլու՛՛ ։



(Դկ) Ալէլուիա. ալէլուիա. ալէ՞լուիա ։
Տէ՛ր ասաց ցիս՝ որդի իմ ես դու. և ես այսօր ծընա՞յ ըզքեզ։ Խնդրեա՛ յինէն և տաց քեզ զհեթանոսս 'ի ժառանգութիւն. և իշխանութիւն քեզ ընդ ամենայն ծա՞գս երկրի՛ ։
Ալէլու՛՛ ։ Լո՛ւր դուստր և տե՛ս. խոնարհեցո՛ զունկըն քո. մոռա՛ զժողովուրդ քո և ըզտուն հօր քո. զի ցանկացաւ թագաւոր գե՞ղոյ քոյ ։ Սա՛ ինքն է տէր քո՝ երկիրպագցես սմա. և դուստրը ծուրայ երկիրպագցէ սմա. և պատարագօք զերեսս սորա պաշտեսցեն մեծամեծք 'ի ժողո՞վրդո՛ց ։
փա՛ռք և երկրպա՛՛ ։ Ա՛յժմ և միշտ՛՛ ։ Ալէլու՛՛ ։

———

Փա՛ռք 'ի բարձունս աստուծոյ և յերկիր խա՛՛ ։

Առաւօտու եքէ ։

Արեգակն արդարութեան այսօր յայտնեցար ազգի մա՞րդկա՛ն. մարդ եղեալ սըրբեցեր ըզջուրս. վերածընեալ ըզմեզ մըկրտութեամբըն սըրբոյ հո՞գւո՛յն ։ Ի վայելչութիւն փառաց սըրբութեա՞ն քո՛, 'ի յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծընայ ըզքե՛զ. մարդ եղեալ սըրբե՛՛ ։

Քարոզ ։

Մայր սո՛ւրբ ըսքանչելի լուսո՛յն, որ զաստուածն ամենայն յաւիտենից յորովայնի քո՛ւմ կրե-

ցեր, և ցընծութի՟ւն աշխարհի ծընար ըզքանն
ատըւա՛ծ. ա՛ղաչե՛մք։ Մայր սուրբ բարեխօ՛ս։
Աղաչեա՛ վասըն մեր զառ 'ի քէ՛ն ըզմարմնացեալըն
ատըւա՛ծ, որ խոնարհեցաւ 'ի հայրական ծո-
ցո՛յ. էա՛ռ մարմին ըստ մարդկային բը՛նո՛ւ-
թեանս. առնե՟լ խաղաղութիւն յերկինս և
յերկրի՛. ա՛ղա՛չե՛մք։
Աղաչեա՛ վա՛։ Ներե՛լ մեղ անտես առնել ըզ-
յանցա՛նը՛ս մեր. և տա՟լ օգնականութիւն ընդ-
դիմակաց լինիլ հակառակամարտիցն 'ի պատե-
րազմի՛. աղա՛.
Աղաչեա՛ վա՛։ Զի լըռեսցին պատերազմո՛ւնք.
դադարեսցին յարձակմունքըք թը՛շնա՛մեաց.
տընկեսցի՟ սէր և արդարութիւն 'ի յերկրի՛. աղ՛։
Աղաչեա՛ վա՛։ Աճեցուցանել յերկրի մերում ըզ-
քաղցըր բըղխումն աղբերա՛ց. զառա՛տ պըտ-
ղաբերութիւն բուսոց և՛ տը՛նկոց. առ 'ի զուար-
ճալի՟ լինիլ ամենայն հարկաւոր պիտոյից մե-
րո՛ց. աղա՛։
Աղաչեա՛ վա՛։ Զի միաբանեսցէ զեկեղեցի իւր
սո՛ւրբ. շինեա՛լ 'ի վերայ հիման առաքելոց և
մարգա՛րէ՛ից. պահե՟լ անարատ մինչև յօր ե-
րևելոյ դալըստեան իւրո՛յ. աղա՛։
Աղաչեա՛ վասըն մեր սըրբուհի՟ ըզմիածին քո
զորդին. և վասըն հոգւոցըն հանգո՛ւցե՛լոց,
ընդունի՟լ յարքայութիւն երկնից, և տալ մասն
և բաժին ընդ սուրբս ամենա՛յն. աղա՛։ Յիշեա՛։



Եւ ևս առաւե՛լ զյորդորումըն սիրոյ և ըզգործըս
բարեաց պարգևել մե՛ղ խը՛նդրե՛մք։ Տուր մեղ։
Զա՛նձինըս մե՛ր։ Ողորմեա՛ց մեղ։

Սաղմոս։

Ի վայելչութիւն սըրբո՛ց քո՛ց յարդանդէ յա-
ռաջ քան զարուսեակ ծընա՛յ ըզքե՛ղ։
Ասա՛ց տէր ցըտէր իմ նիստ ընդ աջմէ իմմէ,
մինչև եդից ըզթըշնամիս քո պատուանդան
ո՛տից քո՛ց։
Գաւազա՛ն զօրութեան առաքեսցէ քեզ տէր 'ի
սիօնէ, և տիրեսցես դու 'ի մէջ թըշնա՛մեաց քո՛ց։
Ընդ քե՛ղ է ըսկիզըն աւուր զօրութեան. 'ի
վայելչութիւն քոց յարդանդէ յառաջ քան
զարուսեակ ծընա՛յ ըզքե՛ղ։
Երդուա՛ւ տէր և ոչ ևըս զըղջասցի, թէ դու
ես քահանայ յաւիտեան ըստ կարգին մելքի-
սեդեկի և տէր ընդ աջմէ՛ քումմէ՛։
Խորտակեսցէ՛ յաւուր բարկութեան ըզթագա-
ւորըս. դատէ ըզհեթանոսս, և բազում առնէ
ըզհարուածս, և խորտակեսցէ ըզգլուխըս՛ բազ-
մա՛ց յերկրի՛։
Զո՛ւղխս 'ի ճանապարհի արբուսցէ՛. վասն այ-
սորիկ և բարձր արասցէ ըզգլո՛ւխս։ Ալէ՛. Օ՛րթի։

Ձայն։ ԳԶ (մեծ.)

Սուրբ զատուա՛ծ ծի՛նն օրհնութեա՛մբ
մեծացուցանե՛մք։ Աւե՟տաւոր հրեշտակն ա-

ւետարանէր ըզծընեալ փըրկիչն 'ի սըրբոյ կուսէն ։ (փառք․ Այժմ և․) Աւէ ուրախ լեր բերկրեալդ · քանզի տէր տերանց է ընդ քեզ ։

Նրք․ Ջրօրհնէքոյ ։

Լոյս 'ի լուսոյ 'ի հօրէ առաքեցար և մարմնացար 'ի սուրբ կուսէն · զի վերըստին նորոգեսցես զապականեալն ադամ ։ Դու աստուած 'ի յերկրի երևեցար և ընդ մարդկան շըրջեցար · և փըրկեցեր ըզտիեզերըս յանիծիցն ադամայ ։ Քեզ 'ի յերկնից վըկայեալ հօր քո ձայն ասէ դա է իմ որդի · և սուրբ հոգին ըզքեզ յայտնեաց աղաւնակերպ երևմամբ ։ Ըզքեզ որ հոգւով և հըրով մաքրեցեր ըզմարդկան աղտեղութիւն · որպէս զաստուած և ըզփըրկիչ ամենեքեան օրհնեսցուք ։ Փըրկիչն երևեցաւ և զաշխարհս ապրեցոյց 'ի պատրանաց թըշնամւոյն · որդէգրութիւն շնորհելով 'ի ձեռըն մըկըրտութեան ։ Ջրով կիզու ըզմեղըս մեր այսօր երևեալ ապրեցուցիչն · և զովացուցանէ զաշխարհս աստուածային ջըրովն ։ Ըզգըլուխ վիշապին փըրկիչըն ջախջախեաց 'ի յորդանան 'ի գետն · և ինքեան իշխանութեամբ զամենեսեան ապրեցոյց ։ Զհին մարդըն



նորոգելով փըրկիչն 'ի մըկըրտութիւն գայ այսօր · զի զապականեալ ըզբնութիւնըս ջըրով նորըս գործեսցէ · անապական ըզգեստ փոխարէն տալով մեզ ։ Մըկըրտի քրիստոս և սըրբին ամենայն արարածք · և տայ մեզ թողութիւն մեղաց · ջըրով և հոգւով վերասըրբելով ըզմեզ ։

Քարոզ ։

Յամենայն ժամ օրհնեմք զօրհնեալ փըրկիչդ էմմանուէլ · ծընար 'ի կուսէն և վերըստին ծնընդեամբ մըկըրտեցար այսօր 'ի յորդանան 'ի յովհաննէ · նորին բարեխօսութեամբ ընկալ ըզաղաչանըս քոց պաշտօնէից աղաչեմք ։ Լուր տէր և ողորմեա ։

Որ սըրբեցեր ըզջուրսն յորդանանու սըրբիչդ աշխարհի · տալով ըզկնիք նորոգման որդւոց սիօնի · տուր մաքրութիւն սուրբ եկեղեցւոյ և ազատութիւն քում ժողովըրդեան · աղա ։ Հեղցես տէր 'ի մեզ ըզշնորհս հոգւոյդ զոր ընկալար տնօրէնութեամբ 'ի յորդանան · զհոգի իմաստութեան, գիտութեան և զօրութեան · զհոգի հանճարոյ և խորհրդոյ աստուածպաշտութեան · լըցո ըզմեզ հոգւով երկիւղի քոյ · աղ ։ Անուն կոչեցար իւղ թափեալ և իւղով հոգւոյն օծեալ կընքեցար · և հայրական ձայնիւ յերկնից սիրելի որդի հօր վըկայեցար · շնոր-

Հեա՜ յորդէգրութիւն ծնելոցըս՝ ժամանել
փառաց որդւոյդ աստուծո՛յ. ա՛ղա՛ :

. . . . . . . . . . . . . . .

Ի հաղբի՜ց Թըշնամւոյն պարըսպեալ ամրացո՛
սուրբ զեկեղեցի՛. և յանուն քո ժողովելոցըս
շնորհեա՛ զքաւութիւն և ըզթողութիւն յանցա-
նաց միածին որդի ա՛ստո՛ւծոյ. յիշեա՜ զհոգիս
ննջեցելոց մերոց և այց արա՛ ՚ի քում գալըս-
տեա՛նդ. ա՛ղա՛չե՛մք : Ցնծեա՛ տէր և ող՛՛:

Ու ես առաւե՜լ զյորդորումըն սիրոյ և ըզ-
գործըս բարեաց պարգևել մե՛զ խը՛նդրե՛մք :

Տուր մեզ տէր աստըւա՛ծ :

Գոչմա՜մբ տիրուհւոյ իսկապէս մոր քո և կուսի
մարիամու աստուածածնի՛ն. և հուպ եղելոյ քեզ
հողանիւթ հրեշտակին՝ ՚ի յորդանան այսօր ըզ-
քեզ ձեռնադրողի՛ն. կըրկին բացողին զերկինըս
սըրբոյն ստեփաննոսի նախավըկայի՛ն. և հօրըն
մերոյ սըրբոյն գրիգորի լուսաւորչի՛ն. և ամե-
նա՜յն սըրբոց քոց տէր որք յաւիտենից քեզ հա-
ճոյացա՛ն. խը՛նդրե՛մք : Տէր ող՛՛. Տէր ող՛՛. Լո՛ւր՛՛:

Տաղ :

Ով զա՛րմանալի՛ խո՛րհուրդ այս մե՛ծ յա՛յտ-
նեա՛լ, ա՛րա՛րիչն աստուա՛ծ ՚ի՛ յորդանա՛ն
ե՛կեա՛լ : կամէր մըկըրտիլ ՚ի ծառայէն իւրմէ,
չառնոյր կարապետն ըզմըկըրտելն ՚ի յանձն :
Ցորդանան լըւեալ փախըստական դառնայր,
վըտակ առ վըտակ պատգամաւոր լինէր : Գետ



մի՛ զարհուրիր՝ քո արարիչն եմ ես, եկեալ
մըկըրտիմ և լըւանամ ըզմեղս : Ցիսուս յառա-
ջեաց աստուածութեամբն ՚ի ջուրն. հանդերձ
յովհաննու յիսուս ՚ի գետն եմուտ :

. . . . . . . . . . . . . . .

Այսօր ձա՛յնը՛ն հայրակա՛ն. յե՛րկնից իջեա՛լ
հա՛ճոյակա՛ն. սի՛րեցելո՛յ ո՛րդւոյ վըկա՛յն. ա՛յ
յորդորէ՛, գե՛տ յորդորէ՛, գե՛տ յորդանա՛ն.
յո՛րդորակա՛ն ձա՛յնիւ երգէ՛, մե՛ծ կարապե՛-
տը՛ն յովհաննէ՛ս :

Այսօր երկիրս երկինք եղե՛ն. երևելով աստուած-
որդւոյն. սիրով եկեալ ՚ի մըկըրտիլ. ա՛յ յոր՛՛:

. . . . . . . . . . . . . . .

Առաքելոյ ա՞ղաւնւոյ իջանելով մեծաձայն
հընչմամբ ՚ի բարձա՛ցնց. ՚ի նմանութիւն լուսոյ
փայլման հրաղինեաց զանկիզելի զաշա՛կե՜րտսն
մինչդեռ նըստէի՛ն ՚ի սուրբ վերնատա՛նն : Ան-
նիւթական ա՞ղաւնի անքըննելի որ քըննէ ըզ-
խորս աստուծո՛ցյ. զոր առեալ ՚ի հօրէ պատմէ
զահաւոր և ըզմիւսանգամ գա՛լո՜ւստն. զոր
քարոզեցի՛ն համագոյակա՛ն : Օրհնութիւն ՚ի՞
բարձունս եղողին ՚ի հօրէ հոգւոյն սըրբո՛ցյ. ո-
րով առաքեալքն արբեցան անմահական բաժա՛-
կա՜ւն. և հրաւիրեցի՛ն զերկիրս ՚ի յերկի՛նս :

———

Ճաշու շարական Բ. աւուր Ծննդեան : Գ.կ (մեծա.)

Ամենագովելի և քան զերկինս բարձրագոյն. որ զանհասանելի ըզտէրըն յորովայնի քում կրեցեր, և ցընծութիւն աշխարհի ծընար. վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք : Ամենապայծառ բերկրեալ միշտ կոյս. որ զանբաւելի ըզբանն անճառաբար յըղացար, և ըզմարմնացեալն աստուած ծընանելով 'ի քէն. վասն ո": (փառ.ք". Այժմ և".) Ի լեռնէ վէմ առանց ձեռին հատեալ. դանիէլ գուշակեաց զանսերմն ըզծնունդ քո հարսն երկնաւոր. մայր և յետ ծնընդեան մնալով կոյս. վասն ո":

Ճաշու շարական Գ. աւուր Ծննդեան : Գ.Զ (մեծա.)

Անըսկըզբնական բանին հօր բընակարան. տաճար և առագաստ տեղի անտանելի լուսոյն. զքեզ մեծացուցանեմք արժանապէս երգով աստուածամայր և կոյս : Ցորմէ կենդանատեղծեալք յանեղէն հաստեցան ամենայն եղականքս. անսերմնապէս տղայացաւ յորովայնի քում. և ծընաւ առ 'ի քէն մարմնացեալ աստուած ընդ բոլորից. զքեզ". (փառ.ք". Այժմ և".) Ցորմէ զարհուրեալ



դողային դասք վերին զըւարթնոցն. տղայապէս առընկալեալ բարձեր 'ի գիրկս. և արբուցեր որպէս մայր ստացողին ըզքեզ ըզկուսական քո սուրբ ըզկաթն. զքեզ".

Ճաշու շարական Դ. աւուր Ծննդեան : Բ.Զ (մեծա.)

Զքեզ կոյս և մայր և բնակարան աստուածային ներմարդութեանն. գոհաբանեմք և վերօրհնեմք զեղեալ փըրկող կենդանութեան ազգի մարդկան. վասն որոյ զքեզ աստուածածին և կոյս բարեբանեմք ըզմայր և զաղախին փըրկչին մերոյ : Ծընունդըն հօր և հին աւուրց անժամանակն յաւիտենից. ժամանակաւ յորովայնի քում բնակեցաւ և 'ի հօրէ ոչ մեկնեցաւ. վասն ո": Ծընեալն 'ի քէն 'ի խաչ ելեալ և 'ի յաթոռ փառաց ընդ հօր անարգեալ 'ի մարդկանէ փառաւորութեամբ էութեամբ երկըրպագեալ. վասն ո": (փառ.ք". Այժմ և".) Զքեզ ոչ միայն որդիք մարդկան այլ և վերին զօրութիւնք. դասք անմարմնոց հոգեղինաց հրեղինաց զըւարթնոց և հրեշտակաց. գոհաբանեն և վերօրհնեն և փառաւորեն ըզմայր և զաղախին փըրկչին մերոյ :

Ճաշու շարական Ե. աւուր Ծննդեան : Բ.Զ (մեծա.)

Անթառամ ծաղիկ անդատապարտ

շառաւիղ · վերաբուսեալ յարմատոյն յեսսեայ · զքեզ եսայիաս կանխաւ վերագուշեաց եօթնարփեան շնորհաց հոգւոյն ընդունարան գոլ · աստուածածին և կոյս · զքեզ մեծացուցանեմք ։ Համեղաճաշակ պըտղոյն բանաւոր բարունակ · յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն անապառ յուրախութիւն տըրտմեցելոցն 'ի ճաշակմանէ ծառոյն գիտութեան · սըրբուհի անարատ ամենեքեան զքեզ"։ (փառք"· Այժմ և"·) Քաղաքավարեալ 'ի մարմնի անարատ վարուք · այսօր յառաքելոցն ամփոփեալ վերին ակնարկութեամբըն վերափոխեցար յարքայութիւն որդւոյ քո և աստուծոյ մերոյ · բարեխօս խոստովանողացս · զքեզ մեծ"։

Ճաշու շարական Զ · աւուր Ծննդեան ։ ԲՁ (մեծա·)

Զքեզ հայր յառաջ քան զյաւիտեանս՝ բարեբանեն դասք անմարմնոց հրեշտակաց · ձայնիւ երգով գոչեն և աղաղակեն · աստուած աստուծոց և տէր տերանց փըրկիչ գոլով։ Առաքեցեր զքո միածինըդ մարմնանալ 'ի սուրբ կուսէն · և անարատ ծընանիլ յորովայնէ անապական · բառնալով ըզմեր նեղութիւնս · աստ"։



(փառք"· Այժմ և"·) Շնորհք բարի յերուսաղէմ երևեցաւ հեթանոսաց · զի արարիչն յաւիտենից տըղայ եղեալ յորդէգրութիւն կենաց կոչէ · աստ"։

Ճաշու շարական Է · աւուր Ծննդեան ։ ԲԿ (մեծա·)

Սիւն լուսոյ և ամպ հովանի սուրբ կոյս, որ ցօղեցեր 'ի մեզ ըզցօղն երկնային · զքեզ բարեբանեմք աստուածածին կոյս ։ Անկէզ մորենի և որովբէ հողեղէն սուրբ կոյս, քանզի պտուղըն կենաց 'ի քէն տըւաւ մեզ · զքեզ"։ (փառք"· Այժմ և"·) Անիծից լուծիչ և քաւիչ մեղաց սուրբ կոյս, որ զանտանելին էից 'ի գիրկըս քո բարձեր · զքեզ բա"։

Շարական Ը · աւուր Ծննդեան ։ Լոյս 'ի լուսոյ (տես էջ 10)

Ճաշու շարական Ը · աւուր Ծննդեան ։ ԱՁ (մեծա·)

Անսկիզբըն աստուած բանդ որ 'ի հօրէ առաքեցար ընդ ժամանակաւ լինել հաճեցար և մարմնացար 'ի սուրբ կուսէն վասըն մերոյ փըրկութեան · այսօր մըկըրտիլ 'ի յորդանան 'ի յովհաննէ բառնալով ըզյանցանս առաջին նախաստեղծ մարդոյն ։ Աներեւելիդ աստուած բանդ անմեկնելիդ 'ի հօրէ · ընդ ժամանակաւ լինել հաճեցար և մարմնացար 'ի սուրբ կուսէն աստուած և մարդ յայտնեցար · այսօր մը"։

(փառ.ք"· Այժմ և".) Չորեքկերպեան կենդանեացն ըղխորհուրդ քարոզեալց ամբոր-գին տեսանելով սուրբ ղհոգին աղաւնակերպ իջմամբ 'ի վերայ ջուրցն աղաղակէին ասելով· ահա գառն աստուծոյ որ 'ի հօրէ վկայեցաւ դա է որդի իմ սիրելի· ընդ որում ես հաճեցայ:

---

Օրհնութիւն Ծննդեան Յովհաննու Մկրտչին: Ակ

Արեգականն արդարութեան ծագման արուսեակ կդ առաւօտեալ· Նախընթաց ճանապարհի որդւոյն աստուծոյ տնօրէնութեան սուրբ յովհաննէս· առ քրիստոս բարեխօսեա վասն անձանց մերոց: Բարձրելոյն անճառ խորհրդոց տեսանող իմաստիւք հոգւոյն· 'ի յորովայնէ մաքրեալ տաճար աստուծոյ և բնակարան սուրբ երրորդութեանն· առ քրիս": Գաբրիէլ հրեշտակապետն առաքեալ առ զաքարիաս· աւետարանել ըղհրաշալի ծնունդ քո սուրբ յամուլ ծերոյն եղիսաբէթէ· առ": Դասապետն երկնից զօրացն երևեալ քահանայապետին· յորժամ մտանէր 'ի սրբութիւն սրբոցն խընկարկելով ըստ օրինացն 'ի տաճարին· առ քրիս": Եւ տեսեալ զանհաւատականն



'ի ձև մարմնոյ յայտնէ սեղանոյն· պակուցեալ յերկիւղ մահու սասանելով և հաստատիւր բանիւ հրեշտակին· առ քրիս": Զգերագոյն քան ըզբնութիւն լուեալ զեղանակ ծննդեանըն քո· սոսկացեալ հիանայր զաքարիաս և համրացեալ պատժիւր պապանձեալ լեզուաւ· առ քրիս": (Եւ այլն 'ի Շարականոցն.)

. . . . . . . . . . . . . .

Հարց: ԴՁ

Որ աւետաւոր քում գալստեանդ առաքեցեր զհրեշտակապետն գաբրիէլ· աւետարանել զաքարիայ զաւետօք ծննդեան յառաջընթաց կարապետին քո յովհաննու· աղաչանօք սորա կեցո զմեզ տէր աստուած հարցըն մերոց: Որ յարգանդին լցեալ հոգւով երկըրպագեաց քեզ յորովայն սըրբոյ կուսին զոր եսայիաս վերագոչեաց ձայն բարբառոյ յանապատէ որ պատրաստեաց զեկեղեցի հարսըն մաքուր սուրբ փեսային· աղաչա": Որ բոցեղէն հոյլք քրովբէիցն ոչ իշխէին հայել 'ի փառս աստուածութեանդ· սա հողանիւթեայ գոլով բնութեամբ մեր մըկրտեաց ըզքեզ մարմնով 'ի ջուրսըն յորդանանու· աղաչա": (Օրհնեցէք զամենայն գործ

38002
ԳՐԱԴԱՐԱՆ

տեառն) Ըզտէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Որ աւետաբեր գալըստեան բանին. առաքեցաւ ձայնն յանապատէ. ըզտէր օրհ"։ Որ սըրբութեանց սուրբ կուսածին որդին. 'ի յամլորդւոյն հայցէր մաքրել յորդանանաւ. ըզտէր օրհ"։ Որ զծածկեալ խորհուրդ սուրբ երրորդութեանն. կարապետին յայտնեալ հոգին աղաւնակերպ իջմամբ. ըզտէր օրհ"։

Մեծացուսցէ ։ Դ.Զ

Առաւօտ խաղաղութեան և արուսեակ զըւարթարար. այսօր մարիամ սըրբուհին 'ի փառըս քո քրիստոս ծագեաց մեզ լոյս որդւոյս օրհնաց. անդադար երգով սաքօք ըզքեզ միշտ մեծացուցանեմք ։ Դրախտ աստուածային և արևելք իմանալի. այսօր մարիամ հրաշագեղ ծնեալ 'ի յաննայէ 'ի մայրութիւն քո հրաւիրեալ քրիստոս որդի աստուծոյ. անդա"։ Տապանակ ապրեցուցիչ և տաղաւար սրբահամեան աստուածընկալ. այսօր մարիամ լուսապայծառ միածին ծընունդ յայտնեալ ծնողաց՝ 'ի ծնողութիւն քո կոչեցեալ միածին որդի աստուծոյ. անդադար երգով սաքօք ըզ"։



Ողորմեա ։ Դ.Զ

Երկնաւոր փեսայ անքստուեր լոյս իմանալի. որ 'ի յերկնից իջեր 'ի սէր հարսին քո եկեղեցւոյ. զոր խօսեցաւ քեզ բարեկամն և փեսաւէրըն քո յովհաննէս. սուրբն մաղթանօք ողորմեա ։ Քառակերպեան անհաս և անտես 'ի սերովբէից. սըրբութեանց սուրբ և տէր բոլորից. խոնարհեցար 'ի յորդանան. հայցելով 'ի ծառայէն մաքրութիւն ջրոյ 'ի լուանալ ըզմեղս ադամայ. սուրբն մաղ"։ Որ յամլորդւոյն վըկայեցար գառն աստուծոյ բարձող մեղաց. զոր դերագոյն արդարոց ծանուցեր մեծ 'ի ծնընդս կանանց և հրաշ օրինաց. որ և 'ի դըժոխս ըզփըրկական գալուստըն քո քարոզեաց. սուրբն մաղթա"։

Տէրերկնից ։ Դ.Զ

Այսօր ցընծան հրեշտակք 'ի յերկինս. յիշատակաւ հողանիւթ հրեշտակին. որք համագասեալք ձայնիւն բարբառոյ. երգեն զօրհնութիւնս հօր 'ի բարձունս ։ Այսօր ցընծան հոգիք արդարոց. նահապետաց և մարգարէից. ձայնակից լինել մեծին 'ի ծնունդըս կանանց. երգեն զօրհնութիւնս որդւոյն միածնի ։ Այսօր ցընծան դասք առաքելոցն .

տօնախմբելով գլխատակ մեծի մկրտչին · որ առաքելոցն է սկիզբն և մարգարէից լրումն · ընդ նոսին և մեք բղխեցելոյն 'ի Հօրէ երգեմք զփառս 'ի բարձունս ։

Թագաւոր յաւիտեան ։

Թագաւոր յաւիտեան ։

Այսօր դասք հրեշտակաց ուրախանան ընդ ծննդութեան սրբոյն (այս անուանն)։ Քանզի գոչէ եկեղեցի քո Քրիստոս ըզյաղթանակ մարտ հեղման արեան սորա 'ի վերայ մեծի անուան քո տէր ։

Բազում համարձակութիւն է սորա առաջի աստուծոյ 'ի ձեռըն հեղման սուրբ արեանն իւրոյ ։ Քանզի յօժարութեամբ մատնեաց զանձն իւր չարաչար և՛ դառըն տանջանաց վասն մեծի անուանն տեառն ։ Քանզի արհամարհելով անարգեաց զանցաւոր ըզկեանս աշխարհիս և փափագեաց յաւիտենական կենացն · և միշտ և հանապազ ուրախանայ ընդ տեառըն իւրոյ , յանըսպառ ուրախութեանն ։ . . . . . . . . . . . .

Փառք Հօրն էականի որդւոյն միածնի և ազատիչ սուրբ հոգւոյն վայելէ ։ Փառք պատիւ և իշխանութիւն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · ամէն ։



Եւ յորժամ շարժին երկինք և երկիր 'ի յահէ փառաց բանին տեառըն աստուծոյ ։ Ցայնժամ նըստուցանէ ընդ աջմէ իւրմէ ըզմկրտիչն անուան իւրոյ 'ի յուսեղէն խորանսըն զուգաւորելով ·

Մանկունք ։ Դ․կ

Մարգարէից գերագոյն և մեծ 'ի ծնընդըս կանանց · որ ըզտնօրէնութիւն աստուածորդւոյն 'ի յորդանդի ծանեար հոգւովն · աղաչեա զաստուած վասն մանկանց եկեղեցւոյ ։ Յորովայնէ յորովայն երկրպագող քրիստոսի · որ ըզհուրն աստուած մերով բնութեամբ մկըրտեցեր 'ի յորդանան · աղա″ կատարումն օրհնաց և նախասկիզբըն շնորհաց · որ հոգւոյն 'ի գըժոխս քարոզեցեր ըզփրկութիւն գալըստեամբըն քրիստոսի · աղա″ ։

Ճաշու ։ Դ․կ (սիր․)

Այսօր ցընծայ եկեղեցի 'ի հոգևոր հարսանիս · զոր պատրաստեաց ձայն բարբառոյ հարսըն մաքուր փեսային ։ Այսօր փեսաւէրն և բարեկամն ընդ երկնաւոր փեսային · միաւորեաց զեկեղեցի փոխադրելով 'ի յերկինս ։ Այսօր շնորհեցաւ մեզ գեղ կենաց նըշխարք տօնին ոսկերաց · 'ի ձեռըն սուրբ լուսաւորչին հայաստանեայց աշխարհի ։

Համբարձի Տեառնընդառաջի ։ Ա.Ձ

Մարմնացեալդ ՚ի կուսէն նախայաւիտեան բանդ. այսօր ՚ի տաճարն եկիր կատարել զօրէնս. վասն փրկութեան հեթանոսաց ։ Որ յանարուեստ աթոռ նըստիս բարեբանեալդ ՚ի հրեշտակաց. այսօր ՚ի սիմէօնէ բառնալոյ ՚ի գիրկս. որ ընծայեսցես ըզմեզ ՚ի կեանսըդ յաւիտենից ։ Որ արձակիչդ ես կապելոց պարգեւատու ամենեցուն. այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա և զիս ըզբազմամեղս. ՚ի կապանաց մահու ՚ի կեանսըդ յաւիտենից ։

Օրհնութիւն ։ Գ.Ձ

Այսօր անըսկզբնական ծընունդ հայրական ծոցոյ բանն եկաւորեալ ՚ի տաճարն ընծայէ զարարածըս հօր ՚ի յերկինս ։ Այսօր բարձեալ եղև ՚ի գիրկըս ծերունւոյն. որ բանիւ զարարածըս բարձեալ ունի օրհնաբանեսցուք ։ Այսօր և մեք հաւատացեալքս ընդ ծերունւոյն սիմէօնի ըզբանն համագոյ հօր և սուրբ հոգւոյն օրհ" ։ Այսօր ՚ի տաճարն եկեալ կենարարն և ՚ի գիրկսըն սիմէօնի գըգուեցաւ. զոր խընդութեամբ ընկալաւ երուսաղէմ ։ Այսօր երկիրս երկինք անուանեցաւ զի տէրըն տերանց իջեալ յերկնից ՚ի յերկիր. և ընծայիլ յանձն առնու ՚ի գործոց ձեռաց իւրոց ։ Այսօր հե-



թանոսաց լոյս ծագեցաւ քրիստոս աստուած. և փառք իւրոյ ժողովրդեանն իսրայէլի ։

Դ.Կ

Այսօր ՚ի տաճարն եկիր փրկիչ. և ծերունւոյն ՚ի գիրկս ընկալեալ ասէր. արդ արձակես ըզծառայս քո տէր ։ Այսօր աշխարհի ցուցար լոյս. և փրկութիւն տիեզերաց քրիստոս աստուած որ մարդասէրդ ես կեցո ըզմեզ ։ Այսօր իմանալի արեգակն. որ ծագեցար տիեզերաց քրիստոս աստուած. որ մարդա" ։

Իսկըզբանէ բանն աստուած մարմնացաւ ՚ի կուսէն. այսօր գըգուեցաւ ՚ի տաճարին ։ Խայտայր ալեօքըն ծերունին աստուածորդւոյս ՚ի գիրկս իւր. և օրհնէր զաստուած ասելով. Արդ արձակես ըզծառայս քո տէր ըստ բանի քում ՚ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ ըզփրկողդ աստուած ։

Ալէլու ։

Ալէլու" ։ Օրհնեա՛լ եկեալ յանուն տեառն. օրհնեալ որ գալոց ես ։ Տէ՛ր աստուած մեր երևեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ ։

Ալէլու" ։ Տէ՛ր ՚ի տաճար սուրբ իւրում. տէր յերկինս յաթոռ իւրում ։ Աչք նորա ՚ի տնանկս հային. արտևանունք նորա քննեն զորդիս մարդկան ։ Փառք և" ։ Այժմ և" ։ Ալէլու" ։

Հարց ։ Դ.Զ

Օրհնեմք բղխեղ որ առաքեցար 'ի հօրէ անճառելի բանդ աստուած յանձն առեր մարմնանալ 'ի սրբոյ կուսէն․ աստուած հարցըն մերոց։ Այսօր եկիր 'ի տաճարն անհասանելի փրկիչ և 'ի գիրկսըն սիմէօնի գրգուեցար․ աստը"։ Ուստի և սիմէօն հոգևոր հընչմամբն աղաղակէր․ արդ արձակես ըզծառայս քո տէր ըստ բանի քում 'ի խաղաղութիւն․ աս"։ (Օրհնեցէք ամենայն գործք տեառն) Ըզտէր օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեան։ (Տիւք և գիշերք ըզտէր) Օրհնեցէք Զծընեալըն յամենասուրբ յորովայնէ յանարատ 'ի կուսէն․ օրհ"։ (Իսրայէլ ըզտէր) Զեկեալըն այսօր 'ի տաճարն զընկալեալըն 'ի գիրկսըն սիմէօնի․ օրհնե"։

Մեծացուսցէ ։ Դ.Զ

Աթոռ քրովբէական երևեալ այսօր սիմէօն․ զաստուածորդին 'ի գիրկս իւր բարձեալ մարմնով․ զոր զօրք երկնից 'ի բարձունըս հանապազ մեծացուցանեն։ Հոգւովըն գուշէր ցընծայր ալեօքըն ծերունին ասելով. սա է թագաանմահ․ զոր"։ Արտասուելով աղերսէր արձակել զիս 'ի խաղաղութիւն․ անարատ ծնողի քո բարեխօսութեամբ․ զոր"։



Ողորմեա ։ Դ.Զ

Որոյ առեալ հրաման 'ի սուրբ հոգւոյն ոչ տեսանել ըզմահ մինչև տեսցէ զօծեալդ․ տէր աղօթիւք ծերոյն ողորմեա։ Որոյ ընկալեալ 'ի գիրկս իւր զօծեալդ և հայցէր 'ի կենացդ ըզմահ և արձակիլ 'ի խաղաղութիւն․ տէր աղօթիւք ծերոյն ողորմեա։ Ցորոյ այսօր 'ի գիրկսըն գրգուեցար և կատարեցեր ըզփափագումն ընծայելոյ քո 'ի տաճարին․ տէր ողո"։

Տէրերկնից ։ Դ.Զ

Զոր փառաբանեն 'ի բարձունս իմանալի զօրութիւնքն․ այսօր 'ի տաճարն եկիր յընծայումըն քրիստոս․ որ ընծայես զարարածըս բարձրելոյ քում հօր։ Ի գիրկըս մարմնով բարձեալ եղեր 'ի ծերունւոյն․ որ բանիւ զարարածըս բարձեալ ունիս քրիստոս․ որ վասըն մեր մարմնացար 'ի սըրբոյ կուսէն։ Վասն որոյ և մեք ընդ սիմէօնի գոչեսցուք․ որ 'ի հօրէ լուսոյ լոյս ծագեցար մեզ և կեանք․ փառք գալըստեանդ քո տէր։

Ծաղա ։ Դ.Կ

Անըսկիզբըն բանըն յանըսկըզբընական 'ի հօրէ և սկըզբնաւորեալ 'ի կուսէն մարմնոյ զգեցմամբ․ բովանդակելով յորովայնի և ընդ հօր

գոլով. և սահմանեալ ժամանակաւ ծնեալ լինի աստուած և մարդ։ Մտեալ ընդ օրինօք անհնութականըն հողանիւթ գոլով. զի զպհոգածնեալքս հօրն ընծայեսցէ աստուածորդին որ 'ի ծոց հօր. տղայ քառասնօրեայ բառնի 'ի գիրկս ծերունւոյն. և յայտնապէս ծանուցանի աստուած։ (փառք. Այժմ և.) Վասն որոյ և սիմէօն ցընծայր հոգւովն աղաղակէր 'ի տաճարին. արդ արձակես զծառայս քո տէր ըստ բանի քում 'ի խաղաղութիւն. զի ընդ հանուր տեսի ըզփըրկօղդ աստուած և մարդ։

Տաղ։

Քրիստոս փառաց թագաւորն, այսօր եկեալ յընծայումն. կատարելով նա զօրէնսն, քառասնօրեայ գալըստեամբն։

Զոր մարգարէն եսայի, յառաջագոյն գուշակեաց. յերուսաղէմ քաղաքի, սիմէօնի ծերունւոյն։

Աստուածային հրամանաւն, կայր ծերացեալ 'ի տաճարն. ոչ տեսանէր նա բըմահ, մինչև տեսցէ նա զօծեալն։

Բարբառ եղև գալըստեան, և տհագին ոլոտման. տաճարապետըն քրիստոս, որ յընծայումն էր եկեալ։

Ի գիրկս առեալ ծերունւոյն, զաստուածորդին և ասէր. սա մեծագոյն աւետիս, քրիստոնէից ամենից։

———



Շարական Ընծայման ։ Գկ

Այսօր բանն 'ի հօրէ անմեկնելի և անճառելի խորհըրդով. 'ի ձեռն կուսական որովայնի տնօրէնաբար յերկրի երևեալ։ Մանուկ անժամանակ 'ի հօրէ անսերմն 'ի կուսէ. 'ի գիրկս մօր ընդունեցաւ այսօր արարիչն երկնի և երկրի։ Որ մաքրեացն ըզյորդանան և լըւաց ըզմեղս աշխարհի. զոր օրհնեմք անդադար աւրաբանք ամենայն զէակիցըն հօր և հոգւոյն։

———

Շարական Տեառնընդառաջի ։ Բկ

Ի գալըստեան տեառըն դրունք երկնից բացին. և ճառագայթիւք անճառ լուսով սուրբ խաչն երևի։ Յերեսաց տեառըն լերինք հալին. և 'ի յահէ փառաց նորա չարժին զօրութիւնք։ Աւետեօք տեառըն մեռեալք յառնեն. և սուրբք ամենայն անճառ փառօք զարդարին։

———

Համբարձմէ Է. աւուր Հոգեգալստեան ։ Դձ

Հոգին սուրբ էր միշտ և է և եղիցի. ոչ ըսկըսեալ և ոչ դադարեալ. այլ միշտ ընդ հօր

և ընդ որդւոյ կարգեալ և թըւեալ. և միշտ օրհնեալ է 'ի յաւիտեան։ Նր միշտ ընդունօղ սըրբոց. և լըցուցիչ աստուածացուցիչ, և միշտ ընդ հօր և ընդ որդւոյ կարգեալ և թըւեալ. և միշտ օրհ"։ Մըշտաշարժ ինքնաշարժ ինքնիշխան ինքնազօր ամենազօր, վասըն զի չընչէ ուր կամի որքան ախորժէ յորժամ և որքան. և միշտ օրհ"։ Ինքըն յինքեան նոյն միշտ ընդ որըս դասեցաւ աներեւոյթ անժամանակ. անայլայլելի անփոփոխելի. և միշտ օրհ"։ Առանց որքանութեան առանց որպիսութեան. առանց տեսութեան անչօշափելի. և միշտ օրհ"։ Տէր առաքիչ որոշիչ տաճար առնէ ինքըն ինքեան. առաջնորդէ զօրացուցանէ որպէս և կամի բաժանէ ըզշնորհս. և միշտ օրհ"։ Կեանք և կենդանարար լոյս և գոյացուցիչ լուսոյ. ինքըն բարի աղբիւր բարութեան հոգի ուղիղ առաջնորդական. և միշտ օրհ"։ Հոգի զօրութեան և երկիւղի որով հայր ճանաչի և որդի փառաւորի. որոց մի կարգ պատիւ մի երկրպագութիւն կատարելութիւն սըրբութեան. և միշտ օրհ"։

———



Շարական Ս. Իսահակայ Պարթեւի Հայոց Հայրապետին. Դկ (Մնկ)

Որ յարմատոյ հարցըն սըրբոց մեզ գաւազան բըղխեցեր. ըզիսահակ սուրբ հայրապետ հովուել ըզհօտ քո քրիստոս։ Որ ըզխաւարին անգիտութեան հայաստանեայցըս լուծեր. զիմաստութեան ծագեալ ըզլոյս սովաւ որդւոց թորգոմայ։ Որ ըզհանդերձեալ խորհուրդ քո տէր տեսլեամբ սըրբոյն ծանուցեր. յիշատակի սորա ընկալ ըզտօնողացս աղաչանս։

———

Ճաշու շարական սըրբոց Ղեւոնդեանց. Դկ

Արեգակն արդարութեան 'ի հայաստան ծագեալ. պայծառացուցեր սուրբ զեկեղեցի հեզմամբ արեան սըրբոցն. մաղթանօք սոցա խընայեա 'ի մեզ պարգեւատու բարեաց. և ողորմեա քո արարածոց։ Պանծալի սուրբ զաւակօք հովիւքըն զըւարթունք. հրով հոգւոյն չիջուցին ըզբոցն ըզկըրակապաշտ պարսիցն. մաղթանօք սոցա խընայեա 'ի մեզ պարգեւա"։ (Փառք". Այժմ և".) Պարթեւական տեսանողին յառաջագոյն ազդեցութեամբ զհաւատոյ որդիս սըրբոյն գրիգորի պըսա-սակազարդ տեսեալ. մաղթա"։

Շարական սրբոց Վարդանանց ։ Դկ

Նո՜րահրաշ պսակաւոր և զօրագլուխ առաքինեա՛ց, վառեցար զինու հոգւոյն արիաբար ընդդէմ մահու. վարդա՞ն քաջ նահատակ որ վանեցեր ըզթըշնամի՛ն, վարդագոյն արեամբըդ քով պսակեցեր զեկեղեցի՛. Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմի՛ն, խոհական իմաստութեամբ խոհեմացեալ անճառապէս. խորէ՞ն խորհրդական և ծանուցեալ անուն բարի՛, խաչելոյն վերայ եղեալ հեզմամբ արեան պսակեցաւ։ Բենիական լուսով լցեալ արիացեալըն քաջն արտա՛կ, թաթաւեալ 'ի կարմրութիւն բոսորային բղխեալ աղբերն. զփըրկա՞նն ըմպեալ զբաժակ և մեկնորտեալ արեամբն իւրո՛վ, դասակցեալ ընդ անմարմնոցն երրորդութեանն երգել ըզփառս։ Սըրբափայլ զգեստուք պճնեալ 'ի յերկնաւոր հանդիսադրէն, երրորդութեամբըն զօրացեալ վանեալ զամբոխս բանսարկուին. հըմայեա՞կ հօր ընծայեալ որդւոյ գոլով չարչարակից, հոգւովն յաղթեալ պատերազմին և չարաչէր թագաւորին։ Էական բարւոյն գիտմամբ ընդդէմ մեղացըն վառեցա՛ւ, տարագնաց եղեւք յերկինըս պարակցեալ ընդ անմարմնոցն. տաճա՞տ զարմանալի տաճար եղեալ երրորդութեա՛նն, տէրունեան սուրբ խորհրդոյն տուն և տեղի արժանացեալ։ Սատացեալ ըզհա-



ւատոյ վահան յուսոյն զրահիւք ծածկեա՛լ, զփըրկականըն սաղաւարտ 'ի գլուխ եդեալ զնըշան խաչին. վահա՞ն վեհ երևեալն որ մանկութեամբ նահատակեա՛լ, խաչելոյն վերայ եղեալ պըսակեցաւ արեամբն իւրով. Ի հոտ անոյշ ողջակիզեալ մատուցանէ՛ր զինքըն նուէ՛ր, բանաւոր պատարագ ընծայելով հօր 'ի յերկինս. արսէ՞նըն ցանկալի արդարութեամբըն ճոխացեալ, իմաստութեամբ պայծառացեա՛լ յեօթնարփեան շնորհաց հոգւոյն։ Երկոքումբք հարազատօք ընտրելագոյն նահատակո՛ք, յառաջեալ յամենեցունց գլուխ և աւարտ մարտիրոսաց. նախշաւի՞ղ գոլով բարեաց յառաջադէմըն գարեգի՛ն, ընկալեալ ըզբրաբիոնըն յաղթանակ նահատակացն։ Ռամկական խումբ հազարաց և երեսնից թիւ ընդ վեցից, որք ընդ նոսին նահատակեալք արիաբար պատերազմաւ. և հեղի՞ն զարիւնս իւրեանց 'ի նորոգումն եկեղեցւո՛յ, ընդ նոսին պըսակելով 'ի յերկնաւոր հանդիսադրէն։ Գոհութեամբ փառաւորութիւն երրորդութեանըդ նըւագե՛մք, բազմութեամբ պըսակելոցս ըզմեօք մածեալ առաքինեացս. եկեղեցի՞ք հայաստանեայց պայծառապէս զարդարեցա՛ն, ունելով միշտ բարեխօս ըզճըգնութիւն մարտիրոսացս։

Ձայն շարական Արեգակն արդար": Տե՛ս էջ 29 ։

---

Ճաշու Բանն Բարեկենդանէ: Դկ (Տէրթագա.)

Բանն որ ընդ հօր յէութեան և համագոյ սուրբ հոգւոյն. ըզպատկերն իւրական խառնեալ ընդ հողանիւթ բընութեանս. զոր զարդարեալ փառօք եդ 'ի դրախտին փափկութեան: Ցորում ցընծայր զուարճացեալ անտըխրական խընդութեամբ. քանզի զաստուած տեսանէր միշտ խոնարհեալ 'ի դրախտին. յորմէ զլուսոյն ճառագայթ ըմպաւորէր 'ի յինքեան: Վասն որոյ աղաչեա մայր աստուծոյ մարիամ. զմիածին քո զորդին զի շնորհեսցէ ըստ աւազակին. ժառանգել վերըստին մեզ ըզդրախտին վայելչութիւն:

Սաղմոս:

Աղաղակեցէ՛ք առ տէր ամենայն երկիր. ծառայեցէք տեառն ուրախութեա՛մբ:
Մըտէ՛ք առաջի նորա ցընծութեամբ. ծանիրուք զի նա է տէր աստուած մե՛ր:
Նա՛ արար ըզմեզ և ոչ մեք էաք. մեք ժողովուրդք և խաշն արօտի նորա՛:
Մըտէ՛ք ընդ դրունս նորա խոստովանութեամբ և օրհնութեամբ 'ի յարկըս նորա՛:
Խոստովան եղերուք տեառն. և օրհնեցէք զանուն նորա՛:
Քա՛ղցր է տէր՝ յաւիտեան է ողորմութիւն նորա՛. ազգէ մինչև յազգ է ճըշմարտութիւն նորա՛:





Երգ: Դկ

Յօրհնելից մինչ 'ի մուտս 'ի հիւսիսոյ և 'ի հարաւոյ. ամենայն ազգք և ազինք յօրհնութիւն նոր օրհնեցէք զարարիչն արարածոց. որ ծագեաց ըզլոյս արեգականն այսօր յաշխարհս:
Երկրպագեցէք արքայաց փառաւորանօք ամենասուրբ երրորդութեանն. յառաւօտս լուսոյ զառաւօտ խաղաղութեան քրիստոս գովեցէք ընդ հօր և հոգւոյն. որ ծագեաց ըզլոյս գիտութեանն իւրոյ 'ի մեզ:

Յորդորակ: Դ.Զ

Յարևելից յարևմուտս մանկունք սիօնի. օրհնեցէք միշտ անդադար զծագօղըն լուսոյ:
Երկրպագեցէք արդարոց և փառաբանիչք. բարեբանեցէք որ ետ զիմաստըս լուսոյ:

Երգ: Դկ

Ճըգնաւորք աստուծոյ և ժառանգորդք երկնից արքայութեանն. որք փոխանակեալք զանցաւորս առիք զանանցըն բարութիւնն. բարեխօսեցէք առ տէր վասըն մանկանց եկեղեցւոյ:

Նահատակք պանծալիք և սիրեցեալք 'ի յերկնաւոր հօրէն. որք մեկնեցայք ընդ քրիստոսի արեամբ ձերով 'ի մահ խաչին. բարեխօսեցէք առ տէր վասն մանկանց ե"։

Մարտիրոսք ցանկալիք և օծեալք հոգւոյն ճշմարտութեան. որք յաղթեցիք հոգւով կարեաց և ցանկութեան. բարե"։

Գովելիք աշխարհի և բաղձալիք վերնոցն պետութեանց. որք երանութեան մասին հասիք քան զամենայն որդիս մարդկան. բարեխօ"։

Կամաւոր պատարագք մանկունք տիօք և կատարեալք իմաստութեամբ. որք փոխանակ կաթին արբիք զգինին զմայլեցուցիչ. բարեխօ"։

Յորդորակ։ Դ.Ձ

Ծագնաւորք ճշմարիտ վկայք քրիստոսի. բարեխօսեցէք առ տէր վասն անձանց մերոց։

Նահատակք կենդանիք սիրոյ քրիստոսի. որք չարչարեցայք մարմնով վասն անուան նորին տեառն։

Մարտիրոսք ցանկալիք մարդկան ըղձալիք. հայցեցէք 'ի սուրբ հոգւոյն տալ մեզ ըզբարիս։



Ճաշու շարական Բ. Կիւրակէի Աղուհացից։ Դ.Ձ (Տէրթագ.)

Որ զօրէնս սրբութեան պահոց նախ 'ի դրախտին աւանդեցեր. զոր ոչ պահելով նախաստեղծիցն ճաշակմամբ պտղոյն ճաշակեցին ըզդառնութիւն մեղաց և մահու. վասն որոյ շնորհեա մեզ տէր ճաշակել ըզքաղցրութիւն քո պատուիրանաց։ Որ զանազան վիրօք մեղաց հարաք յօդիս 'ի թշնամւոյն. և 'ի բազմապատիկ հիւանդութեանս կարօտացաք մարդասիրիդ բառնալոյ ըզցաւս մեր. վասն որոյ բժշկեա ըզմեզ քրիստոս որպէս մարդասէր։ (փառք". Այժմ".)

Որ եկիր 'ի փրկութիւն մարդկան ծնընդեամբ կուսին մարիամու. և կենդանարար քո յարութեամբդ հրաւիրեցեր ըզմահացեալսն 'ի յարութիւն անմահութեան. վասն որոյ աղաչանօք մօր քո կեցո զմեզ փրկիչ։

Ճաշու շարական Գ. Կիւրակէի Աղուհացից։ Գ.Կ (Տէրթագ.)

Օրհնեմք ըզքեզ անսկիզբըն հայր որդւոյդ միածնի. զոր առաքեցեր 'ի դարձուցումըն մոլորեալ ոչխարին. դարձո և զմեզ 'ի մեղաց որդւոյ քո չարչարանօք։ Գովեմք ըզքեզ բան և լոյս որ զարքական քո պատկեր լուսով ծրագրի քո դրոշմեալ վերականգնեցեր. կանդ-

նեա զանկեալքս մեղօք քոյին սուրբ չարչարանօքդ։ Բարեբանեմք զփառակիցդ Հօր զՀոգիդ ճշմարիտ. ո՜ր նորոգեցեր ըզՀնացեալքս մեղօք Հընոյն ադամայ. Նորոգեա և զմեզ 'ի մեղաց նորոգութեամբ քո շնորհաց։ (Փառք. Այժմ և.) Ուրախացիր բարձրելոյն Հովանացեալ զօրութեամբ. և բնակարան սուրբ Հոգւոյն որով ծընար զբանն աստուած. բարեխօսեա վասն մեր աստուածածին մարիամ։

Ճաշու շարական Դ. Կիրակէի Աշխարհացեցն: ԳՁ (Տէրթադ.)

Որ արարեր զօրութեամբ զիմանալեացն աշխարհ վերին. և 'ի նմա Հաստատեցեր տընտես ըզպետս Հրեշտակացն. օրՀնեմք զանՀասանելի զօրութիւնդ։ Որ տիրապէս մեծատունդ ստեղծեր երկրորդ աշխարհ զգալի. և 'ի դրախտն որ յադենի տընտես եդեալ զմարդն առաջին. օրՀ. Որ շինեցեր բարձրագոյն զեկեղեցի քո խորՀրդեամբ. և 'ի սմա կարգեալ տընտես զքարոզս բանին ճշմարտութեան. օրՀ. (Փառք. Այժմ և.) Անտանելւոյն տաղաւար բարձող էիցըս բարձողին. որ ծընար զաստուած մարմնով զանմարմնաբար ծընունդըն Հօր. բարեխօսեա վասն մեր աստուածածին մարիամ։

———



Ճաշու շարական Ս. Քառասնից մանկանցն: ԴՁ (սիր.)

Այսօր մեծապէս պանծացեալ ցընծայ սիոն ընդ յաղթող ճըգնութեան սըրբոց քառասնիցն. որք Հաւատով Հանդիսացան. և միաձայնեալք ամենին օրՀնեալ ես ամենազօր թագաւոր անմաՀ։ Այսօր կացեալք առաջի բըռնաւորին յատենին 'ի սեբաստիա. և ըզդառնութիւն տանջանացն Հաւատով քաջըրացուցին. և նոցա միաձայն։ Այսօր ամբարձեալք զաչս իւրեանց յերկինս կոչելով ըզքեզ տէր յօգնութիւն. գեր 'ի վերոյ տեսեալ բոլորեալ պըսակս յանմատոյց լուսոյն. և նոցա։ Այսօր բացեալ եղեն դրունք վերին երուսաղէմի. կոչելով սուրբ ըզքառասունսն յանճառ 'ի փառս և յանպատում 'ի կեանս. և նոցա։ (Փառք. Այժմ.) Այսօր սեբաստիա եղև երկրորդ յորդանան իջմամբ որդւոյն աստուծոյ. և փայլէին անճառ պըսակըն 'ի վերայ սըրբոց քառասնիցն. և նոցա միաձայն։

———

Ճաշու շարական Ե. Կիրակէի Աշխարհացեցն: ԲԿ (Տէրթադ.)

Որ պատուիրան ճըշմարտութեան աւանդեցեր եկեղեցւոյ քո քրիստոս. անսաՀման

ժամանակս և աղօթել միշտ առ աստուած
հոգւով է մէջ մօք: Որ ընդ րան քո օրի-
նաց հաստատեցեր գործով մեզ օրինակ.
հանելով ընդդիմերն ՚ի գլուխ յաղօթս աստու-
ծոյ բնութեամբ մերով անօրինաբար որում
կերկնի ծառայուր ամենայն: վասն որոյ և
մեք պաղատեսցուք առ քեզ քրիստոս. շնոր-
հեա մեզ յամենայն ժամ լինել քեզ յանդի-
մանն մաքուր աղօթիւք ըստ անմարմնոցն
որ յերկինս են: (Փառք. Այժմ և.) Աղաչա-
նօք առ աստուածածնին անապական քո մայ
ծընողին. զիմանալի աչքս սրտից մերոց
բացցես ողորմութեամբ հայիլ ՚ի լոյս քո
քրիստոս:

---

Օրհնութիւն Ս. Լուսաւորչին մուտն ՚ի վիրապն: Գ.կ

Այսօր զուարճացեալ ցնծայ եկեղեցի գրախտ
աստուածատունկ ծաղկեալ. յորմէ տըւաւ մեզ
տունկն անմահութեան տէր գրիգորիոս. և
պտղովն իւրով երկնից ընդ որ եգերս ամենայն:
Բարունակ ողկուզաբեր ճշմարիտ որթոյն մը-
շակեալ հայրական աստուածային աջոյն. յոր-
մէ բղխեաց բաժակն ուրախարար ըմբռնեցե-
լոյ ազինս. որով արբեալ ըմպեցաք յուրա-
խութիւն հոգևոր: Գարնանաբեր հրնչումն



հարաւային հողմոյն ճառագայթեալ հրով աստ-
ուածային հոգւոյն. որով հալեցաւ սառըն կռա-
պաշտութեան հիւսիսային ազանց. և եղեն
ծաղկեալք աստուածային գիտութեամբն:
Դրախտ նորազուարճ տընկեալ յաշխարհիս հա-
յոց բազմաջան քրտամբք տէր գրիգորիոս.
արբեալ ՚ի վտակաց հոսման քարոզի ճշմարիտ
բանին. ծաղկաւէտ լցեալ հրաշագեղ տընկօք:
Երկնային լոյս ծագեալ ՚ի յերկրի ցուցար պայ-
ծառացեալ փայլմամբ ՚ի յարփւոյն կենաց. ո-
րով հերքեցաւ խաւար թանձրամած հայաս-
տանեայց ազգի. և տեսին ընդ լոյս շնորհաց սուրբ
հոգւոյն: Զօրաց հրեղինաց անմարմնական դա-
սուց պարակցեալ ցընծան ընդ հողանիւթ
բնութեանս. որ ընծայեաց տեառն աստուծոյ
զտէր գրիգորիոս. որով նըւիրին ՚ի փառս ուղ-
ղափառ հաւատոյ մանկունք: (Այլ տես ՚ի Շարականոցն)

. . . . . . . . . . . . . . .

Հարց: Գ.կ

Որ ՚ի հօրէ առաքեալ արեգական արդար.
ծագեցեր ընդ տիեզերս ընդ լոյս քո առաքե-
լովքն. ընդ որ բարբառեալք աստուած
հայրըն մերոյ: Որ փոխանակ առաքելոցն
առաքեալ և քահանայ. առաքեցեր հայաս-

տանեայց ըզսուրբըն գրիգոր · ըզքե՜զ": Ո՞ր ըղխաւարն անգիտութեան հիւսխականացս · հալածեցեր լուսափայլ բանիւ սըրբոյն գրիգորի · ըզքե՜զ": (Օրհնեցէ՛ք ամենայն գործք տեառն) Ըզտէ՜ր ընդ լուսաւորչին լուսաւորեալք նովաւ բարձր արարէք ըզնոյն անըստուե՛ր: Ա՜յսօր ժողովուրդք հայաստանեայց աշակերտեալք ճըշմարտութեանն 'ի ձեռըն սըրբոյն գրիգորի՜. օրհնեցէ՜ք ըզնոյն անըսկիզբն · բարձր արարէք ըզնա՛ յաւիտեա՛ն: Ա՜յսօր նորածնեալք աւազանաւն լուսաւորեալք իմաստութեամբ 'ի ձեռըն սուրբ լուսաւորչի՜ն · գովեցէ՜ք ըզնոյն 'ի հօրէ · բարձր ա": Ա՜յսօր երկնաւոր պատարագին կատարօղք քահանայութեան 'ի ձեռըն սուրբ քահանայապետին · բա՛րեբանեցէ՜ք

զբաշխօղըն շնորհաց · բարձր ա":

Մեծացուսցէ : Դկ

Նա՛հապետա՜ցն աբրահամու խաչակայ և յակոբայ, պարգևեցար 'ի յաստուծոյ կոյս մարիամ դուստր նոյի՛ն · երանեն ազգ և ազինք այսօր ըզծնեալդ 'ի յաննայէ: Աղախի՜ն և մայր կենաց աջոյն ծընող հօր միածնին, որ առ 'ի քէն մարմնով ընկէց զամբարտաւանըն յաթոռո՛յ · երա": Ո՛ր բարձրացո՜յց զանկեալ բնու-



թիւնս 'ի քէն ծնընդեամբ որդին յերկինս, ըզկործանեալըն ելից հացիւ և զմեծատունն ելոյծ

ունա՛յն · երա":

Ողորմեա : Դկ

Ո՛ր կոչեցե՜ր ըզհեռացեալըն 'ի հարսանիս քո միածնին ըմպել զբաժակն իմաստութեան 'ի ձեռըն սըրբոյն գրիգորի · բարեխօսութեամբ սորա ողորմեա մեզ աստուա՛ծ: Ո՛ր գերագո՜յն քան ըզբնութիւն չարչարանօք քո ընտրելոյն դարձուցեր ըզմոլորեալըն 'ի գիտութիւն ճըշմարտութեա՛ն · բա": Ո՛ր 'ի վիրա՜պն անդընդային ջաղխեր նովաւ զգլուխ վիշապին · 'ի գբի ներքնումն իջմամբ նորին բարձրացուցեր

զմեզ 'ի յերկի՛նս · բարե":

Տէրերկնից : Դկ

Ա՛յսօր զիմանալի լուսոյն ծագո՛ղն 'ի խաւարի նըստելոցս · զգրիգորիոս սուրբ հայրապետն, եկա՛յք վերապատուեսցո՛ւք: Ա՛յսօր զանապական հոգւոյն պարգևա՛ն բաշխօ՛ղ որդւոց թորգոմայ · յորդիս լուսոյ նովաւ ծընեալք, եկ": Ա՛յսօր զաստուածային բանին պատմո՛ղն 'ի հայաստան աշխարհի · աշակերտեալք նըմա մանկո՜ւնք, եկա՛յք": Ա՛յսօր երգէ՛ եկեղեցի որդւո՛վք իւրովք ընդ հրեշտակս · յիշատակի լուսաւորչի՜ն փառք 'ի բարձունս աստուծո՛յ:

Թագաւոր յաւիտեան տէ· ԷՂ 22:

Ճաշու : ԳԿ (սիր.)

Լերինք ամենայն այսօր ցընծացէք ընդ մեծապայծառ փառսըն սեպուհոյ գերաղանց լերինն. քանզի 'ի նմա բնակեցաւ սուրբըն Գրիգորիոս սիւն լուսոյ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ. որով ցնծայ 'ի փառս վերնոյն սիոնի: Որ առաւել խորին խորհրդով խնդայ քան զարարատեանըն բարձըր մասիս. քանզի 'ի նմա հանգեաւ սուրբըն Գրիգորիոս տապանն ապրեցուցիչ 'ի հոսանաց մեղաց Հայաստան ազանց. որով փրկիմըք միշտ 'ի ջուրց հոսանաց: Գեղապանծ լուսով բերկրեալ զուարճանայ լեառըն սեպուհոյ հանգոյն սինայի. յորում եկաց կամարն ամպեղէն սուրբըն Գրիգորիոս գերահրաշ լուսով զարդարեալ նըման մօսէսի. որոյ փայլին երեսք շնորհօք սուրբ հոգւոյն:

. . . . . . . . . . . . . . .

( Եւ տես 'ի շարակնոցին : )

---

Ճաշու շարական Զ. Կիւրակէի Աղուհացից : ԲՁ (Տէրթագ.)

Որ ըզխորհուրդ քո գալըստեանդ յառաջագոյն գուշակեցեր, մարգարէիւքըն իսրայէլի զօրս ընտրեցեր յետ մօսէսի. որք խօսեցան հոգւով սըրբով բազմապատիկ օրինակօք. տո՛ւր մեզ



Ալէլուիա :

Ալէլու": Տէ՛ր աստուած մեր երևեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ մինչև յանկիւնըս սեղանոյ: Աստուա՛ծ իմ ես դու խոստովան եղէց քեզ. աստուած իմ ես դու և բարձր արարից ըզքեզ:

Ալէլու": Լերինք ցընծասցեն առաջի տեառն զի գայ. և գայ նա 'ի դատել զերկիր: Դատէ՛ զաշխարհս արդարութեամբ. և ըզժողովուրդս իւր ուղղութեամբ:

Փա՛ռք և երկըր": Ա՛յժմ և միշտ": Ալէլու":

Ողորմեա : ԲԿ

Ուրախ լեր եկեղեցի սուրբ 'ի գալըստեան սուրբ միածնին. ուրախ լեր և ցընծա հանդերձ ամենայն որդւովք. խընդա յոյժ դուստըր վերին սիոնի. ահա թագաւոր քո գայ նըստեալ յաւանակի նորոյ. արդար և փրկիչ փրկէ և կեցուցանէ: Զըւարճացիր և բերկրեաց ժողովուրդ աստուծոյ. մատո զսաղըս ծաղկեալս հաւատով և ասա. օրհնեալ որ եկիրդ թագաւոր տիեզերաց:

Տէրունեաց : ԲԿ

Զքրիստոս թագաւորըն որ էն 'ի յաթոռ փառաց. տեսաք 'ի յերկրի նըստեալ 'ի նոր յաւանակի: Ընդ առաջ ելեալ արքայի՛ն դասք եբրայեցւոց. ծերքն ու-

տովք ձիթենեաց և տղայքն արմաւենեաց ։ Միաբանական ձայնիւ գոչէին երգնոր · բարեբանելով զանմահ Թագաւորն ։

Ձայն ։ ԴԿ

Անսկիզբն բանն Հօր որ 'ի վերայ քերովբէիցն հանգչի · այսօր 'ի վերայ յաւանակի նորոյ նստեալ · օրհնեալ արքայ եկեալ անյաղթելի Թագաւորն ։ Յառաջ քան զյաւիտեանս որդին որ 'ի վերայ քառակերպիցն բազմի · այսօր 'ի ծերոց և 'ի տղայոց փառաւորեցաւ · օրհն" ։ Եկայք նոր ժողովուրդք ընդ անմարմնոցն զաս բազմութեան · ընդ հնչմամբ երգով քաղցր ձայնիւ փառաւորեսցուք · օրհն" ։

Համբարձի Ծաղկազարդին ։ ԲԿ

Այսօր ընդ հրեշտակեան դասուցն օրհնաբանեն ծերքն ոստովք և տղայքն արմաւենեաւք · ովսաննա օրհնեալ եկեալ 'ի յանուն տեառն ։ Զոր սերոբէքն ծածկաբար ընդունիլ ոչ բաւեն 'ի վերայ յաւանակի նորոյ նստեալ բարեբանեցաւ 'ի տղայոց · ովսա" ։ Այսօր ընդ ծերոց և ընդ տղայոց օրհնաբանութեանն վերերգեմք նորոյ արքային եկեալ յերուսաղէմ · ովսա" ։ Օրհնեալ եկեալ անուամբ տեառն · օրհնեալ որ գալոցդ ես ։



Շարական Ծաղկազարդի երեկոյին ։ ԴՁ

Թագաւոր գոլով քո յաշխարհս մտեր 'ի քաղաքն երուսաղէմ · նստեալ 'ի վերայ հողեղէն նոր յաւանակի · կոչել զհեթանոսս յերկրպագութիւն ։ Ծերքն ոստովք ձիթենեաց և տղայքն ոստովք արմաւենեաց · և երամ երամ դասուքն աղաղակէին · ովսաննա օրհնեալ եկեալ 'ի յանունն տեառն ։ Ցնծացաւ սուրբ սիօն բերկրեցան սուրբ եկեղեցիք · և խընդութեամբ բազմաւ ելին ընդ առաջ · օրհնէին զգալուստ քո փրկիչ յաշխարհ ։

Յորժամ եկն յիսուս յերուսաղէմ 'ի քաղաքն · ընդ առաջ ելին ծերքն ոստովք ձիթենեաց · և զաստուածորդին փառաւորէին ։ Ի լեռնէ ձիթենեաց տարածանէին մանկունքն ըզհանդերձս իւրեանց · և ոստս 'ի ծառոց բերեալ մատուցանէին · աստուածորդւոյն սուրբ Թագաւորին ։ Ոստովք և տերեւեալ ձիթենեաւք երբայեցւոց մանկունքն օրհնէին · ուրախ լեր երուսաղէմ քաղաք · և ցնծա սիօն մայր եկեղեցի ։

Զգալուստ քո քրիստոս այսօր յերուսաղէմ նոր եկեղեցի սուրբ , յաղթական երգով բարեբանեմք · օրհնեալ եկեալ անուամբ տեառն ։ Որ վասն մերոյ փրկութեան յաւանակի

նըստիլ յանձն ա՛ռեր, ընդ մանկունսըն բա-
րեբանեմք. օրհ"։ Թագաւոր ե՛րկնաւոր զե-
կեղեցի քո անշա՛րժ պա՛հեա. և զերկըրպա-
գուս անուանըդ քում պահեա՛ 'ի խաղա-
ղութեա՛ն ։

Ի յարութեա՛ն յաւուր գալըստեան փըրկչին
տարածանէին մանկունքն ըզհա՛նդերձս. և ան-
դադա՛ր ձայնիւ օրհնէին օրհնեալ եկեալ ան-
ուա՛մբ տեա՛ռն ։ Ո՛ստս 'ի ծառո՛ց բերեալ
մատուցանէին աստուածորդւո՛յն առ ճանա-
պարհաւն. և անդա՛"։ Ի ծերո՛ց բըղխեալ օրհ-
նութիւն և 'ի տղայո՛ց փառաբանութիւն. և ան"։

ԲՁ

Շնորհեա մեզ տէ՛ր արթնութիւն ընդ իմաս-
տո՛ւն կուսանացն. և զհոգւոց մերոց լապտերըս
պա՛յծառացո՛ ։ Երկընչիմք 'ի քէն տէ՛ր զար-
հուրեա՛լք 'ի պատասխանւոյն. զամէնն ասելով
եթէ ո՛չ գիտեմ ըզձե՛զ ։ Յորժամ գաս փա-
ռօք հօր դատել ըզտիեզերս ամենայն. շնորհեա
և մեզ տէր կա՛լ 'ի յաջմէ քումմէ ։ Բացցի մեզ
դուռն ողորմութեա՛ն երկնաւո՛ր փեսային. և
մըտցուք 'ի յառագաստ ընդ իմաստո՛ւն կո՛ւ-
սա՛նսն ։ Ժամանեսցուք ընդ առա՛ջ փեսայի՛ն
և մըտցուք 'ի յառագաստ նորա. զի՛ մի՛ մնաս-
ցուք արտաքս որպէս յիմա՛ր կո՛ւսա՛նսն ։



Պայծառասցին լապտերըք հոգւոց մերո՛ց. և
բազմեցուսցես ըզմեզ ընդ հրաւիրեա՛լսն 'ի
կոչումն արքայութեա՛նն ե՛րկնի՛ց ։

ԲԿ

Իմաստո՛ւն կո՛ւսանքըն պատրաստեա՛լ ի՛ւղ
լա՛պտե՛րաց. ելին ընդ ա՛ռա՛ջ երկնաւոր
փե՛սա՛յին վառեա՛լ լա՛պտե՛րօ՛ք ։ Իսկ յի-
մարա՛ց կո՛ւսից ունայնացեա՛լք 'ի՛ յի՛ւղոյ.
անպատրաստ գը՛տա՛ն գալըստեան փե՛սա՛յին
շիջեա՛լ լա՛պտե՛րօ՛ք ։ Վասն որո՛յ և՛ մեք
պատրաստեսցո՛ւք ի՛ւղ հո՛գևո՛ր. զի մըտ-
ցուք 'ի յառա՛գա՛ստ անմահ փե՛սա՛յին վա-
ռեա՛լ լա՛պտե՛րօ՛ք ։

Յո՛յս ի՛մ ես դու տէ՛ր քաւիչ յանցանաց ի-
մոց. մի՛ ա՛նտես առնե՛ր զըղջումն արտաս-
ւաց իմո՛ց. ողորմեա ինձ աստուա՛ծ ։ Առ քե՛զ
ապաւինեցա՛յ որպէս զանառակ որդին. հա՛յր
մե՛ղա՛յ յերկինս և առաջի քո՛. ողոր"։ Փըրկեա՛
զի՛ս աստուա՛ծ 'ի բազում մեղաց իմոց. արա՛
ա՛րժա՛նի՛ քոյին սուրբ արքայութեա՛նդ. ողոր"։
Մե՛ղք իմ բազում են յո՛յժ ծանր են քան
զաւազ ծովու. քանզի քե՛զ միայնոյ մեղա՛յ
ողորմեա ինձ աստուա՛ծ ։ Բա՛ց տէր ըզդուռն
ողորմութեան որ ողբալով կարդամ առ քեզ.
քանզի"։ Հե՛ղ յիս ըզգըթութիւնըդ քո բա-

ղումողորմ և մարդասէր․ քանզի քե՞զ միայ-
նոյ մեղա՛յ ողորմեա ինձ աստուա՛ծ ։

ԲՁ

Թագաւոր փառաց քե՞զ սպասեսցո՛ւք պատ-
րաստեա՞լք արթնութեամբ․ ընդառաջե՛լ ո՛ր
գա՞ս 'ի դատել զերկի՛ր ։ Անաղօտ վառեալ
լապտերօք հաւատոյ ընդ դա՞ս իմաստո՞ւն կու-
սանացըն․ մտանել 'ի յառագաստ ընդ երկ-
նաւո՞ր փեսայի՛ն ։ Փութասցուք կանխեալ
յառա՞ջ քան զձայն աստուածայի՞ն բարբա-
ռոյն․ զի՛ մի՛ մնասցուք արտա՞քս ընդ չիջման
հինգ կուսանա՛ցն ։

ԳԿ

Ողորմութեան քո զգութըն բա՛ց մե՞զ տէր․
և արժանի արա ըզմեզ լուսեղէն յարկա՞ց քոց
ընդ սուրբըս քո՛ ։ Ի պատրաստեալ քո օթե-
վա՛նըս սըրբո՞ց քոց․ ընկա՛լ և ըզմեզ փրկիչ
յորդէգրութիւն 'ի դըպրութեան կենա՛ց ։
Ի նըստիլ քո յատենի՛ դատաւոր ահեղ խնայ-
եա՛ յարարածըս քո․ բարեխօսութեամբ և ա-
ղօթի՞ւք սուրբ ճըգնաւորա՛ցն ։

———



Մանկանց և Համբարձի Մեծի Հինգշաբաթի ։ ԱԿ

Ա՛յսօ՞ր կանգնեցա՛ւ աւազան մըկըրտութեան
'ի թողութիւն մեղաց մերո՛ց ։ Ա՛յսօ՞ր տէրըն
մե՛ր լո՛ւանայր զոտս աշակերտացն և պատ-
ուիրէր զայս առնելո՛վ ։ Մի՛ ոմն 'ի ձէնջ եղ-
բա՛րք մատնելոց է զիս 'ի մահ և որոշի յաշա-
կերտա՛ցդ ։ Զայն լըւեա՞լ պետրոսի՛ ակնարկէր
առ յովհաննէ՞ս հարցանել թէ ով իցէ՛ ։ Բանըն
զոր ասաց յիսո՛ւս տըխրեցոյց զիւր զաշա-
կերտսն և խռովեցան ամենեքեա՛ն ։

Սաղմոս ։

Ողորմեա՛ ինձ աստուած ըստ մեծի ողորմու-
թեան քում․ ըստ բազում գըթութեան քում
քաւեա զանօրէնո՛ւթիւնս իմ ։
Առաւե՛լ լըւա զիս յանօրէնութենէ իմմէ , և 'ի
մեղաց իմոց սուրբ արա զիս ։
Զանօրէնութի՛ւնս իմ ես ինձէն գիտեմ , և մեղք
իմ առաջի իմ են յամե՛նայն ժամ ։
Քե՛զ միայն մեղայ տէր , և չար առաջի քո ա՛-
րարի ։
Որպէ՛ս արդար եղիցիս 'ի բանս քո , և յաղթող
'ի դա՛տել գաս ։
Անօրէնութեա՛մբ յըղացայ և 'ի մեղըս ծընաւ
զի՛ս մայր իմ ։
Դո՛ւ տէր ըզճըշմարտութիւն սիրեցեր , զան-

յայտս և ըղձածկեալս իմաստութեամբ քով
յայտնե՛ցեր ինձ ։
Ցօղեա՛ յիս մըշտկաւ և սուրբ եղէց, լըւա և
քան ըզձիւն սպիտա՛կ եղէց ։
Լըսելի՛ արա ինձ տէր ըզցընծութիւն և զուրախութիւն, և ցընծասցեն ոսկերք իմ տա՛ռապեալք ։
Դարձո՛ զերեսըս քո 'ի մեղաց իմոց, և զամենայն
անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն ։
Սի՛րտ սուրբ հաստատեա յիս աստուած, և հոգի ուղիղ նորոգեա 'ի փորի՛ իմում ։
Մի՛ ընկենուր զիս տէր յերեսաց քոց, և զհոգի
քո սուրբ մի՛ հանե՛ր յինէն ։
Տո՛ւր ինձ ցընծութիւն փըրկութեան քո. և
հոգւով պետութեան քո հաստա՛տեա զիս ։
Ուսուցի՛ց անօրինաց ըզճանապարհըս քո. և
ամբարիշտք առ քե՛զ դարձցին ։
Փըրկեա՛ զիս յարենէ աստուած՝ աստուած
փըրկութեան իմոյ. ցընծասցէ լեզու իմ յարդարո՛ւթեան քում ։
Տէ՛ր եթէ ըզշըրթունս իմ բանաս, բերան իմ
երգեսցէ զօրհնութի՛ւնըս քո ։
Թէ կամեցեա՛լ էիր պատարագըս մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հա՛ճեցար ։
Պատարա՛գ աստուծոյ հոգի խոնարհ. ըզսիրտ
սուրբ և զհոգի խոնարհ՝ աստուած ոչ արհա՛մարհէ ։
Բարի՛ արա տէր կամօք քովք սիօնի, և շինես-



ցի՛ն պարիսպք երուսա՛ղէմի ։
Յայնժա՛մ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան, յորժամ ուխտից պատարագս հանցեն 'ի սեղան քո զըւարակս ։
փա՛ռք հօր և"։ Ա՛յժմ և"։

Երգ ։

Օ՛րհնեմք ըզքե՛զ հայր անըսկիզբն էից էա՛կ
'ի յանգոյից. բարձեր ձեռօք նիւթ 'ի հողոյ
և ստեղծեր մարդ 'ի պատկեր քո. զըլուխըն
ոտից խոնարհեցաւ զի զպատուիրան քո մոռացաւ. դարձեալ ասեմք ը՛ստ անառակին
թէ հայր մեղայ քեզ 'ի յերկին ։
Ե՛րկնաւորա՛ցն անքըննելի եղեր մարդկան տեսանելի. զգեցար պատկեր հողեղինի պատկերըդ հօր անփոխելի. ելեր յերրորդ ժամ 'ի խաչին վասն ադամայ նախաստեղծին. ը՛նդ աւազակի քում խաչակցին արժանացո ըզմեզ
դրախտի՛ն ։
Թա՛գաւո՛ր Թագաւորաց առատաբուղխ հոգի շնորհաց. ժողովելոցն 'ի վերնատանն առաքելոցն երկոտասան. 'ի հրոյ լեզուս երևեցար յոգիս նոցա վերանքստար. լո՛ւր յանուն քո ժողովելոցս էջ և առ մեզ յերրորդ ժամու ։

Սրբասացութիւն ։

(Ձե՛րգը՛ս հո՛գե՛ւո՛րս ։) Ո՛ր 'ի՛ վե՛րայ նըստի՛ս 'ի կա՛ռքս հրա՛նի՛ւթս քա՛ռա՛-կե՛րպեա՛ն՝ նս, ա՛նճառե՛լի բա՛նըդ-

ա՟ստ՟ուա՟ծ։ Այսօր իջեա՟լ 'ի յերկնայնո՟ցն վասըն քո արարածո՟ց, յանձն առեր բաղմիլ ընդ աշակե՟րտսն. և սերովբէ՟քն և քերովբէ՟քն հիացեալ զարմանայի՟ն և պետութիւնք վերին զօրա՟ցն սքանչացեա՟լ աղաղակէին ասե՟լո՟վ. սո՟ւրբ, սո՟ւրբ, սո՟ւրբ, տէր զօրութեա՟նց։

ԳՁ

Բաշխէ զմարմին իւր և զարիւն ը՟նո՟ւր ուխտ անուանեալ և յիշատա՟կ կամաւոր մահուանն.
մերձեցելոցս 'ի նա՟ սրբութեա՟մբ։

Որ կազմեցեր սեղա՟ն խորհրդոյ. և արբուցեր անմահական բաժակէն սրբո՟ց քոց առաքելոցն այսօ՟ր 'ի սուրբ վերնատունն. աղաչեմք փրկիչ ողո՟րմեա՟։

Մաքրեա զմիտս և զխորհուրդս մեր և մեք հաղորդիցո՟ւք սրբութեամբ, ընդ սրբո՟ց քոց առաքելոցն այսօ՟ր 'ի սուրբ վերնատանն.
աղաչեմք փրկիչ ողո՟րմեա՟։

Երգ Ոտնալուայ։

Քարոզ։

Աստուած մե՟ծ և սքանչելագործ զօրութի՛ւն, անեղանելի՛ բնո՛ւթիւն. որ ողորմութեա՟մբ հաճեցար առնել զարարածս ամենայն յոչընչէ.
ա՛ղա՛չե՛մք։ Լուր տէր և ողորմեա՛։



Զրգեցե՟ր յարկս երկնից որպէս խորան 'ի վերայ ջո՛ւրց, մածուցեալ հաստատութեամբ 'ի բնակութիւն անպարագրելի աստուածութեա՛նըդ քո. և զամենա՟յն հրաշակերտս 'ի դովեստ
անուանըդ քում սրբո՛յ. ա՛ղա՛։

Արարե՟ր քեզ սրբասաց զսերովբէսն և զքերովբէ՛սն, զհողեղէն և զհրեղէն աննիւթակա՛ն բնո՛ւթիւնսն. ընդ նոսի՟ն 'ի հողեղէնացս հաճեցար ընդունիլ փառաբանիչս և երկրպագուս ամենազօր տէրութեանըդ քո՛յ. ա՛ղ՛։
Եղեր մա՟րդ ճշմարիտ անճառելի ծագո՛ւմն և ճառագայթ անհասանելի և անիմանա՛լի՛ հօր. և եկի՟ր 'ի փրկութիւն մեզ մարդասէ՛ր. ա՛ղ՛։
Եղեր լրո՟ւմն օրինաց և մարգարէի՛ց եկիր կամաւ 'ի վերնատունըն խո՛րհը՛րդոյ. լըւացե՟ր զոտս աշակերտաց քոց անճառելի խոնարհու-
թեա՛մբ. ա՛ղա՛։

Ընկալ տէ՟ր և այժմ զլուացումնքս զա՛յս զոր աւանդեցեր մեզ 'ի յօրինակ խոնա՛րհո՛ւթեան. բարեխօսութեա՟մբ սրբուհւոյ մօր քոյ և միշտ
կուսի մարիամու աստուածածնի՛ն. ա՛ղա՛։

Աղաչանօ՟ք երջանիկ և նախընթաց կարապետին քո մկրտչին յովհաննու ճըգնաւորական հանդիսի. հեղմամբ արեան սրբոյն ստեփաննոսի նախասարկաւագին քոյ և առաջին վկայի՛ն, և հօրըն մերոյ սրբոյն գրիգորի լուսա՛ւո՛րչին. մաղթանօ՟ք ընտրելոց քոց առաքե-

լոց և մաքրելոց անձանց և մարտիրոսաց պըսա-
կաւորելոցն 'ի քէ՛ն, խը՞նդրե՛մք ։ Ցի՛շեա՛"։
Եւ ևս առ". Տուր մեզ"։ Ձա՛նձի"։ Ողորմեա՛ց"։

Գ⁼նձ ։

Ա՛յս խորհրդ՛ուրդ լըցա՛՛ւ, ա՛նդ դուշա՛կեցա՛՛ւ,
ա՛սա կատա՛րեցա՛՛ւ ։
Աստուած մարդացաւ, ը՞նդ օրինօք մըտաւ,
քահանայացաւ ·
Այսօր վերացաւ, վերնատունն նըստաւ, և
գառըն կերաւ ։

. . . . . . . . . . . . . . . . .

Եւ լըւաց կարգաւ, զոտս նոցա կոնքաւ, մեզ
օրինակաւ ։

. . . . . . . . . . . . . . . . .

Տէ՛ր քոյի՛ն շնորհա՛՛ւ, լը՛ւա զմե՛զ բազկա՛՛ւ,
ա՛րբո բա՛ժակա՛՛ւ ։
Ահա ազատեա՛, ըզմեզ 'ի մեղա՛ց, քաւիչ յան-
ցանա՛ց · ա՛ղա՞չե՛մք ։ Լուր տէր և ող"։
Սիրտ ի՛մ սասանի՛, սարսա՛փ զիս ունի՛, վա-
սը՛ն յուդայի՛։
Որ տէրն ամենի, նըմա առաջի՛, 'ի ծունկս
անկանի ։
Նա ոչ ամաչէ, և ոչ զարհուրի, սիրօղն արծաթի ։
Նոր սեղան դընի, և հաց բաղարջի, 'ւ անա-
պակ գինի ։

. . . . . . . . . . . . . . . . .

Տէ՛ր իմ ա՛րժանի՛, ա՛րա զմե՛զ հացի՛, քո՛
սուրբ սե՛ղանի՛ ։
Ահա ազատեա՛ ըզմեզ 'ի մե"։



Որք որ փափագի՛ն, ուտել զայն մարմի՛ն,
որով սըրբեսցի՛ն ։
Խոնարհիլ պարտին, իւր յանցաւորին, ը՞ստ օրի-
նաց փըրկչին ։
Թողուլ կամովին, զյանցանս 'ի սըրտին, զեօ-
թանասնեկին ։

. . . . . . . . . . . . . .

Այս խորհուրդ յայտնին, եդեալ կանոնին,
մարդկան սահմանին ։
Ի՛սկ աստուա՛ծայի՛՛ն, բնա՛ւ ոչ սահմանի՛՛ն,
մե՛ր բազմո՛ղորմի՛՛ն ։
Ահա ազատեա՛, ըզմեզ 'ի մե"։
Եւ ևս առա". Տուր մեզ"։ Ձա՛նձինըս։ Ողորմեա՛ց"։

Տ⁼ղ ։

Ա՛ստուածն ա՛մենի՛՛, մի՛ածի՛ն որդի՛՛, կա՛մաւ
հօ՛ր հոգւո՛յն ճըշմարտի՛, յե՛րկիր խո՛նարհի՛՛։
Սիրով անքըննին, լոյսն անմատչելին, զենջակ
ըսփածեալ զի ծածկէր, զմերկութիւն նախնին։
Տէրըն հրեղինաց, հրանիւթից զօրաց, խոնար-
հեալ 'ի ծունկս լըւանայ, զոտս հողեղինաց։
Նիւթական ջըրով, տարրական նիւթով, մեզ
նոր պատուիրան աւանդեալ, զմեզըս մաքրելով։

. . . . . . . . . . . . . .

Գ․Ջ

Վերանձգօղն երկնից մըշտընջենաւոր հօր ո՞ր-
դին · ներգործեալ իմո՞վս 'ի վեր քան ըզհրաշս ·
ծառայի առեալ ըզկերպ անկողոպտելի աստ-
ուածութեամբն ։

Բանին զմաքրեցելոցըն ջրո՛վ զոտըս լըւանայր զի զխոնարհութիւն 'ի նոսա՟ տըպաւորեսցէ.
երրորդութեանըն գո՛՟լ օծեա՛ն:

Աղբիւր լուսոյ և ճառագայթ անշիջանելի՟ լոյս որ լըւանա՟լ յանձն առեր զոտս աշակերտա՛ցն. մաքրեա 'ի մէնջ ըզմէգ խաւարին խոր-
հըրդոյ, և լուսաւորեա՟ զմե՛զ:

Այսօր անճառ՟ լուսոյն ծագումն 'ի փըրկութեան մեր կատարումըն՝ խոնարհի 'ի վերնատունն 'ի սուրբական տօնից լըրումն. Նախ քան զընթրի՟սըն խորհըրդոյ սփածաւ զենջակ արկօղն լուսոյ. և ջուր առեալ ծառայաբար
զոտըս լուանայր զաշակերտա՛ցն:

Բանին հօր փառաց լուսոյ պետրոս մերժիլ յոտս ոչ ներէր. այնըմ ձեռաց որոյ են գործ.ք երկնից երկինք և երկրաւոր.ք. որով կուրա՟ց աչըք բացան խուլք և համրք արձակեցան. ու վերածեաց զինքն 'ի ծովէն սաստեաց ա.
լեացն և յըռեցին.

Գըլխոյն ընտրեալ հօտին փոքու սաստէր զխորհուրդն ոչ գիտելոյ. որով դառնայր և հնազանդէր զոտս և ըզգլուխս մաքրել մաղթէր. գըլխոյս առէ՟ չէ ինչ պիտոյ լուացումըն ջրոյ զի լուացեալ է. ոտիցըդ պէտ.ք են մաքրութեան
յօդիլ 'ի գլուխըս սըրբութեամբ:

Գասուց իւրոյ աշակերտաց զոր նախ բանիւ վարդապետեաց. այսօր գործով ըզծայրագոյնն



եցոյց յինքեան զխոնարհութիւն. պաշտաւորեա՟լ հողեղինաց, այն որ անտեսն է հրեղինաց. տարեալ պաշտօն իւր ծառայից, այն որ պաշտին
'ի սրոբէից:

Եթէ տէրս առէ էից և վարդապետըս բոլորից. զաշակերտացդ և զծառայից զոտըս լուացի 'ի հնոյ աղտից. միմեանց և դո՟ւ.ք համարնութեամբ ցուցէ.ք ըզնոյն խոնարհութիւն. բարձրացելոյն 'ի կործանումն և անկելոյ բնութեանդ
կանգնումն:

Զոր մաքրեցեր յաւազանին մաքուր ձեռօ.ք զոտըս նոցին. և ուսուցեր խոնարհութեամբ յաղթօղ լինիլ չար հըպարտին. և զիմ լըւա՟ զտիղմըն մեղաց աղաչանօ.ք սըրբոյ գընդին. և ըզգընացս ուղղեա զոտինս խոնարհութեամբ
ելիւ.ք յերկինս:

Էլից զօրէ՟նսըն մովսէսի զոր խօսեցաւ 'ի սինայի. եկեր ըզգառն օրինակին և ըզբաղարջն ընդ եղեգին. ըզհինն 'ի նո՟րըս փոխելով զըստուերն 'ի լոյս ճըշմարտելով. փոխան գառին ինքըն գոլով գառն աստուծոյ
նըւիրելո՛վ:

Ընդ բաղարջին հաց անխըմոր ետ ըզմարմինն իւր զերկնաւոր. ըզկուսածինն անսերմնաւոր զանապականն և զհոգևոր. ընդ ոչխարի՟ն արեան ուխտին ետ մեզ զարիւնն իւր ուխտ կըրկին. և եղեգան դառնադունին փոխան ըզվարս
աստուածային:

Թագաւորն արարածոց զհացըն կենաց ետ քաղցելոց, և ըզբաժակն ուրախարար որք յադամայ տըրտմեցելոց. այս նոր ուխտ է՞ իմոյ արեան փոխան հընոյ ուխտի արեանց, զոր յիշատակ իմ առնիցէք մինչև եկից ես միւսանգամ: Ժողովեալքս 'ի քէն հայցեմք ընդ ժողովեալ մետասանին, որ զկենարարըդ քո մարմին բաշխեալ եդուր ընդ բաժակին. շնորհեա և մե՞զ տէր ընդ նոսին հաղորդ լինիլ քում սեղանին, կենաց հացիդ յոր փափագիմք և ըմպելւոյդ ում ծարաւիմք:

Ի յընտրելոց աշակերտացն յուդաս մեկնեալ 'ի սուրբ դասա՛նցն, զբարձօղ մեղաց գառն աստուծոյ մատնէր 'ի մահ ընդ արծաթոյ. 'ի յընթրի՞սըն հոգևոր մերձի ժըպիրհն և նենգաւո՛րն, ուտելով ընդ վարդապետըն յաճախէ զխաբէութիւն:

Լոյսըն խօսէր աղերսալի խաւարելոյն վասըն դարձի, մի ոմն 'ի ձէնջ ասէ եղբարք զիս մատնելոց է առ 'ի մահ. պետրոս լըսեա՞լ զայն զարհուրէր և ակնարկէր առ յովհաննէ՛ս, հարցանել թէ ով իցէ դաւաճանող վարդապետին:

Տա՞րածեա՞լ ձեռք ընդ ձեռաց ոտք ընդ ոտից ընթանալեաց, փայտ ընդ փայտի դառըն պըտղոյ կեանք ընդ մահու փոխարկելով. 'ի մէջ երկո՞ւց անօրինաց կայր մերկացեալ տուօղն օրինաց, զոր ոչ տեսին ազգըն կուրաց բաց 'ի միոյն աւազակա՛ց:



Բոպէիցն արեգական ըզտիւն արար գիշերանման, զըստուերըն քօղ արկ մերկութեան զի մի՛ տեսցէ ակն անարժան. 'ի մէջօրեա՞յն նըսեմացաւ յորժամ ադամ մեղօք մեռաւ, 'ի յիններորդն 'ի լոյս դարձաւ յորժամ մահուամբ մահըն լուծաւ:

Ցօղէր արտօսըր ցաւագին մայր տեառն որ կայր մերձ առ խաչին, յորժամ լըսէր ըզծարաւին բարբառելոյ իւր միածնին. ետուն քացա՞խ խառնեալ լեղի այնմ որ բըղխեաց գետ յադենի, և 'ի վիմէն վըտակ բարի արբոյց տոհմին դառնացողի:

Խիւծեալ յերրորդ ժամու օձին զմիտըս նախնւոյ մօրն եւային, 'ի վեցն անկեալ մարդն առաջին հաւանական բանիւ նորին. 'ի սոյն ժամո՞ւ տէրն 'ի խաչին զի քաւեսցէ զմեղըս նոցին, և յորժամ եւ ադամըն հին եդ զաւազակն 'ի մէջ դրախտին:

Փարելի բարբառ ընդ իմ էլի էլի առ հայր գոչէր, զհոգւին կամաւ հօր աւանդէր զհոգիս մարդկան նոյն ընծայէր. երկիր հիմա՞մբք սասանեցաւ և վարագոյրն ընդ մէջ հերձաւ, վէմք 'ի յինքեանց պատառեցան և գերեզմանք մահու բացան:

Քարոզի 'ի սքանչելեացս աստուած մարմնով վասն իմ խաչեալ, մերով բնութեամբըս մեռանի աստուած անմահ խոստովանի. կըրկնավըտա՞կ կողին աղբերբք եկեղեցի իւր հաստատի, ջրովըն մաքրի զարիւնն ըմպէ զորդի ընդ հօր փառաւորէ՛:

ԲԿ

Խաչի քո քրիստոս երկրպագանեմք, և զգօսուրբ մատնութիւնըդ քո մեծացուցանեմք, և զգօսուրբ չարչարանսըդ քո փառաւորեմք. եկայք հաւատացեալք երկրպագեսցուք քրիստոսի աստուծոյ մերոյ, վասն զի եկն 'ի ձեռըն խաչին իւրոյ շնորհեաց պարգևս աշխարհի։ Սուրբ աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ մատնեցար վասն մեր ողորմեա մեզ։ (Երեքս կրկնեա՛։)

Փառք սուրբ խաչիդ ալէլուիա. սուրբ մատնութեանդ ալէլուիա. չարչարանացդ ալէլուիա։ Նըշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և ետուր ուրախութիւն սըրտից մերոց։ Ի պտղոյ ցորենոյ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա։ Փառք սուրբ խաչիդ (Եւ, որպէս 'ի վերոյ։) Փառք և երկրպագութիւն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։ Փառք սուրբ խաչիդ (Եւ, որպէս 'ի վերոյ։) Խաչըն կենարար որ եղև մեզ փրկութիւն. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք։

---



Մեծի Ուրբաթու։

Խաչի քո քրիստոս երկրպա″. և զսուրբ չարչա″. մեծա″. և զսուրբ խաչելու″. փառա″. եկայք հաւա″։ Փառք սուրբ խա″. չարչա″. խաչելու″։
(Եւ տես յէջն 64.)

Մեծի Ուրբաթու Երեկոյին։

Խաչի քո քրիս″. երկրպա″. և զգօսուրբ խաչել″. մեծա″. և զգօսուրբ թաղ″. փառա″։ Փառք սուրբ խաչիդ″. խաչելու″. սրբոյ թաղ։ Եւ բոլոր կարգին։

---

Օրհնութիւն Մեծի Շաբաթուն։ ԲՁ

Պարգևատուն ամենեցուն այսօր խընդրի պարգևս 'ի պիղատոսէ. և արկօղն զլոյս որպէս զօթոց հաւանի պատիլ 'ի յովսեփայ։ Կենդանատուն ամենեցուն այսօր դընի 'ի նոր գերեզմանի. և զանձն անմահութեան կընքի մատանեաւ քահանայից։ Արարածոց փրկութիւն քրիստոս այսօր եդաւ 'ի նորափոր վիմի. զոր օրհնեն զօրք երկնից երգով պահպանի 'ի զինուորաց։

Կենդանին յաւիտենից քրիստոս այսօր խընդրի որպէս մեռեալ 'ի պիղատոսէ. և մերկութեան ծածկոյթն ադամայ յանձն առնու պատիլ 'ի յովսեփայ։ Անմահութեանց տըւող

քրիստոս այսօր 'ի հող մահու խոնարհեցաւ․ և բնակեալն 'ի լոյս անմատոյց թաղեցաւ մարմնով 'ի սիրտ երկրի։ Արեգակն արդարութեան քրիստոս այսօր եդաւ 'ի գբի ստուեկանի․ և փառացըն հօր ճառագայթ ծածկեցաւ վիմով 'ի մէջ երկրի․

Կուսածին մարմնով քրիստոս այսօր դընի 'ի կոյս գերեզմանի․ և լուծիչն երկանց դըժոխոց մատանեաւ կընքի քահանայից։ Արարիչն բնութեամբ արարիչն ամենեցուն այսօր ննջէ 'ի մէջ մահացելոց․ որ պահէն զիսրայէլ անքուն պահպանի 'ի զինուորաց։ Ցընծութիւն արարածոց քրիստոս այսօր արտասուի որպէս մեռեալ 'ի տըրտմագնեցիցն․ և բուրումն անմահութեան խընկի 'ի զգաստիցն իւղաբերից։

Հարց․ Գձ

Զքեզ օրհնեմք թագաւոր յաւիտենից անմահ․ աստուածածին հարցըն մերոց։ Զոր ոչ բնութիւնք արարածոց զաստուած տանիւր․ մահուամբ սահմանեալ դընի 'ի նոր գերեզմանի․ նորոգիս ընդունելով մարդ․ գովեմք զքեզ տէր հայր։ Որ անփոփոխ գրով հաստատեալ քարտէզ․ կընքի մատանեաւ



անկորուստ պահելով զմեզ հաւատով երրորդութեան․ գովեմք զք։ (Օրհնեցէք ամենայն գործք տեառն) Զտէր օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։ (Տիւք և գիշերք զտէր) Օրհնեցէք։ Զքրիստոս թագաւորն յիմանալի զօրացն ահիւ պատուեալ․ և բարձր արա։ (Իսրայէլ զտէր) Օրհնեսցէ։ Զանյաղթելի զթագաւորն որ պահի 'ի զինուորաց զանձն անմահութեան․ և բարձր արարէք զք։

Մեծացուցէ․ Գձ

Աստուածածին երկնային դուռն աստուածային ձայնին աւետարանէր հրեշտակն․ ուրախ լեր բերկրեալդ տէր ընդ քեզ։ Ի քերովբէս բազմեալ ընդ հօր անապականաբար բնակիլ հաճեցաւ 'ի քում որովայնի․ ուրախ։ Որ բոցեղէն սրովբէիւք շըրջափակեալ պահիւր․ այսօր 'ի մէջ մարդկան 'ի գիրկըս հողեղինի յայտնեալ․ ուրախ լեր բերկ։

Ողորմեա․ Գձ

Որ բաշխող ես բարութեանց և պարգևատու արարածոց քոց․ այսօր հաճեցար խընդրել 'ի պարգևի մասին 'ի պիղատոսէ․ զի և մեզ շնորհեսցես պարգևս ողորմութեան քո։

Որ զանճառ ըզլոյս փառաց երրեւ զօթոց ըզքեւ արկար · այսօր անճառ խոնարհութեամբ պատեցար 'ի յովսեփայ 'ի գերեզմանի ոքնեալ· զի ըզհնութիւն մեղաց մերոց նորոգեսցես 'ի կեանս անմահ ։ Որ յէութեանդ ես ընդ հօր անպարագրելի բանդ · այսօր մատանեաւ քահանայիցն պարագրիլ 'ի յանձն առեր անկողոպտելի գանձ · զի ըզմեզ փրկեսցես 'ի յանցանաց մեղաց մերոց ։

Տէրէրինէջ · ԳԶ

Յովսէփ ճշմարիտ եւ արդար հայցէր 'ի պիղատոսէ զհասարակաց ըզպարգեւատուն · որ տըւաւ մեզ գանձ անկողոպտելի ։ Պատեաց սուրբ կըտաւօք զմարմինըն տէրունական զարկօղն ըզլոյս որպէս զօթոց · որ զգեցոյց մեզ ըզգեստ անկողոպտելի ։ Եդաւ 'ի նորափոր 'ի վիմի եւ մատանեաւ կընքեցաւ · որ զնախատեղծըն կենդանացոյց եւ զմարդկան կապանըս մահու ելոյծ ։



Շարական Յարութեան Ս · Զատկին ։ ԳԶ

Այսօր աստուածութիւնըն զուարճանայ նոր հաստատելով զերկիր · պարըք սուրբք փառաբանեն զըւարթնոց · եւ մեք ձայնիւ օրհնութեամբ զարդարեսցուք սուրբ ըզտօնս ։ Այսօր եւ մեք ցընծամք տօնիւս ընդ հանուր հընչմամբ, մեծապէս փայլմամբ երեւեցաւ աշխարհի · առ աստուած գոհութիւնք ընթանան. պատմեն անդադար ըզբան կենդանի ։ Խընդա եւ զուարճացիր եկեղեցի, կոյս սուրբ եւ հարսն երկնաւոր փեսային . ահա տեսանեմք զօծեալն ըզքրիստոս, գոլով առ քեզ լոյսըն հեթանոսաց ։

ԳԶ

Լուսաւորեա երուսաղէմ զի հասեալ է լոյս քո · զարդարեա զամուրըս քո · եւ փառք տեառն 'ի վերայ քո ծագեսցի ։ Օրհներգութեամբ սաղմոսիւք քեզ վայելէ աստուած օրհնութիւն 'ի սիովնէ · եւ քեզ մատուսցին աղօթք յերուսաղէմ ։ Գովեա երուսաղէմ ըզտէր, եւ օրհնեա զաստուած քո · Նոր ժողովուրդ դըշխոյ դուստըր սիովնի ։

Եբէ · ԲԿ

Օրհնեցէք գովեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան ։

Ճաշու։ ԱՁ (Գովեա երուս.)

Յարեաւ քրիստոսն 'ի մեռելոց. ալէ-
լուիա։ Եկայք ժողովուրդք երգեցէք
տեառն ալէլուիա։ (Փառք. Այժմ և.)
Յարուցելոյն 'ի մեռելոց ալէլուիա. որ զաշ-
խարհըս լուսաւորեաց ալէլուիա։

Ճաշու Սաղմոս։

Ալէլուիա ալէլու։ Գովեա երուսաղէմ զտէր։
Եւ օրհնեա զաստուած քո սիօն։
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց. և օրհնեաց
զորդիս քո 'ի քեզ։
Որ եդ զսահմանս քո 'ի խաղաղութիւն. պա-
րարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ։
Առաքէ զբան իւր յերկիր. վաղվաղ ընթանան
պատգամք նորա։
Դնէ զձիւն որպէս զասր. և զմէգ որպէս
փոշի ցանեաց։
Արկանէ զսառն որպէս պատառս. առաջի
ցրտոյ նորա ո կարէ կեալ։
Առաքէ զբան իւր և հալէ զնոսա. շնչեսցէ
հողմք և գնասցեն ջուրք։
Պատմէ զբան իւր յակոբայ. զարդարութիւն
և զիրաւունս իսրայէլի։
Ոչ այսպէս արար ամենայն ազգաց տէր.
Եւ զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա։

---



Օրհնութիւն Ս. Զատկին։ ԱՁ

Այսօր յարեաւ 'ի մեռելոց. փեսայն անմահ
և երկնաւոր. քեզ աւետիք խնդութեան
հարսն 'ի յերկրէ եկեղեցի. օրհնեա 'ի ձայն
ցնծութեան զաստուած քո սիօն։ Այսօր
անճառ լոյսն 'ի լուսոյ լուսաւորեաց զման-
կունքս քո. լուսաւորեա երուսաղէմ քան-
զի յարեաւ լոյս քո քրիստոս. օրհ"։ Այսօր խա-
ւարն անգիտութեան հալածեցաւ երրեակ
լուսով. և քեզ ծագեաց լոյս գիտութեան
յարուցեալն 'ի մեռելոց քրիստոս. օրհ"։
Այսօր զատիկ մեր զենմամբ քրիստոսի. ա-
րասցուք տօն ցնծութեամբ. նորոգեալք 'ի
հնութենէ մեղաց ասելով. քրիստոս յարեաւ
'ի մեռելոց։ Այսօր հրեշտակըն լուսափայլ 'ի
յերկնից իջեալ զարհուրեցոյց զպահա-
պանսն. և սուրբ կանանցըն քարոզէր ասելով.
քրիստոս յար"։ Այսօր նոր իսրայէլ կոչեցեալք
'ի քրիստոս. ազատեալք արեամբ գառինն
աստուծոյ. պարեսցուք ընդ երկնայնոցն ասե-
լով. քրիստոս յարեաւ 'ի մեռելոց։

Ալէլու. Յարութեան ։

(Ա.Զ) Ալէլուիա ալէլուիա ալէլուիա ։
Ողորմութեամբ տեառն լի եղև երկիր, և բանիւ տեառն երկինք հաստատեցան ։ Եւ հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա ։
Ալէլու" ։ Յարեաւ աստուած և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա ։ փախեան ատելիք
նորա յերեսաց նորա ։
փառք և երկրպագութիւն Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ։ Այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից ամէն ։

Դասք հրեշտակաց օրհնեն զքեզ քրիստոս ալէլուիա ․ մարդկան ազգ սաղմոսեն քեզ ․
ալէլուիա ալէլուիա ալէլուիա ։

Քարոզ Վասն ՚ի գիշերի" ։

Տէրունեաց ։ Գ.Կ

Այսօր հրեշտակք ՚ի բարձունս ուրախանան ընդ մարդկան ․ որք իջեալ ՚ի յերկնից տան զաւետիս աշխարհի ․ ցնծացէք այսօր քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց ։ Այսօր զուարթունքն ՚ի վիմին խնկաբերից սուրբ կանանցն ․ փողէր ձայնիւ ցնծութեամբ պատմել աշակերտացն ասելով ․ ցնծացէք այսօր քրիս" ։ Այսօր վիմին հաւատոյ և յօհաննու սիրելոյ ․ ընդ հակառակս ընթացեալ ՚ի գերեզման յարուցե-



լոյն ․ զոր տեսեալ պատմէին քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց ։ Այսօր և մեք զուարճացեալք պայծառասցուք տօնիւս ․ ընդ հաշտութեան աստուծոյ միմեանց արկցուք գիրկս սիրով ․ և
միաբան գոչեսցուք քրիստոս յարեաւ ՚ի" ։

Շարական Աւետարանաց ։ Ա.Զ

Ընդ լուսանալ միաշաբաթին կանխեցին կանայքն ՚ի գերեզմանն ․ ՚ի խնկել զանապական մարմինն ։ Եւ գտին զվէմն բարձեալ ՚ի դրաց գերեզմանին և լուեալ բարբառ ՚ի հրեշտակէն ․ եթէ յարեաւ քրիստոս և խափանեաց զմահ ։ Եւ հանդիպեալ քո տէր առաջին և տուեալ ողջոյն կենդանարար ․ առաքեցեր
զնոսա ՚ի փրկութիւն տիեզերաց ։

Ա.Կ

Առաքեցար ՚ի Հօրէ բանդ աստուած ՚ի փրկութիւն ազգի մարդկան ․ օրհնեմք զքեզ սուրբ աստուած ։ Ի գերեզման իջեր թագաւոր անմահ և ՚ի Հօրէ ոչ մեկնեցար ․ օրհ" ։ Ի յերրորդ աւուր յարեար աստուածապէս և ՚ի յերկինս համբարձար փառօք յարութեան
քո տէր ․ օրհ" ։

Բ.Զ

Ի գերեզման քո կանխեցին կանայքն զխունկս

և զխունկըս բե՛րին 'ի՛ պատի՜ւ թաղման քո՛ · զի զմեղօք ըղձողացեալըս վերածեր 'ի կեանս : փոխանակ իւղոյն զհաւատս անքիծս և զաղաչանըս մե՛ր ընդ առաւօտեան կանանցն ընկալ · որք զողջոյն կենաց լըւա՞ն եայի ունկամբն : Ետուն ո՛ւետիս առաքելոցն յարեա՛ւ յարուցիչքն մե՛ր աւերեա՜ց ըզդըժոխս · և զթըշնամին կապեա՞ց 'ի յանլոյծ կապա՛նս :

ԲԿ

Քո՛ յա՛րո՜ւթեանըդ փառըք վայելէ երկայնամի՞տ տէր : Օրհնեալ է քո յարութիւնդ աստը՜ւա՛ծ · որ ըզմա՛հ մահու ծանուցեր քոյի՞ն կամաւոր մահուամբդ · քո՛ յա՛" : Գոչումն ահեղ հրեշտակին 'ի վի՜մին որ քարոզէր առ սուրբ կանայսն յարեա՞ւ տէրն 'ի մեռելոց · քո՛ յա՛" :

ԱՁ

Որ զանարատ բազուկըս քո՛ 'ի խաչին տարածեցեր քրիստո՜ս աստըւա՛ծ և նըշա՛ն յաղթութեան ետո՞ւր մեզ · սովաւ ըզկեանըս մեր պա՜հեա : Որ զաշխարհակեցոյց բազկատարածութիւն խաչի՛ քո քրիստո՜ս աստըւա՛ծ գաւազա՛ն զօրութեան ետո՞ւր մեզ · սովաւ ըզկեա" : Որ ըզմեռեալն 'ի ճաշակմանէ փայտի՜ն յանցանա՛ց կե՜նա՛ց փա՜յտիւըն կենագործեցեր · սովաւ ըզ" :



Ալէ՛լուիա ալէ՛լուիա · Նըշանեցա՛ւ առ մեզ լոյս երեսաց քոց , և ետուր ուրախութիւն սըրտից մերոց : Ի կարդալ իմում լըւար ինձ աստուած ըստ արդարութեան · 'ի նեղութենէ ինձ անդորր արարեր · ողորմեա ինձ և լուր աղօթից իմո՛ց : Ալէ՛լուիա օ՛րթի :

Եւք :

Նո՛րաստեղծեա՜լ բանն յանէից 'ի սկըզբանէ զերկինս երկնից · և՛ զերկնայի՜ն զօրս անմարմնոց իմանալեացըն զըւարթնոց · և՛ ըզգալի՜ տարերց քառից հակառակաց միաբանից · ո՛րով յաւէ՜տ փառաբանի երրորդութիւնն անճառելի՛ :

Երեքսըրբեան մի տէրութիւն միով բնութեամբ աստուածութիւն · լոյսն որ անեղ արարչական ասաց լինիլ լոյս եղական · զոր և ծագեաց յօրն առաջին միաշաբաթ կիւրակէին · որով յա" :

Բաբունօրէն բացատրեսցուք զծածկեալ խորհուրդըն ծանիցուք · զի լոյսն անտես իմանալի մաքուր հոգւոց տեսանելի · 'ի սոյն ծագեաց միաշաբաթ մեզ յարութեան սուրբ ճառագայթ · եկայք փըրկեալք ընդ զըւարթնոյն տուք օրհնութիւն յարուցելոյն :

Սէրըդ սիրով խոնարհեցար 'ի փըրկութիւն մեր մարմնացար · նովին մարմնովըն խաչեցար 'ի գերեզման մահու եդար · այսօր յարեար աստուածաբար 'ի հրեշտակաց քարոզեցար · եկայք" :

Երևեցար խընկաբերից յողջոյն կենաց ուրախակից. և 'ի լերինըն գալիլեայ առաքելոց մետասանից. արժանացո զմեզ ընդ նոսին զքեզ տեսանել յօրըն վերջին. եկայք փըր":

Սիօնի որդիք զարթիք հարսին լուսոյ տուք աւետիք. եթէ փեսայն քո յարուցեալ յաղթեաց մահու իշխանութեամբ. գայ պըսակէ ըզքեզ փառօք եւ ընդ առաջ պըճնեալ զարդուք. երգեա երգ նոր յարուցելոյն նընջեցելոց կենաց պըտղոյն:

Խաչի քո քրիստոս երկիրպա". և զսուրբ թաղ". մեծացու". և զսուրբ յարու". փառաւո". եկայք հաւատա": փառք սուրբ խաչիդ". սրբոյ թաղ". սուրբ յարու": (Նոյն ըստ կարգին, տես եջ 64: 'ի վերջոյ ըստ ձայնոց երգէ) Քո յարութեանըդ փառըք վայելէ երկայնամիտ տէր:

Ձայնը և գործը տես եջ 70

Սրբասացութիւն:

Ո՞վ է որպէս տէր աստուած մեր խաչեցաւ վասըն մեր թաղեցաւ և յարեաւ հաւատարիմ եղև աշխարհի և համբարձաւ փառօք: Եկայք ժողովուրդք զօրհնութիւն ընդ հրեշտակս երգեսցուք նըմա, ասելով սուրբ սուրբ սուրբ ես տէր աստուած մեր:



Յարութեան երգք թափօրի:

Շարականք:

ԲԿ

Իջեր տէր և մարմնացար 'ի կուսէն. և զհողեղէն բընութիւնս ազատեցեր 'ի մեղաց: Ելեր տէր բևեռեցար 'ի խաչին. ըզմեռանիլ յանձն առեր կենդանատու մեռելոց: Եդար տէր 'ի նորափոր 'ի վիմի. և մատանեաւ կընքեցար գանձըդ կենաց աշխարհի: Յարեար տէր աւերեցեր ըզդըժոխս. 'ի յերկինըս համբարձար և ընդ աջմէ հօր նըստար:

Ըզյարութիւն քրիստոսի ամենեքեան օրհնեսցուք. զի նա միայն աստուած փառաւորեալ յաւիտեան: Ըզճառագայթ յարութեան տեսանելով հրեշտակին. նա զօրանայր 'ի պատմել ըզկենսաբեր յարութիւնն: Զայն աւետեաց լըսէին առաւօտեան սուրբ կանայքն. 'ի հրեշտակէն դառնային ուրախութեամբ յառաքեալսն:

ԳԿ

Տեսիլ փայլակնաձև զուարթնոյն 'ի վիմին հընչեցեալ առ խընկաբերս կանայսն. փարատեցոյց զերկիւղալից տըրտմութիւնն: Պահա-

պանքըն պակուցեալ ահարեկ լինէին. և կանանցն աւետարանեալ մահ մահու յաղթեաց և ծանուցաւ մահ: Քարոզս առաքելով առ երջանիկ առաքեալսն. փութացարուք 'ի գալիլեա և տեսանիցէք զկենագործողն Քրիստոս:

Ըզքո յարութիւնդ օրհնեմք մարդասէր աղաղակելով տէր փառք քեզ:

ԴՁ

Փառաբանակից հօր որդի որ վասըն մեր խաչեցար. զդըժոխս աւերեալ յարեար յաւուր երրորդի. փառք յարութեան քո տէր:
Հրեշտակապետին ի ջուրն որ զպահապանսն երկիւղիւ զարհուրեցոյց առ դրանըն գերեզմանին. փա: Եւ ըսքանչելի սուրբ կանանցն աւետարանէր ասելով, յարեաւ Քրիստոս յարուցիչըն մեռելոց. փա:

Կանանցըն կանխելով 'ի թաղումըն կենդանւոյն, տեսին ըզվէմն 'ի դրացն 'ի բաց մերժեալ: Թափուր ըզգերեզմանն և ունայն տեսանէին, և տըրտմութեամբ լային յուսահատեալք: Մայր խաչեցելոյն զի՞ լաս յուսահատեալ, քանզի Քրիստոս փառօք մեծաւ յարեաւ:



բարձրեալըն նա մի սասանեսցի:
Գըտցի ձեռըն քո 'ի վերայ թըշնամեաց քոց, և աջ քո գըտցէ զամենայն ատելիս քո:
Դիցես ըզնոսա որպէս հընոց 'ի հուր, 'ի ժամանակի երեսաց քոց:
Տէր բարկութեամբ իւրով խռովեցուսցէ զնոսա, և հուր կերիցէ զնոսա:
Պըտուղ նոցա յերկրէ կորիցէ, և զաւակ նոցա յորդւոց 'ի մարդկանէ:
Խոտորեցան 'ի քէն չարութեամբ, և խորհեցան ըզխորհուրդ զոր ոչ կարասցեն հաստատել:
Արասցես ըզնոսա հալածեալս 'ի մնացուածըս քո. և պատրաստեսցես զերեսըս նոցա:
Բարձր լեր տէր 'ի զօրութեան քում. Օրհնեսցուք և սաղմոս ասասցուք 'ի զօրութեան քում:

———

Ալէլուէ Յարութեան:

ԱՁ տես էՂ 72:

(ԱԿ) Ալէլուիա ալէլուիա ալէլուիա:
Ծափս հարէք ամենայն հեթանոսք. աղաղակեցէք առ աստուած 'ի ձայն ցընծութեան:
Տէր բարձրեալ և ահարկու. թագաւոր մեծ 'ի վերայ ամենայն երկրի:
Ալէլու: Հաճեցար տէր ընդ երկիր քո. և դարձուցեր զգերութիւն յակոբայ: Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո. և ծածկեցեր զամենայն մեղըս նոցա:
Փառք և եր: Այժմ և: Ալէլու: (Երէցս)

(ԲՁ) Ալէլուիա ալէլուիա ալէ՞լուիա ։
Ցարեա՛ւ աստուած և ցըրուեցան ամենայն թըշ-
նամի՞ք նորա ։ փախեա՛ն ատելի՛ք նորա յերե-
սա՞ց նորա՛ ։
Ալէլու՛՛ ։ Տէ՛ր թագաւորեաց վայելչութի՞ւն զգե-
ցաւ ։ Զգեցա՛ւ տէր զօրութիւն ընդ մէջ ի՞ւր էա՛ծ ։
փա՛ռք և եր՛՛ ։ Ա՛յժմ և՛՛ ։ Ալէլու՛՛ ։

(ԲԿ) Ալէլուիա ալէլուիա ալէ՞լուիա ։
Հաճեցա՛ր տէր ընդ երկիր քո , և դարձուցեր
զգերութիւն յա՞կոբայ ։ Թողե՛ր զանիրաւու-
թիւն ժողովրդեան քո . և ծածկեցեր զամե-
նայն մեղք՞ս նոցա՛ ։
Ալէլու՛՛ ։ Օրհնեցէ՛ք մանկունք զտէր , և օրհ-
նեցէք զա՞նուն տեառն ։ Եղիցի՛ անուն տեառն
օրհնեալ յայսմհետէ մինչև յա՞ւիտեա՛ն ։
փա՛ռք և եր՛՛ ։ Ա՛յժմ և՛՛ ։ Ալէլու՛՛ ։

(ԳՁ) Ալէլուիա ալէլուիա ալէ՞լուեա ։
Տէ՛ր թագաւորեաց վայելչութի՞ւն զգեցաւ ։
Զգեցա՛ւ տէր զօրութիւն ընդ մէջ ի՞ւր էա՛ծ ։
Ալէլու՛՛ ։ Գովեա՛ երուսաղէմ զտէր , և օրհնեա
զաստուած քո՞ սիօն ։ Զի՛ զօրացոյց զնիգըս
դրանց քոց , և օրհնեաց զորդիս քո՞ 'ի քե՛զ ։
փա՛ռք և եր՛՛ ։ Ա՛յժմ և՛՛ ։ Ալէլու՛՛ ։

(ԳԿ) Ալէլուիա ալէլուիա ալէ՞լուիա ։
Օրհնեցէ՛ք մանկունք զտէր , և օրհնեցէք զա՞-
նուն տեառն ։ Եղիցի՛ անուն տեառն օրհնեալ
յայսմհետէ մինչև յա՞ւիտեա՛ն ։



Ալէլու՛՛ ։ կենդանի՛ է տէր և օրհնեալ է աստ-
ուած , և բարձր եղիցի աստուած փըրկութեա՞ն
իմոյ ։ Աստուա՛ծ է որ խընդրէ զվրէժ իմ . և
հնազանդ առնէ զժողովուրդս ը՞նդ ինև՛ ։
փա՛ռք և եր՛՛ ։ Ա՛յժմ և՛՛ ։ Ալէլու՛՛ ։

(ԴՁ) Ալէլուիա ալէլուիա ալէ՞լուիա ։
Գովեա՛ երուսաղէմ զտէր , և օրհնեա զաստ-
ուած քո՞ սիօն ։ Զի՛ զօրացոյց զնիգըս դրանց
քոց , և օրհնեաց զորդիս քո՞ 'ի քե՛զ ։
Ալէլու՛՛ ։ Ողորմութեա՛մբ տեառն լի եղև երկիր ,
և բանիւ տեառն երկինք հաստա՞տեցան ։ Եւ հոգ-
ւո՛վ բերանոյ նորա ամենայն զօրութի՞ւնք նոցա՛ ։
փա՛ռք և եր՛՛ ։ Ա՛յժմ և միշտ՛՛ ։ Ալէլու՛՛ ։

(ԴԿ) Ալէլուիա ալէլուիա ալէ՞լուիա ։
կենդանի՛ է տէր և օրհնեալ է աստուած , և
բարձր եղիցի աստուած փըրկութեա՞ն իմոյ ։
Աստուա՛ծ է որ խընդրէ զվրէժ իմ , և հնա-
զանդ առնէ զժողովուրդս ը՞նդ ինև՛ ։
Ալէլու՛՛ ։ Ծա՛փս հարէք ամենայն հեթանոսք .
աղաղակեցէք առ աստուած 'ի ձայն ցը՞նծու-
թեան ։ Տէ՛ր բարձրեալ և ահարկու . թագա-
ւոր մեծ 'ի վերայ ամենա՞յն երկրի՛ ։
փա՛ռք և եր՛՛ ։ Ա՛յժմ և՛՛ ։ Ալէլու՛՛ ։

———

Ուէ խուշաբերէց առետարանին ։

Եղիցի անուն տեառն օրհնեալ 'ի յայսմհետէ մինչև 'ի յաւիտեան ։

Օրհնեցէք մանկունք ըզտէր և օրհնեցէք
զանուն Տեառն։ Եղիցի անուն Տեառն օրհ-
նեալ յայսմհետէ մինչև ՚ի յաւիտեան.
յարևելից մինչ ՚ի մուտս արևու օրհնեալ է
անուն Տեառն. ՚ի յայսմհետէ մինչև ՚ի
յաւիտեան։

փառք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ
և Սըրբոյ Հոգւոյն. և այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից ամէն. ՚ի յայսմհե-
տէ մինչև ՚ի յաւիտեան։

Արի տէր օգնեա մեզ և փրկեա ըզ-
մեզ, վասն անուան քո։

Արի և մի մերժեր զմեզ իսպառ, վասն
անուան քո։

Թագաւորեսցէ տէր յաւիտեան, աստըւած
քո սիոն ազգէ յազգ։

Օրհնեա անձն իմ ըզտէր օրհնեցից ըզտէր
՚ի կենդանութեան իմում։ Որթիւ։ Աէ։

[illegible]

փառք յարութեան քո տէր ոչ դադարե-
ցայց քրիստոս օրհնել ըզքեզ զամենայն ա-
ւուրս կենդանութեան իմոյ։

փառք յարութեան քո տէր ոչ դադարեցայց
յիսուս գովել ըզքեզ զամենայն աւուրս կեն-
դանութեան իմոյ։



Եւ ոչ դադարեցայց փրկիչ փառաւորել
ըզքեզ զամենայն աւուրս կենդանութեան
իմոյ։

Ի գիշերի համբարձէք ըզձեռս ձեր ՚ի
սըրբութիւն, և օրհնեցէք ըզտէր։

Աստ օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն
ըզտէր ՚ի սըրբութիւն. և օրհնեցէք ըզ-
տէր։

Լուսապայծառ հրեշտակըն նըստելով ՚ի
կենսատու գերեզմանին, եւ աւետէր կա-
նանցն յարեաւ աստըւած։

———

Օրհնութիւն Աւետեաց Աստուածածնին։ Ա.կ

Խորհուրդն անճառ ծածկեալն յազգաց և
յաւիտեանց. յայտնեցաւ իջմամբ հրեշտա-
կապետին այսօր առ կոյսըն Մարիամ. զոր
առ տէր ունիմք բարեխօս վասն անձանց
մերոց։ Անժամանակն առ ՚ի Հօրէ և անմար-
մին ծոցածին ծընունդ. այսօր աւետեօ-
քըն գաբրիէլի մարմին զգենու ՚ի սըրբոյ
կուսէն. զոր։ Անտանելին ՚ի համայնից բովան-
դակի չ բնութեանց բոլորից. պարագրի այ-
սօր մարդասիրաբար պէս յորովայնի անարատ
կուսին. զոր։ Աներևոյթ փառացըն Հօր նըկա-
րագիր անյեղապէս. ՚ի ծառայական խո-

նարհի պատուէր 'ի յարգանդի հոգւով մաք-
րելոյ. զոր առ տէր ունիմք բարեխօս վասն
անձանց մերոց: Անսահմանըն յէութեան
սահմանելեացս էացուցիչ. 'ի վեր քան ըզ-
բան սահմանի այսօր յորովայնի սրբու-
հոյ կուսին. զոր": Ուրախութիւն տըրտմեցելոյ
բնութեանս բերկրեալ սուրբ կոյս մայրն ամ.
զոր ողջունաբեր աւետեօք կրեցեր զորբւօղն
'ի քեզ զօրէնս ողջունի. առ նա միշտ բարե-
խօսեա վասն անձանց մերոց:

Որ առաքեցեր զմիածինդ 'ի փըրկութիւն
տիեզերաց. անեղ էութեամբ եղանիլ մար-
մին 'ի սուրբ կուսէն հայր երկնաւոր. զոր
առ քեզ ունիմք բարեխօս վասն անձանց մե-
րոց: Որ ըղնախագրեալըն առ 'ի քէն մարգա-
րէիւք եկիր կատարել. անմայր 'ի հօրէ
անըսկզբնաբար լինիլ անհայր 'ի սրբոյ կու-
սէն. զոր": Որ 'ի լրումն անճառից 'ի քէն յայտ-
նեալ ծածկեալ խորհըրդոյ. 'ի քէն մաքրելոյ
երջանիկ կուսին հօր զօրութիւնն հովանա-
ւորեալ. զոր": Որ ըղնախամօրն անիծից եր-
կանց լուծեր ըզգաստակնիք. որ ըզտըրտմա-
կան սահմանեաց ծընունդ անախտաբար
ծնանելով 'ի քէն. առ նա միշտ բարեխօսեա
վասն անձանց մերոց:



Հարց: ԴՁ

Որ անիմանալիդ ես յէութեան հայր անըս-
կիզբն և անպատճառ. 'ի փըրկութեան
մերոյ սկզբան առաքեցեր ըզմիածինըդ մար-
նանալ 'ի սրբոյ կուսէն. օրհնեալ տէր աս-
տուած հարցըն մերոց: Որ 'ի հօրէ անմեկ-
նելի անեղակից բանդ աստուած. ըզգա-
սապետ զօրութեանց վերնոցըն նախընթաց
քում գալըստեանդ առաքեցեր յառաջա-
գոյն. օրհ": Բըղխումն անճառ և անքննելին հո-
գիդ անեղ և համագոյ. զտնօրէնութեան
քում էակցին մաքրազարդեալ ըզբնակարան
եկաւորութեան. օրհ": (Օրհնեցէք ամենայն
գործք տեառն) Ըզտէր օրհնեցէք բարձր ա-
բարէք ըզնա յաւիտեան: Եկայք փըրկեալք
կենարար իջմամբ բանին հօր 'ի յարգանդ-
կուսին. ընդ երկնայնոց դասուցն երգով ըզտէր
օրհ": Որ զանէծս երկանց ծնընդեան նախամօրն
ելոյծ. անսերմնապէս ծնանելով յանապական
կուսէն. երգով ըզտէր օրհ": Որք վերըստին
նորոգեալք եղէք 'ի հնութենէ մեղաց. զնո-
րոգօղ բնութեանս երգով ըզտէր օրհ":

Մեծացուսցէ: ԴՁ

Ուրախ լեր մարիամ սուրբ աստուածածին.

զի 'ի տաճարիդ մաքրեցելոյ յանկարծակի եկըն տէր. ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք: Ուրախ լեր դուռըն փակեալ ընդ որ ոչ ոք մըտեալ. բայց տէր աստուած իսրայէլի. ըզքեզ օրհն": Ուրախ լեր աղբիւր կընքեալ ջրոյն կենդանութեան. զոր ծարաւելոյ բնութեանս ետուր 'ի յորդութիւն. ըզքեզ օրհն":

Ողորմեա : Դ.Ձ

Որ յանէից անմարմնական զօրաց էակ հայր անըսկիզբն. ըզգօրապետ խըմբից նոցա աւետաբեր այսօր առաքեցեր առ բանին քո խորան սըրբութեան. աղաչանօք սորա ողորմեա մեզ աստուած: Որ 'ի կառս քերովբէից բազմեալ լոյս քան զարեւ յառաջ. 'ի հովանութեան հաճեցար այսօր տաճարի բազմիլ փառաց մաքրազարդեալ որովայնի. աղաչա": Որ 'ի ստուեր ճըշմարտութեան խօսեալ յօրէնս տեառն զօք. այսօր 'ի գլուխ գրեցոյց նոցին հովանացեալ սըրբոյ կուսին 'ի բնակութիւն քում էակցին. աղաչա":

Տէրէրէնէյ : Դ.Ձ

Ուրախ լեր մարիամ կոյս անապական. զի 'ի հայրական ծոցոյ անմեկնելի որդին 'ի քոյ յանձն առնու բընակիլ յորովայնի: Ուրախ



լեր երկին վեհագոյն քրովբէ հողեղէն. որ զանտանելին երկնից և հրեղինաց դասուցն 'ի քո ընկալար մաքրական որովայնի: Ուրախ լեր սիւն հրեղէն լուսոյն աշտանակ. որ զաւարչականն եղականաց լուսոյն 'ի քեզ տանելով ծագեցեր խաւարելոցս: Ուրախ լեր սափոր ոսկի երկնային հացին. որ զառ 'ի վերուստ իջեալ ըզմանանայն կենաց նորոյս պարգեւեալ կերակուր իսրայէլի: Ուրախ լեր ամպ թեթեւ գեղմն իմանալի. որ 'ի բանական երկիր հեղեր զանձրեւ կենաց արդիւնս ըստ գործոց հաւատոյ պըտղաբերեալ: Ուրախ լեր դուստըր լուսոյ մայր անհարսնացեալ. քանզի յղացելոյն 'ի քէն համախըմբեալ վերնոցն ուդիւք սիոնի երգեն ըզփառս 'ի բարձունս:

Ճաշու : Գ.Կ

Աստուածածին խորան լուսոյ անվայրափակ արփւոյն կենաց. որ եղեր արեւելք արեգականն արդարութեան. և նըստելոցս 'ի խաւարի լոյս ծագեցեր. վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք: Անապական տաճար և մորենի անկիզելի. որ զանշէջ հուր աստուածութեանն 'ի քեզ տարեալ կրեցեր. որով բնութեանս կիզեալ շիջաւ կրից բոց. վասն ո":

(փառք". Այժմ և".) կենդանի տապանակ կտակարանաց նորոյ ուխտին. որով եւ մեք յերկիր աւետեաց հորդեալ. հոգւով 'ի քեզ տըպաւորեալ բանին. վասն որոյ ամենեքեան ընդ քեզ միշտ մեծացուցանեմք.

---

Օրհնութեան Համբարձման. ԴՁ

Համբարձաւ տէրն մեր յերկինս առնելով աշակերտացն նըստարուք 'ի քաղաքիդ երուսաղէմ. մինչև զգենուցուք զզօրութիւն 'ի բարձանց: Միաբանեալ սուրբ առաքեալքն միախոհ և միակրօնք. միաբան նըստէին 'ի սուրբ վերնատանն. և ակն ունէին գալըստեան սուրբ հոգւոյն: Յանկարծակի եհաս 'ի նմանութիւն լուսոյ փայլմանց. և եկեալ բնակեցաւ 'ի սուրբ առաքեալսն. մինչդեռ նըստէին 'ի սուրբ վերնատանն:

Համբարձաւ տէրն մեր քրիստոս օրհնութեամբ ընդ ամպս երկնից. և առաքելոցն երկրպագեալ դարձան յերուսաղէմ. միաբանութեամբ վերառաքէին զաղօթս: Մըտեալ 'ի յերկինքս բիւրաւոր զօրօք բազմութեամբ հրեշտակաց. որք աղաղակէին և ասէին. օրհնեալ եկեալ 'ի յանուն տեառն:



նըստեալ ընդ աջմէ ծնողին կատարելով ըզխոստացեալ պարգևացն. մխիթարիչ սուրբ հոգին գայ առ ձեզ. աղբերացուցանել զմեծ զողորմութիւն:

Ալէլուէ Համբարձման:

Ալէլուիա ալէլուիա ալէլուիա:
Խոնարհեցոյց զերկինս և էջ. և մէգ 'ի ներքոյ ոտից նորա: Ել 'ի քրովբէս և թռեաւ. սլացաւ նա 'ի թևս հողմոց:
Ալէլու": Համբարձաւ աստուած օրհնութեամբ և տէր մեր ձայնիւ փողոյ: Սաղմոս ասացէք աստուծոյ մերում. սաղմոս ասացէք թագաւորին մերում սաղմոս ասացէք:
Փառք և որ". Այժմ և". Ալէլու":

Ճաշու Համբարձման: ԱՁ:

Որ համբարձար այսօր աստուածային իշխանութեամբ 'ի հայրական աթոռ կառս սպասաւորելով 'ի հրեշտակական դասուց. որք նըւագէին առնելով համբարձէք իշխանք ըզդրունս ձեր 'ի վեր և մըտցէ թագաւոր փառաց: Հիացան վերնական իշխանութիւնքն և սոսկալի ձայնիւ աղաղակէին առ միմեանս. ով է սա թագաւոր փառաց եկեալ մարմնով և սքանչելի զօրութեամբ. համբարձար: (փառք". Այժմ և".)

Եղանակէն վերնական պետութիւնքըն
հրաշալի ձայնիւ երգէին երգ նոր ա-
ստուծոյ. սա ինքն է Թագաւոր փառաց փրկ-
կիչ աշխարհի և աղատիչ ազգի մարդկան.
համբարձէք իշխանք դրղրունըս ձեր 'ի
վեր և մտցէ Թագաւոր փառաց:

---

Ճաշու Բ. Ծաղկազարդի ԴՁ. Զալուստ քո տես էջ 49:

---

Օրհնութիւն Հոգեգալստեան Ա. աւուրն: ԴՁ

Առաքելոց ողջունեալ": (տես էջ 13)

Կենդանարար աստուածային մարդասէր հո-
գի. ըղձողովեալսն միաբանեալ կանչեն սիրով
լուսաւորեցեր հրեղէն լեզուօք.
վասն որոյ և մեք այսօր տօնեմք ընդ ա-
ռաքեալս քո սուրբ: Զուարճացան քո գալը-
տեամբն սուրբ առաքեալքն կոչելով
'ի միասին բազմութեան 'ի միմեանց
բարբառին ձայն լեզուօք. վասն": Հոգևո-
րական սուրբ մեկնութեամբ զարդա-
րեալ նորոգեալ ընդ երկրաւոր լու-
սափայլ և նորափետուր. վասն":



Ալէլուիա Հոգւոյն սրբոյ գալստեան:

Ալէլուիա ալէլուիա ալէլուիա.
Սիրտ սուրբ հաստատեա յիս աստուած. և հո-
գի ուղիղ նորոգեա 'ի փորի իմում: Մի ըն-
կենուր զիս յերեսաց քոց. և զհոգի քո
սուրբ մի հաներ յինէն:
Ալէլու": Գտի զԴաւիթ ծառայ իմ. և իւղով
սրբով իմով օծի զնա: Ձեռն իմ ընկալցի
զնա. և բազուկ իմ զօրացուսցէ զնա:
Փառք և որ". Այժմ և": Ալէլու":

Շարական: ԲԿ

Երրորդութիւն անբաժանելի և զօրութիւն
երկնային լոյս ծագեալ յաշխարհ.
նմա ՁՁ հանապազ զօրհնութիւնս եր-
գով: Որ էջքն յերկնից այսօր և հանգեաւ
յառաքեալսըն ճշմարիտ սուրբ հոգին.
նմա հան": Որ 'ի խորհուրդըս փրկականն
այսօր ընդ իջանել յառաքեալսըն ծանուցաւ
մարգարէիւն. նմա հան":

Ճաշու Հոգեգալստեան Ա. աւուրն: ԲՁ

Որ 'ի յարաշարժ 'ի յանձրեւէն յառաջ բըղ-
խեալ անհասաբար 'ի յորդւոյ տիրապէս
սուրբ հոգին այսօր 'ի յերկնից սաս-
տիկ հեղեալ 'ի դասս առաքելոցն լցուցիչ

բոլորից · ըզընա՜ օրհնեսցուք երկրպագելով: Որ յանսկիզըն և ՚ի միշտ ՚ի յէութէն նոյնագոյ բընութեամբ անորիշ բաժանմամբ ՚ի յորդւոյ արարչակից սուրբ հոգին այսօր · հրով բաժանեալ լեզուս քարոզիցն · ՚ի լոյս ածեալ զազգըս մարդկան բաժանմամբ պէս պէս շնորհաց · ըզը": Որ ՚ի վերայ ջուրցըն գոլով գոյացոյց զարարածս անանջրպետ ՚ի հօրէ և յորդւոյ իշխանակից սուրբ հոգին այսօր · վերածնեաց զազգս ամենայն · ջրոյ կենդանւոյ բըղխեալ յերուսաղէմ · ըզը":

———

Նոր կիրակամտից:

Ալէլուիա ալէլուիա.

Լոյս զուարթ սուրբ փառաց անմահ հօր երկնաւորի սրբոյ կենարարի յիսուս քրիստոս:

Եկեալքս ՚ի մուտն արեգական տեսաք ըզլոյս երեկոյիս: Օրհնեմք ըզհայր և զորդի և ըզսուրբ հոգին աստուծոյ · և ամենեքեան ասեմք ամէն: Արժանաւորեա ըզմեզ յամենայն ժամ օրհնել ձայնիւ երգով զանուն փառաց



ամենասուրբ երրորդութեանդ : Որ տաս զկենդանութիւն վասն որոյ և աշխարհս ըզքեզ փառաւորէ:

Համբարձի կիրակամտից : Ա.Ձ

Սուրբ ես տէր զօրութեանց որ բնակեալդ ես ՚ի յերկինս · և բարեբանիս ՚ի սրբոց քոց: Երկնայինն զօրութիւնք սերովբէք և քերովբէք · անդադար օրհնեն սուրբ զանունդ քո : Քահանայք ընդ նոսին պաշտօնեայք և ժողովուրդք · երկրպագեսցուք տէրութեանդ քո:

Լոյսդ որ յառաջ քան զյաւիտեանս ՚ի հօրէ առաքեցար · և լուսով իմանալեաւ լցեր զարարածս · օրհնեալ ես թագաւոր յաւիտենից : Որ ըզլոյսն ՚ի սկըզբանէ հաստատեցեր վերըստին · և զխաւարն անգիտութեան յարութեամբըդ քո հալածեցեր · օրհ": Ուստի և մեք լուսաւորեալքս ընդ լուսեղէն զուարթնոցն · երգեսցուք ըզնծութեամբ ՚ի յարութեան երեկոյիս · օրհ":

Երկնաքաղաքացին յովհաննէս մեծն ՚ի ծննդըս կանանց քարոզէր յանապատի ազդարարող բարբառովն · ըզծագումըն լուսոյ աւետականն արդարութեան: Ծըշմարիտ մարգարէ և ձեռնադրող որդւոյն աստուծոյ յառաջ-

ընթաց կարապետ և պատմօղ աստուածային
օրինացն · հորդէր ճանապարհ Թագաւորին
յաւիտենից · զանօրէն գինեբրուսն մոլեգնեալ
Հերովդիադայ · 'ի պարգևի մասին խնդրէր
ըզգլուխ մարգարէին · չիջուցանել զարուսեակն
և զանազօտ լապտերն ։ (փառ.ք".) Սրբուհւոյ
աստուածածնին բարեխօսութեամբ պարգևեա
երկրպագուացս ամենասուրբ երրորդութեանդ
զյարութիւն յուսոյ կենացըն յաւիտենից ·
(Այժմ և".) Զհաւատացեալ ժողովուրդըս սուրբ
երրորդութեանդ · և զապաւինեալս 'ի խո-
րան փառաց քոց · պահեա անխըռով 'ի խա-
ղաղութեան ։

Ի տօնի Առաքելոց ընդ Սուրբ եւ տէրէն ։ ԱՁ

Ի քէն հայցեմք բազումողորմ 'ի ձեռն
սրբոց քոց առաքելոցն · խընամեա
տէր 'ի յանձինս մեր ։ Զորս ընտրեցեր
յառաջագիտութեամբ զարժանացելոց անձինս
տըպաւորեալ 'ի նոսա զհոգի շնորհաց քոց ·
որով վանեալ հերքեցին զապըստամբ զթըշ-
նամին · բարեխօսութեամբ սոցա խընայ"։
Որք ըզխաւարն անգիտութեան մերկացին
յամենայն ազանց զգեստաւորեալ զհե-
թանոսս առաքելական կոչմամբ 'ի լոյս կե-
նացըն յաւիտենից · բարեխօ"։ վասն որոյ և



մեք հաւատացեալքս կատարեսցուք ըզյիշա-
տակ սրբոց առաքելոցն · աղաչեմք ըզ
քեզ որ միայն գթածդ ես առատաձեռ-
նեա 'ի մեզ ըզմեծ քո ողորմութիւնդ ·
տէր որ կեցուցանես զամենայն արարածս։

———

Ճաշու շարական Յարութեան (Տէրթագ։) ԱՁ

Զթագաւորըն փառաց քրիստոս որ վասըն
մեր մարմնացաւ 'ի սրբոյ կուսէն և խաչի համ-
բերելով · միաբանութեամբ երգով բարեբա-
նեսցուք ։ Որ ըզթաղումն երեքօրեայ յանձն
էառ յարուցեալ 'ի մեռելոց իշխանութեամբ ·
միաբանու"։ (փառ.ք". Այժմ և".) Կարօղապէս
ըզդրունըս դըժոխոց խորտակեաց · եկեղեցւոյ
իւրում զգեցոյց զմեծվայելչութիւն · միաբա"։

ԱԿ

Թագաւորեաց աստուած 'ի վերայ հեթա-
նոսաց · և լուսազարդեալ պայծառացոյց սուրբ
զեկեղեցի · ժողովուրդք ըզքրիստոս բարե-
բանեսցէք ։ Զգեցաւ տէր զօրութիւն ընդ
մէջ իւր էած . քանզի չիջոյց զխայթոց մահ-
հու խաչիւն իւրով սըրբով · ժողո"։ (փառ.ք".
Այժմ և".) Ցարեաւ աստուած և տիեզերք ա-
մենայն նորափետուր զարդարեցան · և մանու

կունք հաղորդեցան մարմնոյ և արեան կե-
նարարին. ժողովուրդք ըզքրիստոս բալե"։

ԲՁ

Թագաւորին յաւիտենից մատուցուք զօրհ-
ներգութիւն որ 'ի կուսէն մարմնացաւ. հաս-
տատեայ զաշխարհս 'ի հաւատս անսասանելի.
փառք նըմա այժմ և յաւիտեան ։ Որ կամաւ
համբեր մահու խաչի աստըւած բանն. և
եհեղ զարիւն իւր սուրբ 'ի փրկութիւն տիե-
զերաց. փառք նը"։ (փառք"· Այժմ և"·) Աստ-
ուածապէս յարուցեալ 'ի նորափոր 'ի վիմէն.
լուսազարդեաց զեկեղեցի իւր սուրբ 'ի փառս
և 'ի գովեստ անուան իւրոյ. փառք նը"։

ԲԿ

Օրհնութիւն 'ի բարձունս տնօրինեցելոյն 'ի
կուսէն թագաւորին մերոյ. ալէլուիա ալէ-
լուիա ։ Օրհնութիւն 'ի բարձունս անսասանելի
և հաստատուն յուսոյն մերոյ. ալէ։ (փառք"·
Այժմ"·) Օրհնութիւն 'ի բարձունս անբաժանելի
և միանմանական սուրբ երրորդութեանն. ալէ։

ԳՁ

Զթագաւորըն քրիստոս օրհնութեամբ երգով
բարեբանեսցուք ամենայն երկիր ։ Արարողին



երկնի և երկրի մատուցուք երգով գոհա-
բանութիւն ամենայն երկիր ։ (փառք"· Այժմ"·)
Երրորդութեանն և միաստուածութեանն մա-
տուցուք պատիւ երկրպագութիւն յաւի-
տեանս ամէն ։

ԳԿ

Լուսով աստուածութեան քո քրիստոս լու-
սաւորեցեր սուրբ զեկեղեցի. պահեա զսա
անշարժ յաւիտեան ։ Տօնէ այսօր երանաւ զէմ
հաւատացելոց բազմութեամբ զնաւակատիս
սուրբ եկեղեցւոյ. պահեա ըզ"։ (փառք"·
Այժմ և"·) Բացան դրունք հաւատոյ նոր սի-
ոնի ընդունել զանմահ փեսայդ յառագաստ.
բաշխէ զմարմին քո և զարիւն. պահեա ըզ"։

ԴՁ

Թագաւոր քրիստոս էակից հօր և հոգ-
ւոյն. որ վասըն մեր մարմնացար 'ի սուրբ
կուսէն. թագաւոր փառաց քրիստոս քեզ
փառք ։ Որ կամաւոր մահուամբդ ըզմահ մե-
ռուցեր. և անապական յարութեամբդ քո
նորոգեցեր զաշխարհս. թա"։ (փառք"·
Այժմ և"·) Որ կենդանարար արեամբդ քո
լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի. երգեմք
քեզ ընդ հրեշտակս ասելով. թա"։

Դկ

Որ անքննելի յաղթող զօրութեամբ թագաւոր ես երկնի և երկրի քրիստոս աստուած. օրհնաբանեմք զքեզ: Որ փառակցութեամբ ընդ հօր վերօրհնիս յանմահից. և խոնարհեալ մարմին զգեցար փառաց թագաւոր. օրհն": (փառք": Այժմ և":) Որ կարողապէս զմահ կոխեցեր և յարուցեալ լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի անմահ էութիւն. օրհնաբա":

———

Անձինք սրբոց Հռիփսիմեանց: Դկ

Անձինք նուիրեալք սիրոյն քրիստոսի. երկնաւոր նահատակք և կուսանք իմաստունք. 'ի պարծանս ձեր բարձրացեալ տօնէ. մայր սիօն դստերօքն իւրովք: Բարբառք երկնաւորք լցին զերկիր. քանզի հոտ անուշից բուրեցայք 'ի քրիստոս. ողջակէզք բանաւորք և զոհք փրկութեան. և որոջք անարատք ընծայեալք աստուծոյ: Գեղեցկութիւնք մարմնաւոր պայծառութեան ձերոյ, յիմարեցոյց զթագաւորն և պակեան հեթանոսք, 'ի գեղ սքանչելի աստուածատուր կուսանացն, տարփացեալ զուարթունքն ընդ մարդկան տօնեցին:



Դարձեալ վերստին արարչագործ զօրութիւն. և դարձեալ եդեմ աստուածատունկ զարդարի. քանզի ծառըն կենաց տընկեցաւ 'ի դրախտին. բերելով մեզ պտուղ զերանելին Հռիփսիմէ:

Երկունք մահաբերք անիծիցըն լուծան. և ադամ վերստին աստուածակերպ ճոխանայ. փոխանակ եւայի դստերք նորա. մարտիրոսք և կուսանք ընծայեալք աստուծոյ: Զօրըք հրեշտակաց ընդ մարդկան տօնեցին. և կանայք 'ի յերկինս գրեցան զինուորք. կուսութեամբ ընդ մահու պատերազմեալք յաղթեցին. խաչակից լինելով կուսածին արարչին:

(Եւ, տես 'ի Շարականոցն:)

Հարց: Դկ

Այսօր զանյաղթելի սըրբոյն Հռիփսիմեայ զյիշատակըս տօնէ սուրբ եկեղեցի. բարեբանելով ընդ անմարմնական զինուորութիւնսն. զտէր աստուած հարցըն մերոց: Այսօր հրաւիրեցաւ յերկնից արքայութիւնըն սուրբըն Հռիփսիմէ. և արիաբար ընդդիմամարտեալ յաղթեաց բըռնաւորին խոստովանելով զքրիստոս թագաւորն. զտ": Այսօր պայծառացեալ 'ի կամարըս լուսեղէնըս սուրբըն

հռիփսիմէ․ և հիւսիսականաց տօնողաց ուսոյց փառաւորել սուրբ զերրորդութիւնն․ զն՟ ։ (Օրհնեցէ՟ք ամենայն գործք տեառն) Զոնէր Զքրիստոս թագաւորն օրհնեցէք զնա նոր երգով օրհնութեամբ։ Որ պայծառազգեաց վայելչութեամբ պսակեաց զսուրբն հռիփսիմէ և զգայիանէ․ օրհնեցէք զն՟ ։ Որոց վարդագոյն հեղմամբ սուրբ արեանցն նորոգեաց զաշակերտեալսն 'ի ձեռն սրբոյն գրիգորի․ օրհ՟ ։

Մեծացուսցէ։ Դ.կ

Զքեզ աստուածածին աղբիւր անսպառ լուսոյն որ լուսաւորէ զհաւատացեալս․ միաբանական ձայնիւ երգով մեծացուսցուք․ Դու պարծանք կուսութեան մարդկան․ դու ուրախութիւն հրեշտակաց․ դու բարձող անիծիցն․ վասն որոյ զքեզ աստուածածին մե՟ ։ Դու ճշմարիտ արևելք արեգականն արդարութեան․ յորմէ ծագեաց փրկութիւն տիեզերաց․ միաբա՟ ։

Ողորմեա։ Դ.կ

Քրիստոս աստուած բացեր զդուռն հաւատոյ սրբոյն հռիփսիմեայ․ խոստովանիլ զաստուածութիւնդ քո մարտիրոսութեամբ 'ի մէջ հայաստանեայց։ Յաղթող զօրութեամբ պայ-



ծառացեալ 'ի կամարքս լուսեղէնս ընդ անմարմնոց բազմութիւնսն․ խոստովանելով զքրիստոս թագաւորն։ Ժողովեալքս հայցեմք բարեխօսութեամբ սրբոց հռիփսիմեանցն․ ընկալ և զմեզ փրկիչ յորդեգրութիւն 'ի դպրութեան կենաց։

Տէրերկնից։ Դ.կ

Պարկեշտ կանայքն սուրբքն հռիփսիմեանք․ եղեն սիրողք քրիստոսի և ընկալան զանապական զպսակն։ Եղեն տաճար սրբութեան որդւոյն աստուծոյ․ շինեալք 'ի վերայ հիման առաքելոց և մարգարէից։ Առաւել քան զլուսաւորս 'ի մէջ աստեղաց․ փայլեն 'ի դասս հրեշտակաց դստերք վերինն երուսաղէմի։

Ձայն Դ.կ Քրիստոս աստուած, տես էջ 102։ (սկր․)

---

Շարական օրհնութեան Սանդխտոյ։ Դ.կ (Մեկ․)

Քեզ պարծի այսօր սուրբ եկեղեցի ով վըկայուհի սուրբ սանդխտ․ որ զհայրական նախնեացն քո թողեր զպաշտօն․ վասն քրիստոսի հեղեր զարիւն քո սուրբ։ Աշակերտեցար առաքելոյն թադէոսի և 'ի հաւատս ճշմարիտ

հաստատեցար ոչ խառնակելով ընդ հեթա-
նոսական պաշտօնսն · արժանի եղեր վերանալ
առ հայր ։ Որ ըղձականութեանն քո թողեր
ըզփառս և աստուածային փառօքըն զարդա-
րեցար · այսօր դասակցեալ ընդ զուարթունս
երկնից · վասըն մեր առ տէր բարեխօսեա ։

———

Օրհնութիւն Ս. Գրիգորի Լուսաւորչին ։ ԲՁ

Ով երջանիկ տէր սուրբ գրիգոր սրբութեան-
ցըն պաշտօնեայ · և առաջնորդ բանաւոր հօ-
տի ։ Ըզքեզ ունիմք բարեխօս առ յիսուս
միածինն · և աղաչօղ վասըն քո ուխտաւորացս ։
Կանխեա խընդրեա ըզթողութիւն յանցանաց
'ի քէն աշակերտելոցս ։

Ով երանելի տէր սուրբ գրիգոր ըզքեզ ու-
նիմք բարեխօս առ քրիստոս վասն անձանց
մերոց ։ Որ 'ի մոլութեանց բռնաւորին ոչ
զանգիտեցեր · ըզքեզ ու" ։ Որ ընդ անմարմ-
նոցըն դասս վերակարգեցար · ըզքեզ ու" ։

ԴԿ

Արմատ ճըշմարիտ աստուածային օրինացն ·
և հաստատութիւն հաւատոյ ազգի մարդկան
տէր սուրբ գրիգոր · 'ի մաղթողական աղօթս
քո հայցեա վասըն մեր 'ի քրիստոսէ ։ Ընտ-



րեալ յաստուծոյ քահանայապետ ճըշմարիտ ·
և հովիւ հոգևոր բանաւոր հօտի տէր սուրբ
գրիգոր · 'ի մաղ" ։ Պըսակ վայելչութեան եկե-
ղեցւոյ քրիստոսի · և առաջնորդ կենացըն
յաւիտենից տէր սուրբ գրիգոր · 'ի մաղ" ։
Որ քրիստոսանուէր կոչմամբըն ծագեցար որ-
պէս զարեգակն · և լուսաւորեցեր զհայաս-
տան աշխարհս աստուածգիտութեամբ տէր
սուրբ գրիգոր · անդադար բարեխօսեա վասն
անձանց մերոց ։ Որ քոյին առաքինասէր
ճըգնութեամբդ · վերափոխեցար 'ի լուսեղէն
երկնային խորանսն · տէր" ։ Քեւ պայծա-
ռացան եկեղեցիք քրիստոսի · փառաւորելով
ըզմիասնական սուրբ զերրորդութիւնն · տէր" ։

Թագաւոր յաւիտեան · Տէ՛․ չէրէ․ 22 ։

Հարց ։ ԴՁ

Որ առաքեցեր ըզսիրելի և զհաւատարիմ քո
պաշտօնեայն ըզսուրբ գրիգոր · և 'ի ձեռըն
նորա լուսաւորեցեր ըզհայաստան աշխարհս ·
ըզքեզ միշտ օրհնեմք աստուած հարցըն մերոց ։
Որ ետուր համբերութիւն անտանելի չարչարա-
նաց սըրբոյն գրիգորի · և նորին ժուժկալու-
թեամբըն լուսաւորեցեր ըզհայաստան աշխարհս ·
ըզքեզ միշտ" ։ Որ նորին սուրբ աղօթիւք բար-

ձեր դիտաւոր կռապաշտութեան 'ի Հայաստան աշխարհէ․ և արարեր երկրպագուս ամենասուրբ երրորդութեանդ․ ընդ քեզ միշտ օրհնեմք առաքեալ հարցըն մերոց։ (Օրհնեցէք ամենայն գործք տեառն) Ըզտէր օրհնեցէք և բարձր արարէք ընդ յաւիտեան։ Արդ եկայք հաւատացեալք և կոչեցեալք յորդեգրութիւն սրբոյն գրիգորի․ օրհնեցէք և բարձր արարէք զառաքեալսն ամենեցուն։ Ցնծութեամբ տօնեսցուք ըզյիշատակ հայրապետին մերոյ․ և ընդ նմին գովեցէք և բարձր արարէք զթագաւորն մեր քրիստոս։ Քահանայք և պաշտօնեայք հոգևորական հընչմամբ գովեցէք ընդ սրբոյ հայրապետին․ և բարձր արարէք զսուրբ զհոգին ճշմարտութեան։

### Մեծացուսցէ․ ԲՁ

Ըզկուսութիւնըդ քո աստուածածին անարատ զոր ոչ բացայայտեաց հուր աստուածութեանըն մեծացուցանեմք․ Որ յարգանդի քում անապականաբար բնակեցաւ քրիստոս աստուած է և փրկիչ անձանց մերոց․ մեծա։ Անհասանելի տէրութեան կայ և յայտնութիւն աշխարհի ծագեցաւ․ անմատոյց լուսոյն երկրպագեսցուք։



### Ողորմեա։ ԲՁ

Բարեխօսութեամբ քահանայապետին քո և վըկային․ կեցո ըզմեզ բազումողորմ։ Աղաչանօք սրբոյն գրիգորի լուր մեզ․ որ միայնդ ես բազումողորմ։ Նորին աղօթիւք, որով ուսաք ճանապարհ կենաց․ քաւեա տէր ըզյանցանըս մեր։

### Տէրերկնից։ ԲՁ

Առաջնորդ հաւատոյ և լուսաւորիչ անձանց մերոց տէր սուրբ գրիգոր․ եկայք հաւատացեալք 'ի ձեռըն նորա հանգուք աստուծոյ գոհութիւն։ Մեծ խոստովանողըն քրիստոսի և ըզչարչարանըս յանձն առող վասըն մեր տէր սուրբ գրիգոր․ եկայք լուսաւորեալք 'ի ձեռն։ Քահանայապետ աստուծոյ և պատմող աստուածային օրինաց տէր սուրբ գրիգոր․ եկայք աշակերտեալք ընդ նմա երգեսցուք փառք 'ի բարձունըս աստուծոյ։

### Մանկունք։ ԴՁ

Հրաշափառ աստուած և միշտ բարեխնամող․ որ յառաջագիտութեամբ ըզփրկութիւն հայաստանեայց ըսկըզբնաւորեալ 'ի պարթևական մեղապարտ ազգէն լուսաւորիչ մեզ շնորհեցեր․ վասն որոյ բարեխօսութեամբ սո-

րա փրկիչ կենացս ըզմեզ այժմ և 'ի քոյ ա-
հաւոր գալըստեանն: Հրաշալի զարմացմամբ
երանելին սուրբ գրիգոր. զանտանելի ըզչար-
չարանս 'ի յանձն էառ. և երիւք հընգօք ա-
մօք 'ի մէջ թունաւորացըն բնակիւր անդըն-
դային տանջանօքն 'ի վիրապին. վասն որոյ
բարեխօսութեամբ սորա փըր": Հրաշագործ քո
բանիւդ և մեծ ողորմութեամբդ. երևեալ
բըժըշկէր ըզհարուածեալսն 'ի դիւաբախ սաս-
տիցն. երկըրպագուս առնելով զամենեսեան
սուրբ երրորդութեանդ. վասն ո":

Ճաշու: Գկ (սիր.)

Զովիւ քաջ բանաւոր հօտի տէր սուրբ գրի-
գոր. հաստատեցեր զհիմունս եկեղեցւոյ 'ի
հայաստան երկրի. 'ի վերայ հիմանն սուրբ
առաքելոցն: Զովիւ բարի և առաջնորդ կե-
նացըն յաւիտենից տէր սուրբ գրիգոր. հաս-
տատեա զանձինըս մեր հաւատով ճըշմարտու-
թեամբ 'ի վերայ հիմանն սուրբ եկեղեցւոյ:
(փառ.ք". Այժմ և".) Արդ աղաչեմք ըզքեզ հայր
վարդապետ և տէր. բարեխօսեա քրիստոսի
աստուծոյ մերոյ կեցուցանել զանձինըս մեր:

Համբարձի: ԴԶ

Որ կոչեցար յորդէգրութիւն հօրն երկ-



նաւորին ով երանելի տէր սուրբ գրիգոր.
և եղեր վըկայ ճըշմարիտ քրիստոսի աս-
տուծոյ մերոյ. վասն ժողովըրդեան քո
հայցեա 'ի տեառնէ ըզքաւութիւն:
Որ համբերութեամբըդ քով տարար քեզ
ժողովուրդս սեպհական և ընտրեալս. և
նորափետուր զարդարեցեր ծընընդեամբ
սուրբ աւազանին. վա: Որ մոլորելոցս 'ի
խաւարի բացեր զդուռըն լուսոյ ճըշմա-
րիտ աստուածգիտութեան. և արժանա-
ւորս արարեր ըզմեզ ժառանգորդ լինել
կենացըն յաւիտենից. վա:

---

Ճաշու շաբաթուն Ս. Մեծին Ներսէսի: Գկ (սիր.)

Այսօր ցընծայ եկեղեցի ընդ անմարմնոցըն դա-
սակցեալ տօնելով զյիշատակըս քո տէր
սուրբ ներսէս. որ 'ի հոգւոյն սըրբոյ աղաւնա-
կերպ իջմամբ վըկայեցար. բարեխօսեա առ
քրիստոս վասն անձանց մերոց: Քահանայա-
պետ ընտրեալ արժանապէս շնորհօք հոգւոյն
բաշխեցեր զփըրկական մարմին և զարիւնըն
տեառն. յորում հրեղէն սիւն 'ի յերկնից իջեալ.
բարեխօ": (փառ.ք". Այժմ և".) Արդ աղաչեմք
ըզքեզ լուսաւորիչ հոգւոց մերոց. նըմանեալ
մովսէսի նախամարգարէին մեծի լուսափայլեալ
դիմօք աստուածահրաշ տեսլեամբ. բարեխօ":

Ճաշու Ս. Աբգարու և Տրդատայ Թագաւորացն։ ԲՁ (միր.)

Աստուած փրկիչ մեր լուր մեզ որ կարդամք առ քեզ. բարեխօսութեամբ սուրբ թագաւորին։ Որ բարեպաշտութեամբ հիմնեցոյց զեկեղեցի սուրբ. և կարգաւորեաց ուղղափառութեամբ ըզքո ժողովուրդս։ (փառ.ք". Այժմ և".) Արդ անկեալ աղաչեմք ըզքեզ մարդասէր տէր. յիշատակի սորա պարգևեա մեզ զերկնային քո զխաղաղութիւնդ։

---

Օրհնութիւն Եկեղեցւոյ։ ԳՁ

Ուրախ լեր սուրբ եկեղեցի. քանզի քրիստոս արքայն երկնից այսօր պսակեաց ըզքեզ խաչիւն իւրով. և զարդարեաց զամուրս քո անքննելի փառօքն իւրովք։ Խնդա յոյժ դուստր սիոնի. քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերստին քո նորոգմամբ. և թագաւորն երկնաւոր հաճեցաւ բնակել 'ի քեզ։ Ընդ դասս երկնաւոր զօրացն վերառեալ տօնեմք քեզ այսօր զանդադար փառատրութիւնս. ուրախ լեր հարսն անարատ անքննելին քո խորհրդով։

Խորան սրբութեան կանգնեցաւ սուրբ եկեղեցի. և քրիստոս թագաւորն 'ի սմա պատարագեալ. եկայք հաւատացեալք երգեսցուք քրիստոսի երգ նոր։ Դասք հրեշտակացն վայր իջեալ յերկնից երգեն ասելով. հրաշալի ձայնիւն եղանակելով. երգեն զերգս օրհնութեան երրեակ սրբասաց ձայնիւ։ Ուրախ լեր բերկրեաց հարսնացեալ սուրբ եկեղեցի. պայծառացո զմանկունս քո յօրհնաբանութիւն. ծագողին ըզշող լուսոյ 'ի քեզ մայր եկեղեցի։



Ճաշու։ ԳՁ (Տէրթագա.)

Այսօր ուրախացեալ ցնծան երկնից բազմութիւնքն. 'ի նաւակատիս սուրբ եկեղեցւոյ. քանզի շնորհեցաւ մեզ քահանայապետն յաւիտենից. 'ի լուսաւորել զկաթողիկէ սուրբ եկեղեցի. փառք գալստեան քո տէր։ Այսօր սիւն լուսոյ հովանի եղև մեզ 'ի բարձանց. քանզի թագաւորն երկնաւոր եկաւորի 'ի սուրբ եկեղեցի. և զօրք հրեշտակաց ծաւալեալ տօնեն ընդ մարդկան. փառ։ (փառ.ք". Այժմ և") Այսօր քահանայապետ ճշմարիտ աստուածային օրհնօքն պատուեալ. կանգնէ զքառանկիւն սեղան խաչին արժանապէս պատարագեալ բաշխէ զմարմին և զարիւնն տեառն. մաք-

րապէս մերձեցարուք փրկեալք նոր ժո-
ղովուրդք. և հայցեցէք 'ի քրիստոսէ զի շնոր-
հեսցէ ըզսա մեզ ընդ երկայն աւուրս։

---

Ճաշու Տաղանակէն։ Ա. կ

Որ 'ի սկզբանէ իմաստութեամբ հաստատեցեր
զեկեղեցի հօր իմաստութիւն. զոր նախանըկարի
տեսութեամբ նըշանակեաց մովսէս խորա-
նաւն երկնահանգոյն 'ի սինայ լերինն. լուսա-
ւորելով փառօքն աստուծոյ։ Որ ըզխոր-
հուրդ անապական տնօրէնութեանըդ քոյ 'ի
սըրբոյ կուսէն. տըպաւորելով տապանակն
աստուածային ուխտի կատարմանց բանիդ
աստուծոյ. փառաց անեղիդ տեղի հանդըս-
տեան։ Որ 'ի կեանս վերադարձի բնութեանս
դարձմամբն յորդանանու օրինակեցեր. և ըզ-
բըռնութիւն մահու և դըժոխոց կործան-
մամբն երիքովի տապանակաւ խաչին հրաշա-
գործեալ նոր իսրայէլի. օրհնութիւն քեզ
տէր երգեսցեն մանկունք։



Օրհնութեան Վարդավառի Ա. ձայն։ (հմբր.)

Որ 'ի լերինն այլակերպեալ ցուցեր զաստուա-
ծային քո զօրութիւնդ. զքեզ փառաւորեմք
իմանալի լուսոյ։ Որ զճառագայթ փառաց քոց
ցուցեր արեգակնակերպ փայլմամբ զարարա-
ծըս լուսաւորեցեր. զքեզ փա՛։ Որ ահագին
տեսլեամբ զարհուրեցուցեր ըզքո զաշակերտսն
'ի թըմրութիւն հրաշիցն 'ի սէր աստուածային
փառաց քոց. զքեզ փա՛։

Երևի երբեմն աշակերտացըն հրաշալի տես-
լեամբ. պայծառացեալ 'ի թաբոր լերինն։
Եւ զերրեակ միութեան զանուանելի ըզլոյսն
տեսանելով կենդանուոյն մահացան։ Հանդի-
պեալ նախահարցըն տեսութեամբ հայցէին
'ի տեառնէ. աստ բարւոք է մեզ աստ լինել։
Արասցուք երիս տաղաւարս տեառն և մովսէ-
սի և եղիայի. և փառաւորեսցուք հանապազ
զերրեակ միութիւնն։

Ալէլուք։

Ալէլուիա ալէլուիա ալէլուիա։
Քո են երկինք և քո է երկիր. զաշխարհս ըզլ-
րիւ իւրով դու հաստատեցեր։ Զհիւսիս և
զհարաւ դու արարեր. թաբոր և հերմոն յա-
նուն քո ցընծասցեն։

Ալէլու"։ Բարձրութիւնք լերանց նորա են. Նորա է ծով և նա արար զնա. և զցամաք ձեռք նորա ստեղծին։ Եկայք երկրպագեսցուք նմա. անկցուք և լացցուք առաջի տեառն արարչին մերոյ։

փառք և երկիր"։ Այժմ և"։ Ալէլու"։

Մանկունք։ Դկ

Լերինք ցնծացեն առաջի քո տէր. որ երևեցար ի փառս աստուածութեան քո. միասնագամ գուշակելով զգալուստն. վասն որոյ աստուածային լուսով զարդարեալ զքեզ հրաշալի ձայնիւ. ընդ երկնայինսն երկրածինքս զքեզ բարեբանեմք ի Թաբօր լերինն։

. . . . . . . . . . . . . . .

Ճաշու։ Դկ (մեծա.)

Ուրախացիր պսակ կուսից տիրամայր այսօր որդին քո զհայրենին փայլեալ զգեստ. Նըմա յաւէժ յանձն առ զանձինս մեր։ Նըմա Մովսէս և Հեղիաս սպասեն. յանուն նորա ցնծան Թաբօր և Հերմոն. Նը"։ (փառք". Այժմ և".) Եսայեաս զքեզ թեթև ամպ ետես և հայր յամպոյն զքո զորդին իւր դաւանեաց. Նը"։



Մանկունք [illegible] Բ. [illegible]։ Բկ Սանդմ։

Օրհնեցէք մանկունք ընդ երկնայնոցն զհայրն երկնաւոր. որ մարմնացեալ բանին վկայեաց յերկնից այսօր ի Թաբօր լերինն։ Գովեցէք ընդ սերովբէսն զորդին միածին. որ փայլեաց մարմնով զլոյս աստուածութեանն այսօր ի"։ Բարեբանեցէք ընդ քերովբէսն զհոգին ճշմարիտ. որ լուսափայլ ամպովք էակցին հովանացեալ այսօր ի Թա"։

Ճաշու։ Բկ (Տէրթագա.)

Ճառագայթ փառաց հօր որդիդ միածին. որ զլոյսդ անվայրափակ մարմնով պարագրեալ. այսօր ի Թաբօր փառօք փայլեցեր։ Որ անտես սրովբէիցն անհաս ի վեր քան զբան. ծառայի կերպիւ պարածածկեալ զլոյսդ անստուեր. այսօր ի"։ (փառք". Այժմ և".) Որ հրեղինացն անմերձենալի հուր աստուածութեանդ. ի հողեղէնս խոնարհեալ լոյսդ արփիական. այսօր ի"։

---

Ճաշու Շողակաթն. ԴՁ (Տէրթագա.)

Որ հաստատեցեր բանիւ զեկեղեցի քո քրիստոնեայս ի վերայ առաքելական վիմի. երգել ի սմա զերգս հոգևորս. կանգնեալ ի սմա

սեղան սրբութեան․ բաշխէ զմարմին իւր և զարիւն․ և տայ 'ի ամենէ մեզ նորոգութիւն 'ի թողութիւն մեղաց մերոց։ (փառք․ Այժմ և․) Իջեալ հոգւոյն սրբոյ աղաւնակերպ երևմամբ 'ի վերայ մարմնոյ և արեանըն տեառն 'ի բժշկութիւն հոգւոց մերոց։

---

Օրհնութիւն վերափոխման Ա․ աւուրն ։ ԴՁ

Այսօր ժողովեալ սրբոցն 'ի մասին երանելի առաքելքն և սուրբ կուսանքն․ ջահազգեստուք պայծառացեալք լուցանէին ըզ լապտերս իւրեանց․ և միաձայնեալ ասէին օրհնեալ ես ամենօրհնեալդ 'ի կանայս։ Այսօր դնելով ըզսուրբ կոյսն առ դրանըն գերեզմանին․ սպասէին և ակնունէին տեառն իսկ ինքնին գալով գեր 'ի վերոյ տեսեալ զարարիչն եկեալ բազում հրեշտակօք․ և նոցա միաձայն"։ Այսօր տեսեալ ըզսուրբ կոյսըն թռուցեալ յօդս․ և ամպեղէն կառօքն 'ի վեր համբարձեալ յերկինս․ մտանելով յերկնային խորանսն ընդ իմաստուն կուսանսն․ և նոցա միաձայն"։ Այսօր ընդ բազմաչեայ քրովբէսն և ընդ վեցթևեան սրովբէսն մտանելով յեօթնաստեղեան խորանսն․ տեսանելով զզանազան աթոռսըն զոր պատրաստեալ է քեզ



տէրունւոյդ․ երգեմք և մեք ասելով օրհ"։ Այսօր զաղաւնիքըն յանցանաց նախամօրն ըզ կուսութեանց մայրն․ փոխադրեաց բանն աստուած յերկնայինսըն դասելով յաստուածակերտ խորանսն և յանպատում 'ի կեանս․ վասն որոյ հըրճուազական ձայնիւ քեզ երգէ եկեղեցի սուրբ ըզնոր զօրհնաբանութիւն։ Այսօր տիրամայր սրբուհի կոյսն․ աւանդեալ ըզսրբասնեալ հոգին 'ի ձեռըն հրեշտակաց դասուցն․ որպէս գերափառ փափկեալ ահեղիցըն նըմանեալ հրեղինաց դասուցն․ վասն ո"։ Այսօր վերամբարձեալ ըզ մաքրական մարմինն աստուածամօր կուսի․ անմարմին զուարթնոցն ամփոփեալ 'ի տեղի գերակայիցն․ յերևելի ըզգայութեանց անճառելի մտանել հաղորդս․ վասն ո"։ Այսօր յուսապատար խընդութեամբ և յաւէժաբար հընչմամբ․ նուագեմք քեզ հողեղէնքս ընդ հրաբունս սերոբիցն․ տօնախմբելով զյիշատակ կուսին աղախնոյ և մօր քոյ․ վասն"։

Հարց ։ ԴՁ

Որ զնախամօրն ըզյանցանս երկանցն եբարձ և զորդիդ քո միածին մարմնով ծընաւ․ այսօր առ 'ի մէնջ 'ի վերին զօրսըն փոխե-

ցեր զնախաստեղծին ծընունդըն · զոր միշտ ունիմըք բարեխօս առ քեզ տէր աստուած հարցըն մերոց ։ Որ էակիցդ ես հօր և սուրբ հոգւոյն · մարմնանալ 'ի յանձն առեր 'ի սըրբոյ կուսէն · այսօր փոխադրեալ դասեցեր յերկնային խորանսն ըզքոյին ծընողըն · զոր"։ Որ յամենայնի ես լըցուցիչ բարեխնամ սուրբ հոգի · այսօր պարգևօք հանգուցեր յանպատում 'ի կեանս ըզկուսութեանց ըզմայրըն · զոր"։ ( Օրհնեցէք ամենայն գործք տեառն ) Ըզտէր օրհնեցէք Բարձր արարէք ըզծընօղ անտանելի բանին ըզմիշտ կոյսն · Որ 'ի կուսական դասակցութեանց և 'ի սըրբոց ճըգնաւորաց փառաբանիս սըրբուհի ուստի և մեք հաւատացեալքս վերապատուեմք ըզփոխումըն քո 'ի յերկինս · որ առաւել բարձրացեալդ ես յաւիտեան ։ Զքարեբանեալդ անդադար միշտ 'ի վերին զօրաց և ըզվերափոխեալդ 'ի դասս առաքելոց և մարգարէից · ընդ որս և մեք հաւատացեալքս վերապատուեմք ըզքոյին աստուածամայր ըզհանգըստեան տօնս · որ առա"։

Մեծացուսցէ ։ Դ Ձ

Խորանայարկ կամարանըման յօրինեցար սուրբ կոյս աստուածածին · զանհասանելի



զբանն աստուած բնաւորապէս անսերմնաբար կրեցեր 'ի քում որովայնի · անդադար երգով ըզքեզ միշտ մեծացուցանեմք ։ Դուռըն երկնից ըզծագումն անճառելի անապական որ 'ի հօրէ առաքեցաւ · 'ի գիրկըս քո բարձեալ կրեցեր դիեցուցանելով մարմնացելոյն 'ի քէն ըզկուսական քո սուրբ ըզկաթն · անդա"։ Տեղափոխեալ զքեզ 'ի վերնական 'ի կառըս քերովբէական աստուածամայր · սպասաւորեալդ 'ի սերովբէից և երկըրպագեալդ յանմարմնական զօրաց · անդա"։

Ողորմեա ։ Դ Ձ

Որ ունիս իշխանութիւն մահու և կենաց քրիստոս թագաւոր փառաց · ողորմեա մեզ աստուած ։ Տօնելով ըզյիշատակ կուսի աստուածորդւոյ մօր հըրճուէին հրեշտակք 'ի յերկինս և ցընծան դասք առաքելոց և մարգարէից ընդ կուսական տօնս · ողորմ"։ Քեզ միայնոյ մօր և կուսի մաղթեմըք հայցելով 'ի քէն · բարեխօսեա անդադար առ որդիդ քո և աստուած մեր · փըրկել ըզմեզ 'ի փորձութենէ և յամենայն վըտանգից մերոց ։

Տէրերկնից ։ Դ Ձ

Անըսկիզբըն աստուած անհասանելի բնութիւն,

և հանգուցեալ ՚ի հրեղէն կառս. վասն որոյ
գովելով ասեմք օրհնեալ ես հայր անսկիզբն
աստուած: Մարգարէատեսիլ և ծիրանազգեաց
հրաշափառագոյն կոյս. զոր առեալ որդւոյ
վերափոխեալ դասեաց յանպատում ՚ի կեանս.
վասն որոյ գովելով ասեմք օրհնեալ ես որդի
միածին աստուած: Անհասանելի հոգւոյն զօ-
րութիւնն. որով փարեաց համատարած լոյսն
ըզկուսական անձամբն. վերափոխելով յանպատ-
մելի և յանհասանելի և յանանց լոյսն. վասն
որոյ բարեբանելով ասեմք օրհնեալ ես հոգի
ճշմարիտ աստուած:

Ալէլուիա, Մայր սուրբ և ճաշու, տես էջ 3—7, 15:

———

Օրհնութիւն Վերափոխման Բ. աւուր: Գկ

Այսօր զանճառելի ծնընդեան քո տէր զըս-
պասաւոր խորհրդոյ ՚ի հողանիւթ գոյացու-
թեանց փոխադրեցեր ՚ի յերկինս: Այսօր
զանտանելի բանիդ բարձող ըզքերովբէն հո-
ղեղէն. բարձրացուցեր ՚ի աստորնայնոցս գե-
րակայիցն կայանս: Այսօր զանապական
կոյսն որ ըզքեզ մաքուր կաթամբ կերակ-
րեաց. ՚ի զգայական փոխեալ բնութեանց
յիմանալեացն խորանս:



Լոյսն անքննելին ծագեալ ՚ի ծոց հօր. որ ծա-
գեցաւ ՚ի քէն մայր և կոյս. այսօր իջեալ
անմարմնական դասուք հրեղինացըն փոխադ-
րեաց ըզքեզ լուսափայլ ամպովք ՚ի լոյսն ան-
ըստուեր: Բանն անմարմին որ ՚ի քէն մարմնա-
ցաւ. և ՚ի գիրկըս քո բարձեալ կրեցաւ մա-
րիամ. այսօր եկեալ բազմութեամբ զօրօք
հրեշտակացըն վերացոյց ըզքեզ հրակերպ կա-
ռօք ՚ի լոյսն անըստուեր: Ի տեսիլ հրաշից
փառաց միածնին. զուարճացան դասք առա-
քելոցն. և ընդ վերինսն զուարթունսըն հա-
մաձայնեալք. նոր օրհնութիւն քեզ եղանա-
կէին օրհնեալդ ՚ի կանայս:

Հարց: Գկ

Որ զմիածնի որդւոյ քո զընակարան զնախա-
մօրն երկանց բարձող. այսօր դարձուցեր ՚ի
փառս առաջին. ըզքեզ բարեբանեմք ա-
ստուած հարցըն մերոց. Որ զ՚ի ծոցոյ հօր
հոգւոյդ ըզծագօղն որ մարմնով ծընաւ ըզքեզ
այսօր փոխեցեր ՚ի կեանս անպատումս. ըզ՛՛:
Որ զփառակցի հօր հոգւոյդ ըզտաճար զառ
՚ի քէն հովանացեալն. այսօր հանգուցեր ՚ի
լոյսն անմատոյց. ըզ՛՛: (Օրհնեցէք ամենայն
գործք տեառն) Ըզտէր ընդ որդւոյն միածնի

զմայրն ամենօրհնեալ մարիամ. գովելով բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այսօր ընդ վերին զուարթնոց երկնից. որք վայր իջեալ ընդ միածնին 'ի փոխումն աստուածամօրն երգէին. օրհնեցէք ըզհայրն երկնաւոր. բարձր ա"։ Այսօր ընդ դասուց սերովբէից որք պարակցեալ շուրջ ըզգերեզմանաւ սրբոյ կուսին եղանակէին. գովեցէք զորդին միածին բարձր ա"։ Այսօր ընդ հրեղէն քերովբէիցն. որք ըզքերոբէն հողեղէն վերհամբարձին ձայնիւ փողոյ 'ի յերկինս. բարեբանեցէք ըզհոգին ճշմարիտ բարձր ա"։

Մեծացուսցէ։ Դկ

Աստուածածին ամպ լուսաւոր. որ ըզզօրըն կենաց հեղեր յերկիր բանաւոր. և զնախամօրըն շիջուցեր պարտեացն ըզհուր. անդադար ձայնիւ զքեզ բարեբանեմք և հոգևոր երգով մեծացուցանեմք։ Տեղի անտանելի բանին. և երկիր վայրափակ յորում լոյսն ագանիցի. և արևելք արեգականն արդարութեան. անդա"։ Զքեզ կատարումըն մարգարէից. կուսական քո ծննդեամբ որով բնութեանըս քակտեցան օրէնք. հրաբուն սեռիցըն փոխադրեալ 'ի լուսաճեմ խորանն. ան"։



Ողորմեա։ Դկ

Որ անմարմին բնութեամբ աստուածութեան քո տէր. միացար մարմնով յարգանդի կուսին անշեղապէս գոլով. այսօր փոխեցեր զուրախութիւնդ երկնի և երկրի յանդորրում 'ի կեանսդ. աղաչանօք մօր քո ողորմեա մեզ որդի աստուծոյ։ Որ անապական մարմնով ծընար 'ի սուրբ կուսէն. և 'ի խանձարուրըս պատեցար արկող ըզլոյս և 'ի մըսուր հանգեար. այսօր ըզկուսութեանց ըզմայրըն հանգուցեր 'ի լուսեղէն խորանս. ա"։ Որ 'ի քերոբէական աթոռ նըստիս ընդ հօր և սուրբ հոգւոյն. հաճեցար բառնիլ մարմնով 'ի գիրկըս կուսին և կաթնասուն եղեր. այսօր քերովբէիւք վերհամբարձեր յաթոռ փառաց ըզհողեղէն քերովբէն. աղաչա"։

Ցերեկին։ Դկ

Այսօր զուարճացան հրեշտակք 'ի յերկինս. ընդունելով յերկրէ զմայր բանին աստուծոյ յիմանալի խորանս անմահից։ Այսօր ցընծացան դասք առաքելոցն. տեսանելով զտէրըն տերանց խոնարհեալ յաւանդումն ամենասուրբ հոգւոյ մօր և կուսի։ Այսօր և մանկունք եկեղեցւոյ. ուրախութեամբ տօնեն

յերկրի ըղձիւխումըն կուսին յերուսաղէմ քա-
ղաքըն վերին .

Ճաշու Աստուածածին ամպ". ԴԿ (մեծա.) տես էջ 122։

Օրհնութիւն Յովակիմայ և Աննայի ։ ԱԿ

Որ նախիմաց իմաստութեամբ տնօրինեցեր ըղ-
խորհուրդ սուրբ եկեղեցւոյ . խորագոյն ար-
կեալ հիմունս հաստատութեան ըղդասս ար-
դարոց . աղաչանօք սոցա խընայեա 'ի մեզ։
Որ զօրհնութիւն նախաստեղծիցն աստուածա-
զօյգ արուաց և 'ի գաց . պայծառացեալ վա-
յելչապէս ծաղկեցուցեր այսօր 'ի յովակիմ
և 'ի յաննայ . աղա"։ Որ ըղխոստումն աբ-
րահամու նահապետին մեր ըստ հոգւոյ . քա-
հանայական և թագաւորական գաւազանա-
ցըն միացեալ ցուցեր այսօր 'ի յաննայէ . աղ"։
Անըսկիզըն աստուած անճառելի անբաւ զօ-
րութիւն . որ 'ի սկզբանց յաւիտենից խնամար-
կեցեր զորդիս ադամայ . գերագոյն այսօր
շնորհիւ փայլեալ ցուցեր ծընընդեամբ
զմայր միածնի դ քո ընտրելոյ . աղա"։ Որ յա-
նէից բանիւ գոյացուցեր զաշխարհս ամենայն .
այսօր մարդասիրեալ տնօրինաբար 'ի յան-



նայէ արկեր հիմունս նորոյ աշխարհի . աղա"։
Ի յամուլ երկրէ այսօր բուսաւ մեզ բարեբեր
բողբոջն բարի . շուշան հովտաց ծաղիկըն
դաշտաց միամայրըն մարիամ արմատ ընկոյն
անմահութեան . աղաչա"։

Հարց ։ ԴՁ

Որ 'ի վերայ քերովբէից նըստեալ հանգչիս
բանդ աստըւած . այսօր հրաշափառ
պարգևօք ցուցեր ծնընդեամբ 'ի յաննայէ
յաթոռ փառաց յերկրի զսուրբըն մարիամ .
օրհնեալ տէր աստըւած հարցըն մերոց ։
Որ 'ի լերինըն քորեբայ փայլատակեալ հուրդ-
աստուածային հողմով և շարժմամբ յայտ-
նեալ 'ի պակուցումըն սուրբ մարգարէին .
այսօր գըթութեամբ և ողորմութեամբ
յարմարեցեր տեղի իջման անճառելի խոնար-
հութեամբ 'ի յօդ հանդարտ զօրինակեալըն
մարիամ . օրհ"։ Որ 'ի կանուխ ժամանակաց
ստորագրեցեր զտնօրէնութեան քո ըզտեղի
տաճար և քաղաք շինեալ բարձող անուա-
նըդ քում բարձրելոյ . այսօր ստուգապէս
յայտնեալ ցուցեր բնակարան աստուա-
ծութեան քո զսուրբ կոյսըն մարիամ . օրհ"։
(Օրհնեցէք ամենայն գործք տեառն) Ըզտէր

օրհնեցէք Բարձր արարէք ըղծընեալն այսօր
ըղմայր մաքուր բանին ըղմիշտ կոյսն։ Որ 'ի
զօրաց հոգեղինաց երգաբանեալ սըրբուհին.
ըզծընեալն այսօր օրհնօք բնութեան զմայրն
աստուծոյ բանին 'ի վեր քան ըզբնութիւնս.
Բարձր արա"։ Որ 'ի դասուց մարգարէից և
յերջանիկ առաքելոցն օրհնաբանեալ տի-
րուհին. ըզպուծիչ երկանցն և այր զմայ-
րըն կենաց ծընեալն այսօր 'ի յաննայէ.
Բարձր արա"։

Մեծացուսցէ ԴՁ Առաւօտ խաղաղութեան. տես էջ 20։

Ողորմեա։ ԲՁ

Անճառելիդ աստուած անզըննական 'ի հրե-
ղինաց. այսօր հաճեցար 'ի հողեղինաց
յայտնել Թարգման աստուածութեանըդ քո
զմիշտ կոյսըն մարիամ. աղօթիւք սորա ո-
ղորմեա մեզ աստուած։ Անժամանակ ծո-
ցոյ ծընողդ հօր էական. այսօր սըրբե-
ցեր յորովայնէ ժամանակաւ մայր 'ի մորէ
անճառ միաւորութեամբ. աղօ"։ Ցառաջ
քան զարուսեակ անմայր ծընողդ հօր 'ի
յերկինս. այսօր ըզնորեցեր ի մաստու-
թեամբ զմայր անարատ անհայր ծնընդեան
քո 'ի յերկրի. աղօ"։



Տէրունիյ։ ԴՁ

Թագաւոր փառաց աստուած հոգիդ կենդա-
նարար. 'ի շնորհաբաշխ աւուր մեծի ծննդեան
մարիամու դըստեր դաւթի Թագաւորի ց.
նորոգեա զկենդանութիւն մերոյ Թագաւո-
րի"". զի օրհնեսցուք ըզքեզ տէր այժմ և
յաւիտեան։ Աղբիւր կենաց և փրկութեան
մերոյ հոգի հօր և որդւոյ. 'ի յարմատոյն յես-
սեայ ըղխման դաւազանի հասեալ ժամ ց.
շնորհազարդ պայծառացո զգաւազան իշխա-
նութեան մերոյ հայրապետի"". զի օրհ"։
Լրումն աշխարհի և ճառագայթ իմանալի հո-
գիդ սուրբ աստուծոյ. 'ի ցընծութեան աւուր
լըրման ուրախութեան յովակիմայ և աննայի ց.
աղօթիւք սոցա լըցո զպէտըս կարեաց հայաս-
տանեայց եկեղեցւոյ. զի օրհնես"։

Ճաշու։ ԴՁ (մեծա.)

Որ 'ի բարձրութիւնս երկնից բարձրըր բանիւք
բարեբանիս սըրբուհի. 'ի լերբանանէ
դիմեալ՝ հարսն ըզգեցեալ այսօր զարեգակն
արկեալ ըզքև և ընդ ոտիւք զլուսին ըստո-
ւերատեսակ. օրհնութեամբ երգով եկեղե-
ցէք տիեզերաց այսօր տօնեն ըզյիշատակ ծնըն-

դեան քո 'ի մօրէ: վեհագոյն սերովբէից և բազմաչեայ քերոբէից տիրամայր աստուածածին. տապանակ կտակի սափոր ոսկի խորհրդաւոր խորան բանին հօր բարձրելոյ. օրհնութեամբ եր": Մարգարէից հանդիսարան և գրաւական կենաց մարդկան մարիամ աստուածամայր. ընդունարան եօթնարփին շնորհաց խարիսխ յուսոյ հաստատութեան զուգաթիւ աւուրց դարուցս անցաւորաց. օրհնութեամբ եր":

———

Օրհնութիւն ծննդեան Ս. կուսին Մարիամու : Գ կ

Երգեցէք որդիք սիօնի երգ նոր 'ի ծննդեան մօր տեառն. քանզի որ ծնաւ զանժամանակն 'ի հօրէ ծնեալն՝ այսօր ծնաւ յամուլ արգանդէ. տուք օրհնութիւն տօնողին մեզ ըզմայրըն լուսոյ: Ցնծացէք որդիք մարդկան այսօր ծննդեամբ սրբուհւոյ կուսին. քանզի որ տարաւ զանտանելին յարգանդի անսերմնապէս այսօր բղխեաց յարմատոյն յեսսեայ. տուք": Ուրախութիւն աշխարհի ծնաւ զմարիամ ամուլն աննա աւետեօք զուարթնոյն. որ ըզտըւօղն օրինաց հընոյն ծնաւ մարմնով պարգևին նորոյս կտակի. տուք": Խընդա մայր



բանին 'ի հօրէ ծնեալ նախ քան զարուսեակ. որ ըզլոյսն երկնային ծագեցեր մարդկան ըզլուծիչ մեղաց մըթութեան. մաղթեա բանին փրկել ըզմեզ 'ի մեղաց մերոց:

Այսօր լցաւ խոստումն աստուծոյ առ նահապետսն 'ի զաւակի նոցին օրհնել զամենայն ազանց. զի յարմատոյ նոցին բղխեաց կոյսըն սուրբ որ ծնաւ ըզբանըն բարձօղ մեղաց նախահօրն. փառք տացուք տօնողին մեզ զօրհնեալըն 'ի կանայս: Այսօր բուսաւ յաննայէ մորենին մարիամ յոր վառեցաւ հուրն աստուածային. զոր եաես մովսէս զօրինակ կուսին 'ի սինա լըցեալ լուսովն անմատոյց. փառ: Այսօր դառնինքն օրինականքըն յովակիմ և աննա ետուն մեզ ըզդեղմն ընդունին ըզցօղն երկնային. յորմէ հոսեաց անձրևըն կենաց և բղխեաց աշխարհի աղբիւրն իմաստից. փառ: Այսօր ծնաւ մայրն ամուլ ըզքեզ յարմատոյն յեսսեայ ծառ կենաց ծաղկեալ տիրուհի. որ ետուր մարդկան 'ի ժամու ըզպտուղ զհացըն կենաց զիջեալն 'ի յերկնից. բարեխօսեա սրբուհի վասն անձանց մերոց:

Հարց : Դ Կ

Որ ընախագրեալն յառաջագոյն գուշակութեամբ մարգարէիցն. կատարեցեր հայր երկ-

նաւուր տալով ընկալաւ 'ի յանձնայէ · ընդե՛՛ղ բա՛-
րեբանեմք ա՞ստուա՜ծ հա՛րցըն մերո՛ց ։ Ո՞ր
'ի լրո՜ւմն անճառ ծնընդեան ըստ եսայեայ քո
'ի կուսէն · այսօր հրաշիւք հօր միածին յամուլ
մօրէ ըզմայրըն քո պարգևեցեր · ըղ՛՛ ։ Ո՞ր զօ-
րինա՜կ մարիամու հոգւոյդ ցուցեր մարգարէին ·
այսօր զաւակ յովակիմայ ետուր ըզլեառըն վի-
մածին · ըղ՛՛ ։ ( Օ՞րհնեցէ՞ք ա՞մենայն գործք
տեառն ) Ըզտէր օրհնեցէք բարձր արարէք ըզ-
նա՞ յաւիտեա՛ն ։ Զօ՞ւարճացի՜ր սիոնըդ հին
հանդիսարան տեառնողացն · որ բազմազոյն օ-
րինակօք գուշակեցեր ըզծնող բանին տեառն
աստուծոյ · բարձր ա՛՛ ։ Ո՞ւրախացի՜ր եկեղեցի
դուստրըր վերինըն սիոնի · քանզի ծընաւ 'ի յան-
նայէ մաքուր ծընող քոյն փեսայի · բարձր ա՛՛ ։
Քա՞հանա՜յք և ժողովուրդք տօնախըմբօղք
ծնընդեան կուսին · ը՞նդ յովակիմայ և աննայի
ծնողաց սըրբոյ ծնողի բանին · բարձր ա՛՛ ։

Մեծացուսցէ Դ Կ Նահապետացն աբրահա՛՛ · փէս էջ 42։

Ողորմեա ։ Բ Կ

Որ ողորմեցար 'ի մեղըս ծընեալ մարդկան հայր
երկնաւո՛ր ըստ մարգարէին · և ետուր բնու-
թեանս այսօր պարգև ըզկոյսըն սուրբ ըզծնո՛ղ
որդւոյդ միածնի · մաղթանօք սո՛րա՞ տէր մեզ
ողորմեա՛ ։ Որ ցօղեցեր 'ի մեզ յամլոյ օրհնաց



որդւոյդ այսօ՛ր զկոյսըն մարիամ · յորմէ ծընար
մարմնով և բարձեր նովաւ ըզմեղս նախա՛ստեղ-
ծին ադամայ · մաղթ՛ա՛՛ ։ Որ մաքրեցեր հոգւոյդ
սուրբ ըզսիրտ և զարդանդ մօր քո փառակցին ·
այսօր ամուլ ծնողաց նորին ետուր ըզմայր բա-
նի՛ն զօրհնիչն եւայի · մաղթ՛ա՛՛ ։

Տէրերկնից ։ Բ Կ

Այսօ՛ր ցընծան երկնայինքըն և պա՛ր առեալ
'ի բարձունս · երգե՛ն զերգըս հոգևորս յա-
ւո՞ւր ծնընդեան սըրբուհւո՛յն ։ Այսօ՛ր վե-
րինըն սիոն գոչէ՛ զերգըս սրովբէիցն · զերե՛ք-
սըրբեանն ասելով յաւ՛՛ ։ Այսօ՛ր աստեղք և
լուսին ընդ ա՛րևու հըրճուելով · գովե՛ն ըզ-
լոյսն 'ի հօրէ յաւո՞ւր ծնընդեան լուսոյ մօ՛րն ։
Այսօ՛ր ծերքն օրինականք մանկա՛մբք նորոյ
սիոնի · երի՛տասարդք և կուսանք խընդա՞ն
ծնընդեամբ տիրուհւո՛յն ։ Այսօ՛ր գունդք ա-
ռաքելոցն և պա՛րըք նախատեսացն · յաւո՞ւր
ծնընդեան մօր բանին երգե՞ն ըզփառս 'ի
բարձո՛ւնս ։

Ճաշու ։ Գ Կ (մեծա.)

Ծա՛ռ կենաց տընկեալ յադին սուրբ կոյս · որ
ըզհայրածինըն ըղխեցեր ըզծաղի՛կ և ետո՛՞ւր
'ի ժամու զորդին պըտուղ մարդկան · զորոյ

զմարմինըն ճաշակեալ անմահացայք յուսով ․ վասն որոյ օրհնաբանեմք ըզքե՞զ յաւուր քո ծննդեան ։ Բա՛նաւոր երկիր տիրուհի և անդաստան մաքուր ՛ի փչոյ մեղա՛ց ․ որ ըզբո՛՛յն երկնային առանց սերման ծընար ․ որով զկենացն ետուր ըզհաց աւեալ բնութեանս ․ վասն ո՛՛ ։ ( փառք՛՛ ․ Այժմ և՛՛ ։ ) Ա՛մպ թեթև յերկրային ցանկութեանց սուրբ կոյս ․ և վառարան աստուածային բոցո՛յն ․ որ ըզցօ՛՛ղն հայրաբուղխ անձրևեցեր ՛ի բանական երկիր ․ որով բնութեանս բուսան արդարութեան սուրբ բոյսք ․ վասն ո՛՛ ։

Ճաշու Նաւակատեաց խաչի ։

Սեղան քո տէ՜ր զօրութեա՛նց հաւատո՛վ կանգնեցաւ ՛ի խորանի՛ քում ․ եկա՜յք ժողովո՛ւրդք երկրպագեսցո՛ւք ։ Վէ՛մ պատուական ՛ի խորանի քում հիմնեցաւ ա՛յսօր ․ եկա՜յք ժողո՛՛ ։ Ի սմա՛ մատուցա՛ւ ճըշմարի՛տ պատարա՜գ և զենումն անապական ․ եկա՜յք ժողո՛՛ ։



Օրհնութիւն վերացման Ս. խաչի ։ ԱՁ (հմբրձ.)

Որ զանարատ բազուկըս քո ․ (Տե՛ս էՂ 74.)

Սուրբ խա՜չն օգնակա՛ն հաւատա՜ցե՜լո՛ց կանգնեցա՛ւ ՛ի յերկրի՞ յա՛ղթօ՛ղ թըշնամւոյն ․ եկա՞յք ժողովո՛ւրդք երկըրպագեսցո՛ւք ։ Արարի՜չն աստըւա՛ծ բարձրացա՜ւ ՛ի խաչի՛ն և զմեռեա՛լըս մեղօ՞ք փա՛յտի՛ն ճաշակմամբ ․ ՛ի սմա՞ նորոգեա՛լ կե՜նդանացո՛յց ։ Ի միւսանգա՜մ գալըստեան աստուա՛ծո՜րդւո՛յն սուրբ խա՛չն երևի՛ և լուսաւո՞րէ ․ զի նա է յո՛յս հաւատացելո՛ց ։

Ալէլուիա խաչի ։

(ԱՁ) Ալէլուիա ալէլուիա ալէ՞լուիա ։
Ցո՛ւպ քո և գաւազան նոքա մըխիթարե՞սցեն զիս ։ Պատրա՛ստ արարեր առաջի իմ ըզսեղան ․
ակն յանդիման նեղչա՞ց իմո՛ց ։
Ալէլու՛՛ ։ Ետո՛ւր երկիւղածաց քոց նըշան ․ զի ապրեսցին յերեսաց ա՞ղեղան ։ Որպէ՛ս փըրկեցան սիրելիք քո ․ կեցո աջով քով և՞ լուր մե՛զ ։ փա՛ռք և երկըրպա՛՛ ։ Ա՛յժմ և մի՛շտ՛՛ ։ Ալէլու՛՛ ։

(ԱԿ) Ալէլուիա ալէլուիա ալէ՞լուիա ։
Նե՛տք քո սըրեալ են հըզօր ․ և ժողովուրդք ՛ի ներքոյ քո անկցին ՛ի սիրտըս թըշնամեաց թագա՞ւորի ։ Աթո՛ռ քո աստուած յաւիտեանս յա-

ւխտենից · գաւազան ուղղութեան գաւազան արքայո՞ւթեան քո՛։

Ալէլու"։ Տո՛ւր զօրութիւն ծառայի քո · կեցո զորդի աղախնոյ քո · և արա առ իս նշան բա՞րութեան ։ Տեսցե՛ն ատելիք իմ և ամաչեսցեն · զի դու տէր օգնեցեր ինձ և մխիթարե՞ցեր զի՛ս։

փա՛ռք և երկրպա"։ Ա՛յժմ և միշտ"։ Ալէլու"։

(ԲՁ) Ալէլուիա ալէլուիա ալէ՞լուիա ։

Խնա՛ւր երկիւղածաց քոց նշան · զի ապրեսցին յերեսաց ա՞ղեղան ։ Որպէ՛ս փրկեսցին սիրելիք քո · կեցո աջով քով և՞ լուր մե՛զ։

Ալէլու"։ Դո՛ւ պատրաստեցեր զուղղութիւն և զիրաւունս · և զարդարութիւն յակոբայ դու ա՞րարեր ։ Բա՛րձր արարէք զտէր աստուած մեր · երկիրպագէք պատուանդանի ոտից նորա զի՞ սուրբ է։

փա՛ռք և երկրպա"։ Ա՛յժմ և միշտ"։ Ալէլու"։

(ԲԿ) Ալէլուիա ալէլուիա ալէ՞լուիա ։

Տո՛ւր զօրութիւն ծառայի քո · կեցո զորդի աղախնոյ քո · և արա առ իս նշան բա՞րութեան ։ Տեսցե՛ն ատելիք իմ և ամաչեսցեն · զի դու տէր օգնեցեր ինձ և մխիթարե՞ցեր զի՛ս ։

Ալէլու"։ Ասա՛ց տէր ցտէր իմ նիստ ընդ աջմէ իմմէ · մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ո՞տից քոց ։ Գաւազա՛ն զօրութեան առաքեսցէ քեզ տէր 'ի սիոնէ · և տիրեսցես դու 'ի մէջ թշնա՞մեաց քո՛ց ։



փա՛ռք և երկրպա"։ Ա՛յժմ և միշտ"։ Ալէլու"։

(ԳՁ) Ալէլուիա ալէլուիա ալէ՞լուիա ։

Դո՛ւ պատրաստեցեր զուղղութիւն և զիրաւունս · և զարդարութիւն յակոբայ դու ա՞րարեր ։ Բա՛րձր արարէք զտէր աստուած մեր · երկիրպագէք պատուանդանի ոտից նորա զի՞ սուրբ է ։

Ալէլու"։ Ցայտնեսցե՛ն երկինք զմեծայեղչութիւն փառաց նորա · և օրհնութեամբ նորա լցան տի՞եզերք ։ Ճառագա՛յթք որպէս 'ի լուսոյ հատեան 'ի նմանէ , և եղջիւրք 'ի ձեռին նորա գըտան · և անդ հաստատեցաւ զօրութիւն փառա՞ց նորա՛ ։

փա՛ռք և երկրպա"։ Ա՛յժմ և միշտ"։ Ալէլու"։

(ԳԿ) Ալէլուիա ալէլուիա ալէ՞լուիա ։

Ասա՛ց տէր ցտէր իմ նիստ ընդ աջմէ իմմէ · մինչև եդից զթշնամիս քոյ պատուանդան ո՞տից քոց ։ Գաւազա՛ն զօրութեան առաքեսցէ քեզ տէր 'ի սիոնէ · և տիրեսցես դու 'ի մէջ թշնա՞մեաց քո՛ց։

Ալէլու"։ Նշանեցա՛ւ առ մեզ լոյս երեսաց քոց · և ետուր ուրախութիւն սրտի՞ց մերոց ։ Ի պտղո՛յ ցորենոյ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր ը՞զնոսա՛ ։

փա՛ռք և երկրպա"։ Ա՛յժմ և միշտ"։ Ալէլու"։

(ԳՁ) Ալէլուիա ալէլուիա ալէ՞լուիա ։

Ցայտնեսցե՛ն երկինք զմեծայեղչութիւն փառաց նորա · և օրհնութեամբ նորա լցան տի՞եզերք ։

ճառագա՛յթք որպէս 'ի լուսոյ հաստատ 'ի նմա-
նէ. և եղջիւրք 'ի ձեռին նորա գրեան. և
անդ հաստատեցաւ զօրութիւն փառա՛ց նորա՛:
Ալէլու": Ցո՛ւպ քո և գաւազան նոքա մխի-
թարե՛սցեն զիս: Պատրա՛ստ արարեր առաջի
իմ ըզսեղան. ա՛ն յանդիման նեղչա՛ց իմո՛ց:
փա՛ռք և երկրպա": Ա՛յժմ և միշտ": Ալէլու":

(ԴԿ) Ալէլուիա ալէլուիա ալէ՛լուիա:
Նշանեցա՛ւ առ մեզ լոյս երեսաց քոց. և ե-
տուր ուրախութիւն սրտի՛ց մերոց: Ի պտղո՛յ
ցորենոյ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր
ը՛զնոսա:
Ալէլու": Նե՛տք քո սրեալ են հզօր. և ժո-
ղովուրդք 'ի ներքոյ քո անկցին 'ի սիրտս թշ-
նամեաց թագա՛ւորի: Աթո՛ռ քո աստուած յա-
ւիտեանս յաւիտենից. գաւազան ուղղութեան
գաւազան արքայո՛ւթեան քո՛:
փա՛ռք և երկրպա": Ա՛յժմ և միշտ": Ալէլու":

Խաչի քո քրիստոս. (Տե. էջ 76.)

Ճաշու: ԳԿ

Յաղթօ՛ղ և զնոր օրհնութիւն միշտ 'ի՛ բար-
ձունս երգեսցուք. թագա՛ւորին քրիստոսի
համա՛տացեալ ժողովուրդք: Որ ե՛կն 'ի լուսա-
ւորել զընտրեա՛լ սուրբ զեկեղեցի. և պ՛-
սակեաց սուրբ խաչիւն. Նըմա՛ ըզփառս երգես-



ցուք: (փառ.ք". Այժմ".) Այսօ՛ր և մեք տօնես-
ցուք զնաւա՛կատիս սուրբ խաչին. և փր՛կո-
զին մատուսցուք փառ.ք և՛ պատիւ յաւիտեա՛ն:

Շարական Խաչվերացի Երեկոյին: ԴՁ (համբ.)

Զօրութի՛ւն սուրբ խաչի՛ քո քրիստոս որ կանգ-
նեցեր 'ի փրկութի՛ւն աշխարհի. սա՛ է պահես-
ցէ ըզմե՛զ յամենայն փորձութենէ՛: Քանզի 'ի
սմա՛ բարձրացա՛ր աստուա՛ծ. և 'ի սմա՛ հե՛-
ղեր ըզպատուակա՛ն սուրբ զարիւնըդ. սա՛ է":
Եւ ըզքո՛ միւսանգա՛մ ըզգալուստըդ նշանա՛ւ
խաչի քո՛ ցո՛ւցե՛ր աշխարհի. սա՛ է պա":
Ի տունդանե՛լն ադամայ 'ի կենագո՛րծ 'ի
դրախտի՛ն. խա՛բմա՛մբ պատրանօք փայտին
ծառո՛յն գիտութեա՛ն. օձաչա՛մբ պատրա-
նօքըն ճաշակեա՛լ 'ի պտղոյն. և եղև վայրա-
բնակիլ մայրաքաղաքն երուսաղէ՛մ: Արևե՛լք
'ի դրախտին ընծայեցին ըզփայտ խաչի՛ն. և
եկեա՛լ կատարի՛ւր 'ի տեղւոջ կառափրմա՛ն.
բարձրանա՛յր 'ի գլխի՛ն տարրեղէ՛ն փայտա-
կերտըն. սո՛ւրբ քառաթևըն պահապան ան-
ձանց մերո՛ց: Բանն անե՛ղ համագո՛յ որ ընդ-
հօր և սուրբ հոգւո՛յն. երևեա՛լ 'ի յերկրի
պայծառացա՛ն արարա՛ծք հըզօրին կարողու-
թեա՛մբն. և ըզմե՛զ վերագրեաց յորդեգրու-
թեան շընո՛րհս:

Գ.Ձ

Որ ծագեցեր մեզ լոյս մեծ ընդ նշան յաղթութեան խաչի քո թագաւոր յաւիտենից . և ետուր պարգեւ ամրութեան հաւատացելոց քոց . աշտարակ հզօր յերեսաց թշնամւոյն . աղաչեմք ըզքեզ տէր պահպանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սրբոյ : Սա պսակ զարդարեալ ի շնորհաց իմանալի լուսոյն . և եդեալ ի գլուխ մեղուցելոյն . վայելուչ երանգօք ներկեալ արեամբ և ջրով . ի տիգախոց կողէդ զոր ի զինուորէն ընկալար . աղաչ" :
Որ զանդունդըս մեղաց ծովուն սովաւ բաժանեցեր . և զբռնաւորըն ծածկեցեր խորօքըն յաւիտենական հրոյն . հաներ ըզժողովուրդըս քո ի բնակութիւնս երկնից անկեալ զօրացն . աղաչ" :

. . . . . . . . . . . . . .

Գ.Կ

Այսօր երևեցաւ մեծի ճառագայթի . նշանն տեառն աստուծոյ մերոյ փայլեալ ի նուակատին որ յԵրուսաղէմ . ժողովուրդք բարեբանելով ըզքրիստոս տօնեցէք ուրախութեամբ :

. . . . . . . . . . . . . .



Գ.Ձ

Փայտ կենաց որ փոխանակ մահացու պտղոյն ըզքրիստոս պտղաբերեցեր . պարըսպեալ պահեա զուխտս հաւատացելոց : Քեւ բացաւ մեզ ճանապարհ ծառոյն կենաց . ի սրովբէափայլ պահպանութենէն . պարըս" : Քեւ աղաւնեցաւ նախահայրն ի ճաշակմանէ պտղոյն . և քեզ երկրպագեն ամենայն հաւատացեալք . պարըս" :

ԲԿ

Խաչըն կենարար որ եղև մեզ փրկութիւն . սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք : Որ ի հօրէ լուսոյ լոյս ճառագայթեալ ի յերկրի և գաւազան զօրութեան հաւատացելոց . սովաւ" : Որ լուսափայլ ծագմամբ հրաշափառապէս մեզ ցուցաւ ի յօգնութիւն ընդդէմ թշնամւոյն . սովաւ ա" :

———

Ճաշու շարական Բ . աւուր խաչի : Գ.Ձ

Ի յերկնից երևեցաւ նշանըն յաղթութեան այսօր . հեթանոսաց ծագեաց լոյսն ողորմութեան : Եւ բազմութիւն ժողովոյն տեսա-

նէին այսօր․ սուրբ ըղխայըն լուսոյ ճա-
ռագայթիւք զարդարեալ։ Ընդ երեւումն
սրբոյ խաչի քո քրիստոս այսօր․ երու-
սաղէմ մեծապէս պանծացաւ յոյժ։ Եւ ըղ-
ծագումն լուսոյ աստուածային նշանի
քոյ․ ճառագայթիւք տեսանիցուր բազմու-
թեան ժողովոյն։ (փառք․ Այժմ և․) Ամե-
նայաղթ զօրութիւն խաչի քո քրիստոս որ
ցուցաւ ՚ի յօգնութիւն ընդդէմ թշնամւոյն․
պատերազմեաց զօրութեամբ քով։

---

Օրհնութիւն Վարդավառի խաղն։ Ա Կ

Նշանաւ ամենայաղթ խաչիւդ քով քրիս-
տոս․ պահպանեա զմեզ մարդասէր յաներե-
ւոյթ թշնամւոյն․ զի դու միայն ես թա-
գաւոր փառաց օրհնեալ յաւիտեան։ Որ
՚ի վերայ սորա տարածեցեր զանարատ բազու-
կըս քո․ և հեղեր զարիւնդ ՚ի փրկութիւն տի-
եզերաց․ զի դու մի։ Ի միւսանգամ քո գա-
լըստեանըն յերեւիլ սուրբ նշանիս․ արժանի
արա ըղծառայս քո․ վերըստին նորոգման․
զի դու մի։

Խաչ քո եղիցի մեզ ապաւէն բոցանից փայլ-
մամբն իւրով․ խորտակեաց ըղթշնամին և



եղոյծ ըզդատակնիք․ անուանեալ փայտըն կե-
նաց ՚ի փրկութիւն տիեզերաց։ Վեր առեալ
ցընծան երկինք և երկիրս ուրախանայ․ ընդ-
յայտնիլ սրբոյ խաչին սեռականաձև քառաթե-
ւին որ զաշխարհըս լուսաւորեաց արեգակ-
նակերպ ճառագայթիւք։ Ցընծացաւ երուսա-
ղէմ բերկրեցան հաւատացեալք․ նորահրաշ
զարդարեցան քանզի տեսին զյաղթօղ նշանն․
արարածք ամենայն ՚ի լուսոյն պայծառացան։

Ծող։ ԳՁ

Քեզ քրիստոսի կաթուղիկէ եկեղեցւոյ շնոր-
հօղի․ զյաղթական ըզպատուական աստուած-
ընկալ սուրբ նշանս․ մատուցանեմք զօրհներ-
գութիւն միշտ ՚ի բարձունս։ Սա կամաւ քո
քրիստոս և թէև․ք ամենազօր սուրբ հոգւոյն․
և գաստուք հրեշտակաց թռուցեալ եկաւորի․
՚ի լեառըն վարագայ բընակիլ ՚ի նմա։ (փառք․
Այժմ և․) Եկայք ժողովուրդք երկրպագես-
ցուք աստուածային սուրբ նշանիս․ համբար-
ձէք միաբան ըզձեռըս ձեր ՚ի սրբութիւն․
և ըզբնակեալն ՚ի նմա միշտ փառաւորեսցուք։

---

Օրհնութիւն Գիւտի Ս. Խաչին : Ա.Զ (հմբր.)

Հրաշակերտ և զօրեղ փայտ խաչի քո Քրիստոս. գաւազան զօրութեան ՚ի յերկրի երեւեցաւ. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք։ Զոր հրէիցն ծածկեալ զանթաքչելի ընդ գանձն փափագման թագուհւոյն փայտ կենաց յայտնեցաւ. եկա՛՝ Սա է զէն յաղթութեան հաւատացելոց. ախոյեան և կնիք յաղթող ընդդէմ թշնամւոյն. եկայք ժո՛։

Անճառելի երեւումն երեւեալ դըշխոյին. նըստելով յաթենի յերուսաղէմ. խնդրէր ըզպատուական փայտ խաչին. յոր ըզմեսիայն բեւեռեցին։ Մեծասաստ հրամանաւն ժողովեալ հրէից. ցուցանելով նըմա զպատուական փայտ խաչին. յոր ելեալ բարձրացաւ արարիչն արարածոց։ Ընդ յայտնիլ սըրբոյ խաչին ՚ի տեղւոջըն սըրբութեան. բուրմամբ անուշահոտ խընկոց. և լըցան տեղերք մեծապէս պարգեւօք։

Որ զնախնոյն առիթ մահու փայտ կենաց շնորհեցեր. և ետուր յաղթութիւն մահացու բնութեանս. ՚ի սմա բանիդ հօր երկրպագեսցուք։ Որ զանճառ լուսոյդ բարձողըն ծածկելով հրէիցն. ՚ի յերկրէ ծագեցեր



կան աստուածային ըզշնորհս հեղեր յորդիս ադամայ. աղաչանօք սորա ողորմեա մեզ աստուած։ Երեւելով հողեղինացս անհիւթական զէն ՚ի ձեռն մարմնոյ. որք և ծանուցին մարգարէքն ըզխորհուրդ քո գալըստեանդ բազմապատիկ տեսլեամբ օրինակելով. աղա՛։ Անճառելի անօրէնութեանըդ քո աւետաբերք առաքեցան գաբրիէլ և միքայէլ անմարմնական դասուքն իւրեանց յերկրի սպասաւորելով. աղաչա՛։

Տէրունեաց : Գ.Կ

Անմահ արքային անարուեստ աթոռք. բազմաչեայ քերոբէք սրբասաց ձայնիւ սրօբէք առաջին յերկինս քահանայապետք. բարեխօս լերուք առ տէր վասն եկեղեցւոյ։ Բարձրելոյն փառաց բարձօղ տէրութիւնք. անյաղթելի զօրութիւնք վեհագոյն իշխանութիւնք երկրորդին դասուց քահանայապետք. բարե՛։ Գերագոյն էիդ պետութիւնք վերին. հրեշտակապետք և ըրկնաւորք հրեշտակաց զինուորութիւնք երրորդի յերկինս քահանայապետք. ձեզ համաձայնեալ երգեմք ըզփառս ՚ի բարձունս։

Ալէլուիա ։

Ալէլուիա ալէլուիա ալէլուիա ։
Ո՛ արար ըզհրեշտակս իւր յոգիս. և զպաշտօ-
նեայս իւր 'ի հուր կիզելոյ. Հաստատեաց զաշ-
խարհ 'ի վերայ հաստատութեան իւրոյ. զի մի՛
սասանեսցի յաւիտեան ։
Ալէլու"։ Օրհնեցէ՛ք ըզտէր յերկնից. օրհնե-
ցէք ըզնա 'ի բարձանց ։ Օրհնեցէ՛ք ըզնա ա-
մենայն հրեշտակք նորա. օրհնեցէք ըզնա ա-
մենայն զօրութիւնք նորա ։
Փառք և եր"։ Այժմ և"։
Դասք հրեշտակաց օրհնեն ըզքեզ քրիստոս ա-
լէլուիա. մարդկան ազգ սաղմոսեն քեզ. ալէ-
լուիա ալէլուիա ալէլուիա ։
Երկինք և երկիր գոհանան ըզքէն տէր.
արարածք ամենայն քեզ երկրպագանեն.
և հրեշտակք 'ի բարձունս աղաղակեն և ա-
սեն. ողորմեա դու ստեղծեր մի կորու-
սաներ ։
Երկինք երկնից ջուրք որ 'ի վերոյ քան զեր-
կինս օրհնեցէք զանուն տեառն ։ Զի նա ա-
սաց և եղեն հրամայեաց և հաստատեցան.
և հրեշտակք 'ի բարձունս աղաղա"։
Երկինք և երկիր հանապազ ըզքեզ գովեն.
թագաւոր փառաց. սերոբէք և քերոբէք
'ի խոնարհ ունելով ըզդէմս իւրեանց. և



միաձայն բարբառով աղաղակեն և ասեն.
սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց ։

Ձայն ։ Դկ (սիր.)

Այսօր ուրախացեալ սուրբ եկեղեցի քրիս-
տոսի. տօնէ խնդութեամբ ըզտօն վերինն ե-
րուսաղէմի. սրբասաց ձայնիւ փառաւորելով
ըզքրիստոս ։ Այսօր համաձայնեալք որդիք սի-
օնի երկրայնոյ. տօնիւ զուարճանան որդւոց
անդրանկաց վերին սիօնի. սրբասաց ձայ"։
(Փառք"։ Այժմ և"։) Այսօր դասք անմարմնոցն
երգս առեալ պարեն ընդ մարդկան. զեր-
գըս հոգևորս յանմահ փեսային առագաստ.
սրբասաց ձայնիւ փառաւո"։

---

Օրհնութիւն համօրէն Առաքելոցն Քրիստոսի ։ Գջ

Երանելի սուրբ առաքեալք հրաւիրեալք 'ի
սկզբանէ և ընտրեալք յորովայնէ. սպասա-
ւորք և բարեկամք և վկայք աստուածոր-
դւոյն. բարեխօսեցէք առ տէր վասն անձանց
մերոց ։ Որք առիք իշխանութիւն 'ի վերայ
ազգի մարդկան. կապել և արձակել 'ի յեր-
կինս և 'ի յերկրի. արձակեցէք ըզմեզ 'ի կա-
պանաց մեղաց մերոց ։ Խաչակցեալք ընդ

քրիստոսի և ընդ նըմին թագաւորեալք · 'ի միւսանգամ գալըստեան նորա նըստելոց էք դատաւորք . թողութիւն շնորհեցէք և մեզ մեղաւորացս ։

Զորս առեալ 'ի ծովակէն արարեր որսորդս մարդկան · որսալ զամենեսեան յարքայական սեղանն · բարեխօսութեամբ սոցա քրիստոս խընայեա 'ի մեզ ։ Որոց հրամայեցեր հոտ անոյշ լինել ընդ տիեզերս · ոմանց հոտ 'ի մահուանէ 'ի մահ և ոմանց 'ի կենաց 'ի կեանս · բարեխօսու" ։ Որոց խոստացար նըստել յաթոռ դատողական · դատել զազգն իսրայէլի յայնմ աւուր ահեղին · բարեխօսու" ։

Զառաջնորդս և զվարդապետս եկեղեցւոյ քում սըրբոյ յիշատակս պատուեմք այսօր · բարեխօսու" ։ Ծիր մըշակք անպարտելիք կաթուղիկէ եկեղեցւոյ և պըսակք պարծանաց հաւատացելոց · բարեխօսու" ։ Հազարապետք աստուածային խորհըրդոցն · և բացօղք դըրանն արքայութեան երկնից · բարեխօսեցէք առ տէր վասն անձանց մերոց ։

Հարց ։ Ա.Զ

Էակից բանըդ հօր և հոգւոյն որ իջեր 'ի յերկնից 'ի փըրկութիւն ազգի մարդկան · ա-



տըւած հարցըն մերոց ։ Որ պահեցեր յաղթօղ ըզճըգնութիւն սըրբոց առաքելոցն · այսօր և մեք ընդ նոսին ցընծութեամբ օրհնեմք ըզքեզ · տէր" ։ Որ առաւել բարձրացեալդ ես յաւիտենից · այսօր ընդ դասս վըկայից քոց բարեբանեմք ըզքեզ · տէր" ։ ( Օրհնեցէք ամենայն գործք տեառն ) Ըզտէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան ։ Որ ընտրեաց զերանելին առաքեալսն և նոքօք որսաց 'ի հաւատս ըզտիեզերըս քրիստոս · բարձր արարէք ըզնա յա" ։ Որք ըզխաւար կռապաշտութեանցըն վանեցին և ըզլոյս գիտութեան ընդհանուր յերկիր ծաւալեցին · ընդ նոսին բարձր արարէք ըզնա յաւիտեան ։

Մեծացուսցէ ։ Ա.Զ

Այսօր նոր ժողովուրդք · ցընծասցեք ընդ գալըստեան հոգւոյն սըրբոյ · մեծացուցանելով զելողն 'ի հօրէ ։ Այսօր ցընծան առաքեալքն զարդարեալք 'ի շնորհաց հոգւոյն սըրբոյ · մեծացու" ։ Այսօր զուարճացան արարածք · ընդ շնորհիւ գալըստեան հոգւոյն սըրբոյ · մեծացուցա" ։

Ողորմեա ։ Ա.Զ

Տէր որ ըզգթութիւնըդ քո զառատ հեղեր

յերկնից ՚ի մէջ սրբոց առաքելոց քոց․ աղաչանօք սոցա ողորմեա։ Որ ՚ի ձեռըն սոցա սփռեցան շնորհք հոգւոյդ սրբոյ ընդ ամենայն երկիր․ աղաչա"։ Որ սոքօք լուսաւորեցեր մկըրտութեամբ աւազանին զեկեղեցի քո սուրբ․ աղաչա"։

Տէրերկնից։ ԱՁ

Որք ՚ի սկզբանէ պատուեալ եղեն ՚ի սէր բոլորից հօր․ առաքելական կոչմամբ ըզտիեզերս հրաւիրեցին յուսով հասանիլ մասին․ վարդապետութեամբ սոցա ամենեքեան օրհնեսցուք ըզտէր։ Որք ականատեսք և սպասաւորք եղեն մարմնացելոյ բանին․ դեր ՚ի վերոյ անմարմնոց դասուցն հանդիպելով շնորհի․ վար"։ Որոց դատողական աթոռ ահեղ ատենին հանդերձեալ մնայ կատարել ՚ի մեծ դատաստան ըստ գրելոյն․ առ սոսա անկցուք ըզղջացեալ անձամբ պաղատելով․ հաշտեցուցանել սոքօք ընդ մեզ զահաւոր զդատաւորն։

Առաքեալք աստուծոյ սիւնըք հաւատոյ կաթուղիկէ եկեղեցւոյ․ քրիստոսի աստուծոյ երկնաւոր վարդապետին աշակերտք․ բարեխօսեցէք շնորհել զխաղաղութիւն ամենայն աշխարհի․ բարեկամք քրիստոսի և հաղորդա-



պետք աստուածային խորհրդոյն․ ընդունողք ըզբանըն կենաց և լուսաւորիչք տիեզերաց․ բարեխօսե"։ Գերահրաշ մըշակք աշխարհի և սերմանօղք ըզբանըն կենաց ՚ի յոգիս բանաւորաց․ աղաչեմք ըզձեզ բարեխօսե"։ Դատաւորք ահեղ ատենին և դատապարտօղք ըզքրիստոս ոչ խոստովանողաց․ աղաչեմք ըզձեզ․ բարեխօսեցէք շնորհել զխաղա"։

Ճաշու։ ԱԿ (սիր․)

Որ սիրօղդ էք արարչին արարածոց․ քրիստոսի սուրբ առաքեալք․ բարեխօսեցէք առ տէր վասըն մեր։ Որ քարոզդ էք ընդհանուր տիեզերաց․ քրիստոսի սուրբ առաքեալք․ բարեխօսե"։ (փառ․ք"․ Այժմ և"․) Որ պըսակդ էք ամենայն եկեղեցեաց․ քրիստոսի սուրբ առաքեալք․ բարեխօսեցէք առ տէր վա"։

———

Օրհնութիւն Ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետին։ ԳԿ

Յաղթօղ և սուրբ հայրապետ նըման մեծին մովսէսի․ բարձօղ խաչին պարծանաց ընդդիմամարտ հանդիսիւ․ ըզքեզ ունիմք բարեխօս առ հայր յերկինս վասըն մեր։ Առաքմամբ սուրբ հոգւոյն յանապատէ կոչեցար․ առեր պատիւ մեծութեան նըման մեծին յով-

հաննաւ երգա՛ կցելով ընդ վերնոցն. ընքե՟ղ կարօ՛ղ եղեր զօրութեամբ զարմա՛նագործ նըշանիւք. նըմա՛ն մեծին պետրոսի հովի՛ւ շնորհեալ յասսուծոյ ընտրեա՛լ հօտին քրիստոսի.

ընքե՟ղ ունիմք բարե՟.

Ուրա՛խացան զօրք երկնից ընդ քո՛յ մեծի ճըգնութեան. որ 'ի՛ մարմնի կառուցար նըմա՛ն վերին զըւարթնոցն. ընքե՟ղ ու՟. Բըղխմա՛մբ քո սուրբ արտասուաց կե՛նագո՛րծէիր ըղմեռեալս. նըմա՛ն փըրկչին յիսուսի կե՛նագո՛րծողին ղազարու. ընքե՟ղ ու՟. Այլ մե՛ք ձայնիւ ցընծութեամբ տօնե՛մք զքո սուրբ զյիշատակս. պատուեա՛լ վըկայ քրիստոսի սուրբ հա՛յրապետըդ յակոբ. ընքե՟ղ. Ցո՛ւնձն առեր զչարչարանս վասը՛ն նոյեան տապանին. 'ի հրե՛շտակէն ընկալար զփայտ փը՛րկութեան աշխարհի. ընքե՟ղ ունիմք բա՟.

Հարց. Գ.Ջ

Սուրբ ես տէ՛ր և 'ի սուրբս հանգուցեալ. բարեբանեա՟լ 'ի վերին զօրաց և 'ի մըրրո՟ց քոց. տէ՟ր սատըւած հա՟րցըն մերո՛ց. Զարժանահաս մահտարաժամ 'ի ցասմանէ քում հրամանի՛. բարձ 'ի մէ՟նջ բարեխօսութեամբ և աղօթի՟ւք սըրբոյն յակոբայ. տէ՟ր ասսը՟.



Ի քէն հայցեմըք զօգնութիւն ամենասուրբ երրորդութիւն. օգնեա՟ մեզ 'ի նեղութեան մե՟րո՟ւմ. բարեխօսութեամբ և աղօ՟. (Օրհնեցէ՛ք ամենայն գործք տեառն) Ըղտէր օրհնեցէք. զքրիստոս թագաւորն յիշատակի սորա բարձր ա՛րարէք յաւիտեա՛ն. Որ ընտրեաց զերանելի ըզհայրապետն 'ի լուսաւորե՟լ ըզմանկունըս սուրբ եկեղեցւոյ. զքրիստոս թա՟. Որ բաղկատարած հայցմա՟մբ խընդրելո՟վ 'ի տեառնէ զողորմութիւն. և աղբե՟ւր բըժըշկութեան բըղխեալ 'ի հայաստա՟ն աշխարհի. զքրիստոս թա՟. Որ 'ի հրանիւթիցըն սպասաւորելով զարհուրեցոյց ըզթագաւորն. հովիւըն քա՟ջ բանաւոր հօտի և բըժիշկ ախտացելոց անձանց. զքրիստոս թագաւորն յիշատա՟.

Մեծացուսցէ Գ.Ջ. Սուրբ զաստուածա՟. տես էՋ Ց.

Ողորմեա. Գ.Ջ

Երկը՛րպագեմք առաջի տեւո՛ղական նըշխարաց. ճըգնա՟ւորին քրիստոսի և պա՟տուական վըկային. որ է՟ պարծանք աշխարհի և բա՛րեխօս վասըն մե՛ր. Ըզճը՛գնութիւնըս սորա առ քե՟զ ունիմք բարեխօս. և ա՟ղաչեմըք սմաւ հրաշագործեա յերկրի զբըժը՛շկութիւն

հիւանդաց · որ է՜ պարծանք աշ"։ Ցընծութեամբ տօնեսցուք ըզյիշատակըս սորա · հաւատացեալ ժողովուրդք 'ի փառս ամենազօր տէրութեան · որ է՜ պարծանք աշ"։

Տէրյերկնից ։ Գ.Զ

Ամուրք հաւատոյ և պարծանըք սուրբ եկեղեցւոյ · և հովիւ քաջընթաց երկնաւոր հօտապետին · յառաքելական աթոռ նըստար երանելի սուրբ հայրապետ ։ Մարգարիտ լուսափայլ և լուսաւորիչ տիեզերաց · սիւն լուսոյ սըրբութեան կանգնեալ 'ի մէջ հայաստանեայց · յառաքելա"։ Հողանիւթ բարունակ և բարեխօս առ տէր վասըն մեր · բարեբանող բանին կենաց և պարծանք եկեղեցւոյ · յառաքելա"։

Մանկունք ։ Գ.Զ

Հայրապետ սուրբ և անբիծ և ընտրեալ յօրովայնէ · սքանչելագործ վըկայ և պարծանք ազգի մարդկան · առ քրիստոս բարեխօսեա վասըն մեր քո տօնողացս ։ Հովիւ հոգեւոր բանաւոր հօտի · լուսաւորիչ տիեզերաց, սիւն լուսոյ կանգնեալ 'ի մէջ եկեղեցւոյ · առ քրիս"։ Հաստատութիւն հաւատոյ պըսակ 'ի գլուխ եկեղեցւոյ · պայծառ քարոզ տիեզերաց և



պարծանք ազգի մարդկան · առ քրիստոս բա"։ Ի տաճարի քում սըրբութեան երկիրպագեմք քոց նըշխարաց · փառաւորեմք զօր յիշատակի կատարման քո հանգըստեան առ քրիս"։

Ճաշու ։ Գկ (սիր.)

Որ յանապատէ կոչեցար յառաքելական աթոռ բանիւ սուրբ յակոբ · բարձրացուցեր զեղջիւր սիոնի ճըշմարտութեամբ մասամբ նոյեան տապանին ։ Որ արդարութեամբ և լուսով քո փայլմամբ նոր արեգական · պայծառ քան զարփին վառեալ զօրութեամբ յառնել 'ի հրաշ պատանւոյն ։ Որ միացար սըրբութեամբ 'ի լոյսըն մաքուր որպէս զանմարմին · զարմացուցեր ըզզօրըս վերին հիացուցեր զարարածս ։ (փառք"· Այժմ և"·) Արդ աղաչեմք ըզքեզ հայրըդ գըթած և հովիւ բարի · մաղթանօք հայցեա առ տէր վասն եկեղեցւոյ · մինչ անշարժ պահել յաւիտեան ։

———

Օրհնաբանեան Դաւթի մարգարէին և Ցոլցեալ առաւօտուն ։ ԴԶ

Ցաղթող գըտաւ յօրհնաբանոն երանելին դաւիթ · որ զօրացաւ 'ի վերայ այլազգւոյն և հաւատով պարտեաց զանօրէնն ըզգողիաթ ·

զմարգարէն արասցուք բարեխօս առ տէր
վասն անձանց մերոց։ Ուսարուք զարդարու-
թեան բնակիչք երկրի. Նայեցարուք ընդ ար-
դարըն յակոբ որ հաճոյ եղև աստուծոյ վա-
րուքն իւրովք. ընդ նմա արաս"։ Սա եղև գլուխ
առաքելոց սըրբոց և կոչեցաւ եղբայր տեառն
'ի տանէ դաւթի. ընդ նմա արաս"։

Որ երջանիկ լուսովըն զուարճանայր մարգա-
րէն դաւիթ. և հոգւովըն վերանայր 'ի կամա-
րըս լուսեղէնս. ընդ նմա արաս"։ Որ հողանիւթ
բնութեամբըն զուգակցեալ ընդ սուրբ հոգ-
ւոյն և ազատէր ըզթագաւորն 'ի դիւական ախ-
տէն. ընդ նմա արաս". Որ հրաշազարդեալ դըտաւ
'ի կամըգըս թագաւորաց. և մասնակից եղև
սուրբ առաքելոցն. ընդ նմա արաս"։

Հարց։ Դ.Ձ

Մեղաք յամենայնի և ըզպատուիրանըս քո ոչ
պահեցաք այլ խոստովանիմք առ քեզ. մի
անտես առներ այլ գըթա 'ի մեզ աստուած
հարցըն մերոց։ Վասըն դաւթի սիրելւոյ
քո և յակոբայ արդարոյ աղաչեմք ըզքեզ
մի ան"։ Որ նըստիս 'ի քրոբէս և հայիս յան-
դունդս. յիշեա ողորմութեամբ քո զդաւիթ.
և աղօթիւք սրբոյն յակոբայ խընայեա 'ի



մեզ աստը"։ (Օրհնեցէք ամենայն գործք
տեառն) Ըզտէր օրհնեցէք բարձր արարէք
ըզնա յաւիտեանս։ Որ ընտրեաց զերանելին
ըզդաւիթ յառաջնորդութիւն իսրայէլի.
օրհ"։ Որ կացոյց զըսքանչելին ըզյակոբ պա-
րիսպ շըրջապատ եկեղեցւոյ իւրոյ. օրհ"։

Մեծացուսցէ Դ.Ձ։ Առաւօտ խաղաղու" տես էջ 20։

Ողորմեա։ Դ.Ձ

Անըսկիզբըն աստուած լոյս 'ի լուսոյ. որ ծա-
գեցար մեզ եղջիւր փըրկութեան 'ի տանէ
դաւթի. աղօթիւք սորա աստուած ողորմեա
մեզ։ Անմարմնոց վերնոց թագաւոր յաւիտե-
նից. որ մարմնով երևեցար յերկրի 'ի զաւա-
կէ դաւթի. աղօ"։ Յառաջնումն աստուածա-
հայր անուանեցաւ մարգարէն դաւիթ. և 'ի
վերջինս եղբայր տեառըն կոչեցաւ սքան-
չելին յակոբ. աղօ"։

Տէրունեաց։ Դ.Ձ

Երդուաւ տէր դաւթի ճըշմարտութեամբ և
ոչ ստեաց նըմա. 'ի պըտղոյ որովայնի նորա
նըստուցանել 'ի յաթոռ նորա. օրհնեցէք ըզ-
տէրութիւն նորա ամենայն երկիր։ Ծագեաց

մեզ տէր զեղջիւր 'ի դաւիթ պատրաստեաց ըզճրագ օծելոյ իւրոյ · գովեցէք ըզտէրութիւն նորա ամենայն երկիր · Զյակոբ ընտրեաց իւր տէր ժառանգել նովաւ ըզնոր ժողովուրդ ըզ հոգեւորն իսրայէլ · բարեբանեցէք զաստուածութիւն նորա ամենայն երկիր ։

Թագաւոր յաւիտեան տե․ էջ 22։

Ճաշու ԴԶ Անսկիզբն աստուած"․ (սիր․) տե․ էջ 159։

---

Օրհնութիւն Ս․ Ստեփաննոսի․ ԳԿ

Նահատակ բարի քրիստոսի եղեր այսօր 'ի միջի մերում · և մտեր 'ի վերնատունըն խորհրդոյ յաւիտենականին ։ Որ ընտրեցար 'ի դաս երկնաւոր զօրացն պըսակեցար 'ի Թագաւորէն զանթառամ ըզպըսակն · և մըկըրտեցար արեամբըդ քով սըրբով առաջին վըկայ քրիստոսի սուրբ ստեփաննոս նախասարկաւագըդ մեր ։ Մարտեար ընդդէմ թըշնամւոյն այսօր և գնեցեր արեամբըդ քով զարքայութիւն · 'ի պարծանս ազգի մարդկան ճըգնաւոր քրիստոսի · գոհութիւն երեքսըրբեանն որ ընկալաւ ըզվկայդ իւր զսուրբ ստեփաննոս 'ի վերին երուսաղէմ ։



Որ ընտրեցար 'ի կոչումն առաքելական քարոզութեանցն արժանաւոր լինելով սուրբ ստեփաննոս · բարեխօսեա առ քրիստոս վասն անձանց մերոց ։ Որ խնդրեցեր զթողութիւն 'ի վերայ քո քարաձիգ ժողովոյն սուրբ ստեփաննոս · և այժըմ վասըն քո ուխտաւորացս աղաչեա զընդաջմէ հօր նըստեալըն ։ Որ արժանի եղեր զնահատակականն առնուլ պըսակ նախ 'ի վըկայս · առ պըսակիչըն սըրբոց և վասըն մեր բարեխօսեա ։

ԴԿ

Առաքեալ և նախավըկայ քրիստոսի սուրբ ստեփաննոս · որ ըզքարկոծումըն յանձն առեր և յանմահից ընակարանըն վերափոխեցար · աղաչեա զաստըւած շնորհել մեզ ըզկեանս անվախճան ։ Տունկ անմահ իմանալի դրախտին շնորհեցար 'ի հօրէ և լուսաւորեցար անճառապէս · այսօր ցընծան դասք հրեշտակացն ընդ քո մեծապայծառ ճըգնութիւնդ · աղա"։ Աստուածաստեղծ մարդոյն պըտուղ ընծայեցար մերձ յանմերձենալին լոյսն · և հայրենի աւանդութեան եղեր ժառանգորդ · աղա"։ Ճանապարհ վըկայից յետ քրիստոսի գըտար · և աստուածային փառացն արժանաւոր եղեր ·

բանսարկուն զինու քո վիրաւորեցաւ և նախաստեղծըն պայծառացեալ բերկրեցաւ աղա"։ Դասակարգեալք և մեք ընդ անմարմնական բազմութիւնսն · վերահայցեմք ընդ հրեղէն լեգէոնացն աղօթանուէր մաղթանօք · հայցեմք 'ի քէն մարդասէր փրկիչ · խնայեա 'ի մեզ ստեղծող մեր և կեանք աշխարհի ։

Հարց ։ ԳՁ

Ընդ երկնային հոգեղինացդ դասս այսօր տօնեմք ըզյիշատակ սրբոյն ստեփաննոսի · բարեբանելով ըզքեզ տէր աստուած հարցըն մերոց ։ Որ հրեշտակակերպ տեսլեամբ արիաբար պատերազմեալ զքարկոծումըն յանձն էառ · խոստովանելով ըզքեզ քրիստոս աստուած հար"։ Որ անպարագրելի աստուածութեանըդ տեսող և բարեխօս իւր ուխտաւորացս · այսօր յիշատակաւ սրբոյն ստեփաննոսի գովեմք ըզքեզ քրիստոս աստուած հար"։ (Օրհնեցէք ամենայն գործք տեառն) Ըզտէր օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեանս ։ Որ յերկնային զօրացըն միշտ օրհնիս քրիստոս աստուած · այսօր յիշատակաւ սրբոյն ստեփաննոսի ըզտէր օրհ"։ Հրաշալի աստուածաբանութեամբ սրբոյն ստեփանոսի · քահանայք ընդ վերին զօրացն երկնից · զքրիստոս գովեցէք և բարձր ա"։



Մեծացուսցէ ։ ԳՁ

Աստուածածին երկնային դուռն աստուա"։ Տե՛ս էջ 67

Ողորմեա ։ ԳԿ

Առաքեա 'ի մեզ տէր ըզքաղում գթութեան քո ողորմութիւն · բարեխօսութեամբ սրբոյ նախավկային քո և ողորմեա ։ Որում զերկնայինըն բացեր ըզդուռն ցուցանելով զանճառելի զխորհուրդ · սորին աղաչանօք խնայեա 'ի մեզ տէր և ողորմեա ։ Որ աղօթանուէր հայցմամբ ըզթողութիւն խընդրելով 'ի քէն անօրէն ըսպանողաց իւրոց · սորին աղաչանօք խնայեա 'ի մեզ տէր և ող"։

Տէրերկնից ։ ԳԼ

Ով երջանիկ ճառագայթ, առաքելական քարոզութեանցն արժանաւոր լինելով սուրբ ստեփաննոս · հաստատութիւն 'ի քրիստոսէ հայցեա սուրբ եկեղեցւոյ ։ Որ քոյին յօժարական համբերութեամբդ ըզքարկոծումըն յանձն առեր · շնորհեալ քեզ յաստուծոյ լինել չարչարակից քրիստոսի · զի և մեզ ուսուսցես փառաւորել սուրբ զերրորդութիւնն ։ Աղօթէիր որ քարաձիգըն լինէին 'ի քեզ նախդ 'ի

վկայս. զի առցես ըզհատուցումըն բարի յարարչէն ամենեցուն. և այժմ աղաչեմք ըզքեզ և վասըն մեր բարեխօսեա։

Մանկունք։ Դկ

Նախապարկաւագ և առաջին մարտիրոս որ 'ի Քրիստոսէ պըսակեցար. և յերկնաճեմ առադասին պայծառացեալ բերկրեցար. աղաչեա զԱստուած շնորհել մեզ ըզկեանս անվախճանս։ Որ քոյին համբերութեամբդ ըզդրունս երկնից բացեալ տեսեր և զորդի ընդ աջմէ հօր. աղօթէիր 'ի վերայ քո քարաձգողացն. աղա″։ Եկեղեցիք արդարոց և ժողովք ուղղափառաց. այսօր ըզյիշատակս քո տօնեմք. և արտասուօք հայցեմք 'ի քէն ճշմարիտ վկայ Քրիստոսի. աղաչեա զԱստուը″։

Ճաշու։ Դկ (սիր.)

Ցընծայ այսօր եկեղեցի Աստուծոյ զքո վայելչապէս տօնէ զյիշատակս ով սուրբ Ստեփաննոս. մեծ և պատուական անուանիդ 'ի վըկայս. աղաչեա զԱստուած շնորհել մեզ ըզկեանս անվախճանս։ Նախաշաւիղ բարեաց ամենայն աշխարհի և լուսազարդ ճանապարհացն եղեր ժառանգորդ ով սուրբ Ստեփաննոս. մեծ և պատուական անուանիդ 'ի վը-



կայս. աղա″։ (Փառ.ք″. Այժմ և″։) Աստուածային զինու վառեցար սուրբ հոգւոյն. տեսանելով յերկինս հայրենի փառօք զորդին Աստուծոյ ով սուրբ Ստեփաննոս. մեծ և պա″։

———

Օրհնութիւն Պետրոսի և Պօղոսի գլխաւոր առաքելոցն։ Դ.Զ

Ցընծայ այսօր եկեղեցի Աստուծոյ յիշատակաւ սուրբ առաքելոցն. հաստատեալ 'ի վերայ վիմի հաւատոյ. զարդարեալ 'ի փառս մարմնացելոյ բանին։ Որ զէութիւն անճառելւոյ միածնին յայտնութեամբ հօր 'ի վերուստ դաւանեացըլ. և երանականն արժանացեալ շնորհի. վէմ անվանելի 'ի դրանց դըժոխոց։ Որ անմարմնոց դասուց հրեղինաց հողեղէն բնութեամբ գերազանցեացըլ. և բարձրացեալ 'ի յերկնային խորանսն. անճառ բանին և արժանաւորեալ։

Որ գերագոյն ընտրելոց առաքելոցըն դասուցեց. անուանեցեր լինել զերանելին ըզպետրոս. գլուխ սուրբ հաւատոյ հիմն եկեղեցւոյ։ Որ յառաջագոյն կոչմամբ առաքեցեր զանօթն ընտրութեան. յայտնելով աշխարհի զանճառ տնօրէնութեան քո զխորհուրդ. յօրհնաբանութիւն կոչել ըզհեթանոսս։ Որ

երկոքումբք ընտրելովք լուսաւորչօքն աշխարհի Գ. հաստատեցեր զեկեղեցի քո քրիստոս. մաղթանօք սոցա խնայեա 'ի մեզ:

Հարց ։ Դ.Զ

Որ խոստացար տալ ըզփականս արքայութեան երկնից երանելւոյն պետրոսի. որ հրաւիրեաց ըզմեզ 'ի լոյս կենացըն յաւիտենից. աղաչանօք սորա կեցո զմեզ տէր աստուած հարցըն մերոց: Որ ընտրեցեր 'ի մարդկանէ հաւատարիմ սուրբ զառաքեալն պօղոս. որոշելով յաւետարանըն լինիլ քեզ խոստովանող. աղաչա": փակողն արքայութեան երկնից սուրբ առաքեալն պետրոս. արութեամբ ժուժկալեալ քեզ խաչակցեցաւ. աղաչա": (Օրհնեցէք ամենայն գործք տեառն) Ըզտէր օրհնեցէք բարձր արարէք յաղթողական ձայնիւ ըզընակեալն 'ի մէջ սրբոց: Որ ընտրեաց զերանելի առաքեալսն ամոլք հաւատոյ սիւնք եկեղեցւոյ. 'ի տիեզերական 'ի հրապարակին զդատողական աթոռսն շնորհելով. բարձր արա": Նմանեալ աղաւնոյ արծաթապատ թեւօքն 'ի գոյն ոսկւոյ ճըշմարիտ սուրբ հոգին. և լուսազարդ փայլմամբ փառքէր ընդ նոքօք. բարձր արա":



Մեծացուսցէ: Դ.Զ

Աստուածածին գերագոյն երկնից ցուցար խորան և առագաստ. քանզի ծագեալ լոյսն 'ի հօրէ բնութեանց էից անտանելին պարագրեցաւ 'ի քում յորովայնի. հոգևոր երգով ըզքեզ միշտ մեծացուցանեմք: Դուռըն փակեալ զքեզ եզեկիէլ յառաջագոյն ծանոյց կոյս անարատ. ընդ որ եմուտ անտեսն յէից բանն անմարմին որ 'ի հօրէ և ել մարմնով անխախտելի մնալով կուսութեանդ. հոգևոր եր": Վերափոխեալ զքեզ 'ի յերկնային խորանսն այսօր որդին քո միածին. ուստի և դասք առաքելոցն և իմաստուն սուրբ կուսանացըն միաձայնելով գովէին ըզքեզ մայր անհարսնացեալ. հոգևոր եր":

Ողորմեա : Դ.Զ

Ամոլք հաւատոյ այսօր փայլին հայր սուրբ 'ի քո սուրբ եկեղեցւոջ. մարդասէր փրկիչ տօնողացս ողորմեա: Բարեխօսութեամբ պետրոսի և պօղոսի քո սուրբ առաքելոցն. մար": Լուսաւորեալք 'ի սոցա դպրութենէս փառաւորեմք սուրբ զերրորդութիւնդ. երկաքանչիւրոցն աղօթիւք տօնողացս ողորմեա:

Տէրերկնից ։ Գ.Զ

Երանելի սուրբ առաքեալքն որպէս զարեգակն ծագեցան 'ի յերկիր. արձակելով ըղճառագայթս ընդ տիեզերս. լուսաւորեցին զաշխարհս ամենայն ։ Ի մերմէ 'ի հողեղէն բնութենէս չարչարեցան վասն քրիստոսի. եղեն լուսատուք տիեզերաց. և հրաւիրեցին զերկիրս 'ի յերկինս ։ Չարչարեցան վասն քրիստոսի զնա արարին իւրեանց յոյս. հեղին զարիւնս իւրեանց 'ի յերկիր. և պըսակեցան յանմահ արքայէն ։

Ձայն Գ.Զ ։ Ամոլք հաւատոյ այսօր փայ՛՛ . Տե՛ս էջ 167

———

Օրհնութիւն Ս. Որդւոցն Որոտման ։ Գ.Կ

Որ էն յէութեան որդի միշտ յէէն անեզանելի ծընունդ հայրական. զոր 'ի վերուստ հընչեցին որդիքն որոտման. և յայտնեցին արգուոց մարդկան զծածկապէս խորհուրդն ։ Բանն անըսկիզբն 'ի կուսէն սկըզբնաւորեալ 'ի յերկրի մարմնով երեւեցաւ. զոր տեսին քարոզք բանին ճըշմարտութեան. և ծանուցին տիեզերաց աստուած և մարդ ։ Իսկա-



պէս բանն աստուած միացաւ 'ի մարմնի անփոփոխ գոլով յէութեան. որում եղեն ականատես որդիքն որոտման. և ընդհանուր քարոզեցին զբանն մարմին եղեալ ։

Որ անմարմին 'ի հօրէ մարմնացար 'ի կուսէն միանձնայնեալ բանդ անըմբռնելի. զոր 'ի մարմնի շօշափեցին որդիքն որոտման. և հընչեցին ընդ տիեզերս զաւետիս կենաց ։ Որ զանտեսդ յէից զըստդ անտանելի պարագրեալ մարմնով ծածկեցեր. զոր 'ի լերին արտափայլեալ տեսին որդիքն որոտման. և մաքրեցան անն[illegible]ու տեսլեամբ գերապանծ լուսոյն ։ Որ կենարար բանիւ քո անմահացեալք և մահու եղեն գերագանց. յանէն առին ըմպել զբաժակ չարչարանաց ընդ քեզ. զի ընկալցին 'ի քէն ըզփառս անվախճան կենաց ։

Հարց ։ Գ.Կ

Որ զամենայնըն յոչընչէ արարեր և ըստեղծեր ըզմարդն 'ի յանմահութեան 'ի պատկեր աստուածութեանըդ քո. ըզքեզ օրհնեմք աստուածդ հարցըն մերոց ։ Որ ըզնկեալն 'ի մահ պատրանօք բանսարկուին կանգնեցեր 'ի փառս առաջին գաղտնեամբըդ քո յաշխարհս. ըզքեզ օրհ՛՛ ։ Որ կոչեցեր ըզտիե-

զերս 'ի հաւատս ճշմարիտս ընտրելովք քո առաքելովք. և ցուցեր աւետարանիչ զորդիսն որոտման. ընդ քեզ օրհնեմք աստուած հարցըն մերոց: (Օրհնեցէք ամենայն գործք տեառն) Ըզտէր օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեան: Որ ըստ կամաց յօժարութեան իւրեանց զօրացոյց սուրբ զառաքեալսն. և հրաւիրեաց յերկնից արքայութիւնն. օրհ": Որ ընկալաւ 'ի կեանս անապականս ըզերջանիկ սուրբ զառաքեալսն. և դասեցոյց 'ի խորանս լուսեղէնս. օրհ":

Մեծացուսցէ Դ.կ. Աստուածածին ամպ լու. Տե՛ս էջ 122

Ողորմեա : Դ.կ

Որդիքն որոտման որք 'ի վերուստ հընչեցին ըզբանըդ կենաց ծագեալ 'ի հօրէ. և ըզտիեզերս հրաւիրեցին յօրհնաբանութիւն սուրբ երրորդութեանդ. բարեխօսութեամբ սոցա ողորմեա մեզ որդի աստուծոյ: Բանըդ մարմնացեալ 'ի կուսէն քարոզքըն տեսին. աւետարանեցին յաշխարհի ըզգալուստ միածնիդ. բարեխօսու": Ըզչարչարանս և ըզմահ ընդ քեզ յանձն առին. հաղորդիլ փառաց քոց տէր 'ի քում գալստեանդ. բարեխօսութեամբ սո":



Տէրունեաց : Դ.կ

Հոգի իմ կանխէ առ քեզ աստուած. որ ծագեցեր ըզլոյս հրամանի քո յաշխարհս ընտրելովք քո առաքելովք. վասն սոցա կեցո ըզմեզ: Լըցեալ շնորհօք հոգւոյդ սրբոյ և բարձրացեալ 'ի վերայ խորանաց երկնից. տեղեկացեալ եղեն անճառ ծնութեան միածնի քո. աւետարանեցին յաշխարհի. վասն սո": Կարօղք եղեն ամենայն զօրութեամբ ընդունիլ ըզբաժակ չարչարանաց միածնի քո որդիքն որոտման. և ընդ աջմէ դասիլ. վասն սո":

Ձայն՝ Որդիքն որոտման տե՛ս էջ 170:

———

Շարական Հանգստեան : Ա.Ձ

Քեզ վայելէ աստուած օրհնութիւն որ յարութիւնդ ես ձայնիւ յաւիտենից ննջեցելոց. թագաւոր և իշխան վերօրհնեմք ըզքեզ: Ի միւսանգամ գալստեանըդ քո քրիստոս փառաց թագաւոր. 'ի ձայն փողոյ նորոգին հոգիք ննջեցելոցն. և յառնեն 'ի մեռելոց անապական մարմնով: Վասն որոյ և մեք ըզքեզ աղաչեմք հայր երկնաւոր. դասաւորեա ըզննջեցեալսըն մեր 'ի վերինըդ քո երուսաղէմ 'ի ժողովս անդրանկաց գրելոց 'ի յերկինս:

Որ զաւետիս հոգւո՛յն ՛ի հրեղէ՛ն ՛ի՛ հրեշտա-կէ՛ն ընկալար · ուրա՜խ լեր բե՛րկրեա՛լդ տէր ընդ քե՜զ մարիամ անհարսնացեա՛լ։ Անըսկիզ-բըն բանըն հաճեցաւ առնուլ մա՛րդեղու-թեամբն ըսկիզբըն ՛ի կուսէդ · քրի՛ստո՛ս աստը-ւա՛ծ թագաւորն յաւիտենից ։ Աղաչեմք ըզ-քե՛զ սուրբ աստուածածի՛ն · առ քրիստոս բա-րեխօսեա՛ փը՛րկել ըզժո՛ղովո՛ւրդս ի՜ւր · զոր գընեաց արեամբն իւրո՛վ ։

Հրաշակե՜րտ և զօրե՛ղ փայտ խա″ · (Տէ· էՁ 142)

(Այժմ և″·) Հաշտեա ՛ի ձեռըն սուրբ մարմնոյ և արեան քո՜ տէր և պարգևեա՛ նո՛ցա դա-սիլ յաջակողմանըն քո՛ւմ ։

Ալէլու″ ալէլու″· Տէր ո՞վ կացցէ ՛ի խորանի քում · կամ ո՞վ բնակեսցի ՛ի լեառըն սուրբ քո ։ Որ գընայ ամբիծ, գործէ զարդարութիւն · խօսի զճըշմարտութիւն ՛ի սըրտի՞ իւրո՛ւմ ։ Ալէ″ · Օրթի

Իա՞հ գործեա՜լ երկնաւորաց դան առաջի քո նախընթաց · զընտրեալըս քո ժողովելով քեզ ընդ առաջ բերեն ամպով · ընդ աղաւնեաց օ-դապարից խառնեա ըզսա սուրբ երամից · դա-սաւորեա ըզսա վերնոցն երգե՛լ քեզ փա՛ռս ընդ զըւա՞րթնո՛ցն ։

Ի՞ վերի՜նն երուսաղէմ ՛ի բնակարանըս հրեշ-տակաց · ո՞ւր ենո՜վք և հեզլիաս կան ծերացեալ



աղաւնակերպ · ՛ի՞ դրախտի՜ն եդեմական պայ-ծառացեալ արժանապէս · ո՞ղորմա՜ծ տէր ողոր-մեա հոգւոյըն մեր ննջեցե՞լո՛յ ։

Ակ

Ձեռըք քո՛ արարին և ստեղծին զիս ՛ի հո-ղո՜յ · ՛ի յօրհնել ըզքե՛զ աստըւա՜ծ յաւի-տեան ։ Իսկ պատրանո՛ք բանսարկուին խա-փանեցայ յանճառ լուսո՜յն · և դարձայ անդ-րէն ՛ի հո՛ղ յո՜րմէ առեղծայ ։ Մըխիթարի՛չ սուրբ հոգի լուսաւորեա զմեր ննջեցեա՜լսն · և հանգո՛ ըզհոգիս նոցա ընդ սուրբըս քո՛ ։

Ո՜վ գերահրաշ ծաղի՛կ բուրեալ յե՛դե՛մայ · հոտ անմահութեա՜ն ծնընդոցս Եւա՞յի · յորմէ սփռեցա՛ւ մահ ընդ տի՛ե՛զերս · օրհնութեամբ ըզքե՞զ մեծացո՛ւցա՜նեմք ։ Դո՜ւ լուծիչ եր-կա՛նց բարձող ա՛նի՛ծից · ծագումն արեւո՜ւ լուսոյն ճըշմա՞րտի որով հերքեա՛ւ խաւարն ա՛ռա՛ջին · օրհնու″ ։ Ըզքե՜զ ունիմըք բարե-խօ՛ս կոյս անհա՛րսնա՛ցեալ · մայր անարա՜տ էմ-մանո՛ւէ՞լի · տաճար բանի՛ն հօրն երկնա՛ւո՛րի · օրհնութեամբ ըզքե՞զ մեծացո՛ւցա՜նե՛մք ։

Սեղան քո տէ՜ր զօրութեա՛նց (Տէ· էՁ 132·)

(Այժմ և″·) Եւ նորոգո՛ղ սուրբ հոգի յորժամ նորոգես զապականեալսն · յա՛յնժամ շնորհեա

և մեր նընջեցելոցն արժանաւորի՛լ հանգըստեան օթևանի սըրբո՛ցն ։

Ալէլու՛ ալէլու՛. Բարձր առնեմ ըզքեզ Տէր, զի ընկալար զիս. և ո՛չ ուրախ արարեր ըզթըշնամին իմ յիս ։ Տէր Աստուած իմ կարդացի առ քեզ, և բըժըշկեցեր զիս. Տէր՝ հաներ ՚ի դըժոխոց զանձն իմ. և փըրկեցեր զիս յայնցանէ որք իջանե՛ն ՚ի գո՛ւբ ։ Ալէ՛. Օ՛րթի ։

Ծա՛նապա՛րհ մոլորելոց և ճառագայթ խաւարելոց. հրաւիրեցեր զորդիս լուսոյ ՚ի յերկնային հարսանիս քո. ընդ զուարճալից անդ ժողովոց արժանացո ըզսա դասուց. ՚ի լապտերօք մո՛յծ յառագաստ ընդ ի՛մաստո՛ւն սուրբ կո՛ւսա՛նա՛ցն ։

Թա՛գաւո՛ր փառաց քրիստոս որ ժամանեալ գաս ՚ի յերկնից. ՚ի՛ վերա՛յ թևոց հողմոց քո հայրենի կերպարանօք. և՛ առնե՛ս հրափորձութեամբ ըզքըննութիւն որդւոց մարդկան. ո՛ղ՛ ։

ԲՉ

Հրեշտակային ձայնիւ օրհնեսցուք զամենասուրբ զերրորդութիւնըն. փառաւորելով ըզհայր. որ վերակոչեաց զամենեսեան ՚ի մահուանէ յանմահութիւն ։ Երգեցէք տեառն երգ նոր եկեղեցիք սըրբեցելո՛ց. քրիստոսի երկիրպագելով. որ վերակոչեաց զամենե՛ ։ Սըրբասաց ձայնիւ օրհնեսցո՛ւք. հոգևորական հընչմամբ գովե՛ս-



ցուք. սուրբ զհոգին փառաւորելով. որ վերահանգոյց զամենեսեան ՚ի մահուանէ յանմա՛ ։

Խոնա՛րհեցար ՚ի բարձանց և մա՛րմնացար ՚ի կուսէն. որ նը՛ստէիրդ ՚ի քըրօբէ՛ս աթոռ արարիչդ արարածոց ։ Երկի՛նք չէին բաւական փառա՛ց անմահ անեղիդ. արգա՛նդ կուսին ժուժկալեա՛լ ընդունիլ զդանձդ երկնայի՛ն ։ Ցոր-մէ՛ սարսեալ սերովբէքն ոչ ի՛շխէին մերձենալ. ՚ի խա՛նձարուրս պատեցա՛ր և՛ եդար ՚ի մսուր անբանի՛ց ։

Այսօր խընդրի՛ պատուա՛. (Տէ՛ էՉ 143)

(Այժմ և՛.) Արժանաւորաց քոց աղօթիւք յիշեա ըզմեր ըզննջեցեալսն. յորժամ գայցես անճառ փառօք հատուցանել մարդկան ըստ գործս. և՛ մեր նընջեցելոյն շնորհեա դասիլ ընդ սուրբըս քո՛ ։

Ալէլու՛ ալէլու՛. Աստուած յանուան քում կեցո զիս, և ՚ի զօրութեան քում իրաւ արա ինձ ։ Աստուած լուր աղօթից իմոց. ունկըն դիր բանից բերանո՛յ իմո՛յ ։ Ալէ՛. Օ՛րթի ։

Փո՛ղովեա՛լքս ՚ի հրաժարումըն ծառայի քո յաշխարհէ. հայցեմք ՚ի քէն արտասուելով և պաղատիմք զայս ասելով. ճանապա՛րհ ընդ քեզ ելից հանգուցելոյս լեր ուղեկից. ՚ի յօթևանս հօր քո լուսոյ ըզն՛ը՛նջեցեա՛լըս մե՛ր հա՛նգո՛ ։

Իգնիլ բեմին բազմի փեսային և առագաստն զարդարի. գործեցէք փողն գոչէ սուրբք ամենայն անդր հաւաքին. արդարոց դասքն բերկրին իսկ մեղաւորքն թախանձին. սողոր"։

ԲԿ

Քեզ վայելէ աստուած օրհնութիւն. որ յանմատոյց աթոռ անմահից փառաւորանիս 'ի բարձունս. ըզնընջեցեալսըն յանուն քո ընկալ յերկնային քո սուրբ առագաստ. որ միածնդ ես մարդասէր։ Որ ունիս իշխանութիւն մահու և կենաց. յիշեա զհոգիս ննջեցելոց մերոց. և հանգո ընդ սուրբըս քո 'ի խորան քում սիրողաց. որ մի"։ Որ յամենայնի ես օրհնեալ տէր. արժանի արա ըզծառայս քո վերըստին նորոգման. 'ի լսել ըզձայն աստուածային փողոյն ընդ առաջ ելանել քոյ փառացդ. որ մի"։

Որ ողորմեցար 'ի մեզըս ծընեալ". (Տե․ էջ 130)

Ճառագայթ փառաց հօր որդիդ". (Տե․ էջ 115)

(Այժմ և"․) Որ մարմնացար վասըն մեր աղաչանօք աստուածածնին. քրիստոս յիշեա ըզնընջեցեալսն 'ի սուրբ անուն քո. և հանգո զհոգիս նոցա ընդ սուրբըս քո։



Ալէլու" ալէլու". Աստուած ողորմեա մեզ և օրհնեա ըզմեզ. երևեցո զերեսըս քո 'ի մեզ և ողորմեա մեզ։ Ճանաչել յերկրի ըզճանապարհըս քո. յազգինս ամենայն ըզփրկութիւնըս քո։ Ալէ". Օրթի։

Աստուած անեղ անժամանակ հայր անըսկիզբն և անքանակ. որդւոյ պատճառ ծնընդեամբ անճառ հոգւոյն բըղխմամբ անքըննաբար. աղաչեմք ըզքեզ գըթած երկայնամիտ և ողորմած. ողորմեա քո ստեղծուածոյս յուսով 'ի քեզ ննջեցելոյս։

Տէրոմահաղորդ չարչարանօք 'ի յանձն առեր ըզմահ խաչին. և փայտին բարձող եղեր վասն ադամայ նախաստեղծին. ողոր"։

ԳՁ

Ի ձայն մեծի զուարթնոյն և 'ի հընչումըն հրաշալի փողոյն. որ հողացեալ մարմինք մարդկան նորոգին. յայնմ աւուր ահեղին յիշեա տէր և ըզմեր ըզնընջեցեալսն և հանգո ընդ սուրբըս քո։ Յորժամ նըշան տէրունեան ճառագայթիւք փայլի. և թագաւորըդ թագաւորաց փառօք տեսանի. յայնմ աւուր ահե"։ Յորժամ ատեան դատաստանին դընի. և դըպրութիւնք հրաշիցըն բանին. յայնմ ա"։ Դասք անմարմնականք երկնաւոր զօրացն 'ի մէջ հովուացն օրհնէին ըզծագումըն լուսոյ

մեծին 'ի հօրէ մեզ 'ի փրկութիւն : Եւ մոգքն աստեղբ նշանաւ եկին 'ի բեթլեհէմ երկիր պագին տեառն. և 'ի յայրին մատուցին զընծայս խորհրդոյ : Եւ հովիւքն երգեն ընդ հրեշտակս փառք 'ի բարձունս մեծիդ աստուծոյ. որ եկիր և փրկեցեր զտիեզերս քոյով յայտնութեամբ :

Քե՛զ Քրիստոսի կաթուղիկէ եկե″. (Տե՛ս էջ 141)

(Այժմ և″.) Ի նշանիլ քո յատենի դա՛տաւո՛ր ա՛հեղ. աղաչանօ՛ք սուրբ աստուա՛ծա՛ծնին յիշեա զննջեցեա՛լսն մեր. յո՛րժամ դայցես անճառ փա՛ռօք. քանզի քո են փառք յաւիտեա՛նս ա՛մէն :

Ալէլու″ ալէլու″. Հաճեցա՛ր տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւն յակոբայ : Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո, և ծածկեցեր զամենայն մեղս նոցա : Ալէ″. Օրթէ :

Քահանայք և ժողովուրդք հայցեմք 'ի քէն տէր բարեգութ. ընդ ննջեցեալս հաւատով ընկալ զդոսա նովին յուսով. յերուսաղէմ քաղաք վերին յորում արդարքն ժողովին. փառս վերերգել միշտ ընդ նոսին երրո՛րդութեա՛նդ երրեա՛կ ա՛նձի՛ն :

Զա՛րհուրեցան զօրք երկնայինք յորժամ տեսին զտէրն 'ի խաչին. ա՛րեգակն լոյս քող-



արկեալ և լոյս լուսնին նուաղեցաւ. յա՛հեղ փառաց աստուածորդւոյդ խաւար եղև ընդ տիեզերս. Ողոր″ :

Գ.կ

Լո՛յս 'ի լուսո՛յ զմեզ լուսաւորեա. որ փառօք հօր համդերձեալ ես գա՛լ 'ի դատել զերկիր. ա՛րժա՛նաւորեա և զմեր զննջեցեալսն անճառ խոստմա՛նց քոց ընդ սուրբս քո : Հօ՛ր և հոգւո՛յ համագոյակից 'ի տիեզերակա՛ն ահեղ ատենին. ա՛րժա՛նա″ : Երկնի և երկրի արդար դատաւոր. յորժամ հատուցանես ըստ գործո՛ց իւրաքանչիւրոց. ա՛րժա՛նա″ :

Ա՛ստուածածին խորան լուսոյ ան″. (Տե՛ս էջ 89)

Ով պահապան որ ծա՛գեցար յեդեմայ. նշան յաղթութեա՛ն ընդդէմ աներևոյթ թշնամւոյն : Դու փակելոյ դրախտին բացօղ և առաջնորդ աւազակին. որ զքոյեղէն սուրբն կապտեա՛ց ա՛նեղին հրամանաւ : (Փառ.ք″.) Քև ցնծան ըստորնայինքս ամենայն 'ի միւսանգամ քո գալստեանն. և յաւէժ զուարճանա՛ն դասք ա՛նմարմնոցն առ էի՛ցս :

(Այժմ և″.) Որ ըստ նմանութեան մահո՛ւ քո՛տը նկա՛կի՛ց ա՛րա՛րեր. և երկնից արքայութեանդ ժառանգո՛րդ լի՛նե՛լ խո՛ստա՛ցար.

զՀաւատացեալս դալըստեան քո տէր․ ըզնըննջեցեալըն մեր ընդ սուրբըս քո հանգո թագաւոր յաւիտենից։

Ալէլու՛ ալէլու՛․ Տէր լուր աղօթից իմոց․ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ․ և մի դարձուցաներ զերեսըս քո յինէն։ Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո՛ առ իս զունկըն քո․ յորում աւուր կարդամ առ քեզ վաղվաղակի լուր ինձ։ Ալէ՛․ Օրհնի։

Նըստեալ կանանցն իւղաբերից և ողբային արտասուալից․ իբր ըզմեռեալ անյուսալից ըզկենդանին յաւխանենից․ վասըն նոցին սուրբ արտասուաց մաքրեա ըզսա ՚ի յանցանաց․ լի լապտերօք մոյծ յառագաստ ընդ իմաստուն սուրբ կուսանացն։

Ուրախացան ազգք մարդկան յորժամ լըւան զքո յարութիւնդ․ նորափետուր զարդարեցան ՚ի յարութեան սուրբ միածնիդ․ ողոր՛։

ԴՁ

Քանզի զքեզ օրհնեն իշխանութիւնք երկնից թագաւոր փառաց․ ամենակալ ամենակարող․ թող ըզմեղըս մեր ննջեցելոցն և հանգո ՚ի խորանի քում ՚ի յարքայական ՚ի հանգըստեան։ Որ ՚ի նախնումն ըզմարդարէն մովսէս լուսաւորեցեր աստուածային փառօք տես-



լեամբ աստուածութեանըդ քո․ լուսաւորեա՛ և ըզմեր ըզնըննջեցեալսն և հանգո ՚ի խորա՛։ Բարեխօսութեամբ սուրբ աստուածածնի ծընողի և մօր քո յիշեա՛ զգնեալս արեան քո տէր․ և դասաւորեա յերանաւէտ յանթառամ և յանպըրտում ՚ի կեանսդ․ ՚ի յարքայա՛։

Ծագումըն հրաշալի որ անյայտ էր ՚ի մէնջ, և բանըն հայրական անըմբըռնելի․ հուր փայլակնացեալ և ՚ի մարմնի բնակեցաւ․ անվընաս պահելով զարարածս ամենայն։ Ծագումըն հրաշագործ որ ՚ի կուսէն ծագեցաւ, ճառագայթելով զարարածս ամենայն․ երկինք ցընծային և երկիրս ուրախանայր․ և քրիստոս աստուած ընդ մարդկան շըրջեցաւ։ Առ քեզ ապաւինիմք ամենասուրբուհի․ գերագոյն և հրաշալի և բաշխող բարութեանց, աղբիւր ես ծարաւեաց և հանգիստ աշխատելոց․ և եղեր վերընկալ աստուածային բանին։

Զօրութիւն սուրբ խաչի քո քրիս՛․ (Տե․ էջ 137)

(Այժմ և՛․) ընդ հոգւոցն արդարոց կատարելոց․ և զհոգիս ծառայից քոց հանգո ընդ սուրբըս քո մարդասէր։

Ալէլու՛ ալէլու՛․ Մերձեսցին խընդրուածք իմ առաջի քո տէր, ըստ բանի քում իմաստուն

արա զիս։ Մըտցեն աղօթք իմ առաջի քո տէր, և բանիւ քով փրկեա զիս։ Ալէ․ Օրթի։

Կեանք 'ի կենաց լոյս 'ի լուսոյ որ ըստեղծեր զմեզ 'ի հողոյ, նորոգեցեր դարձեալ կըրկին ծնընդեամբ սըրբոյ աւազանին․ զոր կեցուցեր շնորհիւ քոյին 'ի մահուանէն այն առաջին․ 'ի յօթևանս հօր քո լուսոյ ըզննըջեցեալըս մեր հանգո՛։

Ուրախութեամբ զօրք երկնայինք յերկնից յերկիր իջանէին․ յորժամ յարեար 'ի մեռելոց լոյս ծագեցար արարածոց․ սուրբ յարութեամբ քո կենարար յալո ըզկա 'ի կեանս անմահ․ ո՛ղ։

ԴԿ

Հայր անըսկիզբըն բարերարա՛մ մարդասէր․ որ ստեղծիչդ ես հոգւոյ և մարմնոյ․ յիշեա զննըջեցեալըսն մեր և հանգո ընդ սուրբըս քո։ Որդի միածին որ գըթածդ ես առ ամենեսեան․ և խաչիւ և արեամբ գնեցեր ըզքո ժողովուրդս․ յիշեա զգինս արեան քո տէր և հանգո ընդ սուրբըս քո։ Հոգի դ ճըշմարիտ որ աղբիւրդ ես անըսպառելի․ և լըցուցիչ ամենայն բարութեանց․ յիշեա զննջե՛։

Աստուածածին մայր և կոյս, ծաղող արեգական արդարութեան, որ լուսաւորեցն ըզմեզ․ հոգևոր երգով զքեզ բարեբանեմք



և փառաւորեմք ըզմիածին քո զորդին։ Ելոյծ զօրէնըս բընութեան մարդկան՝ հրաշափառ քո ծընունդ․ և զէութիւն բնութեան ամբողջ պահեալ և կուսութեանըդ քո ոչ խախտեցան կընիք․ հոգևոր եր։ Զքեզ մորենի անկէզ լեառըն վիմածին դուռըն փակեալ և աղբիւր կընքեալ․ նախատեսացըն դուշակեալ մայր և կոյս․ հոգևոր եր։

Խաչի քո քրիստոս երկըրպագեն արարածք ամենայն որ 'ի փըրկութիւն մեզ կանգնեցաւ․ սա եղիցի մեզ պահապան յաղթօղ․ ապրեցուցանել ըզմեզ 'ի պատրանաց թըշնամւոյն։ Ի սմա բարձրացար բարձրող անիծից որ փառաւորեալդ ես ընդ հօր․ ժողովեալ ըզհեռացեալըսն կենսաբեր փայտիւն․ ապրե․ (փառք․) Սովաւ լուսաւորեցան արարածք ամենայն․ սմա սպասէին արդարեալքըն 'ի մեղսասէր բանտին․ որ ազատեաց ըզմեզ 'ի պատրա։ (Այժմ և․) Որ միւսանգամ գալոց ես հայրենի փառօք նորոգել զնախաստեղծին ծընունդ․ յիշեա զհոգիս ննըջեցելոց մերոց․ և հանգո ընդ սուրբըս քո։

Ալէլու․ ալէլու։ Ի խորոց կարդացի առ քեզ տէր՝ տէր՝ լուր ձայնի իմում։ Եղիցին ականջք քո 'ի լըսել ըզձայն աղօթից իմոց։ Ալէ․ Օրթի․

Է°րևեցա՜ր մարմնով յերկրի որ 'ի հօրէ ան-
մեկնելի · ընդ հողեղէնըս բնակեցար 'ի հրեղի-
նաց երկըրպագեալդ · պաղատանօք երկնաւո-
րաց փառաբանչաց քոց հրեշտակա՛ց · ողորմեա
քո ստեղծուածոյս յուսո՛վ 'ի քե՛զ նընջե՛ցե°լո՛յս ։

Զէ°ակի՜ցդ հօր զորդի փառաւորեմք անլքանե-
լի · ո°ր իջե՜ր 'յարդանդ կուսին զադամային
առեր մարմին · օ°գչանո՜ք աստուածածնին
անապական քում ծընօղին · օ°ղոր″ ։

———

Կանոնագլուխ ։ ԱՁ

Դատեա տէր զա՛յնոսիկ ո՛յք դա՛տե°ն զի՛ս ·
ա՛լէ՛լո°ւիա · մարտիր ընդ այնոսիկ ոյք մա՛ր-
տը՛նչի՛ն ը°նդ ի՛ս · ա՛լէ՛լո°ւիա՛ ։
Ա՛ռ բզզէն և զասպար քո և արի յօգնել ինձ ·
հան ըզսուր քո ընդդէմ հալածչայ իմոց , ար-
գել ըզնոսա · և ասա դու ցանձն իմ թէ փըր-
կո՛ւթի՛ւն քո՛ ե°ս ե՛մ · ա՛լէ՛լո°ւիա՛ ։
Ամաչեսցե՛ն և յամօթ լիցին ոյք խընդրէին
զանձն իմ · դարձցին յետս և ամաչեսցեն ոյք
խո՛րհէ՛ի՛ն ի°նձ չա՛ր · ա՛լէ՛լո°ւիա՛ ։
Եղիցի՛ն նոքա որպէս փոշի առաջի հողմոյ , և
հրեշտակ տեառըն նե՛ղե՛սցէ՛ զնո°սա՛ · ա՛լէ՛-
լո°ւիա՛ ։
Եղիցի՛ն ճանապարհք նոցա 'ի խաւար և 'ի գայ-
թակղութիւն , և հրեշտակ աստուծոյ հալա՛ծե՛ս-
ցէ՛ զնո°սա՛ · ա՛լէ՛լո°ւիա՛ ։



Ի նանի՛ր թագուցին ինձ որոգայթ յապակա-
նութեան իւրեանց , և 'ի նանիր նախա՛տե՛ցի՛ն
զա°նձն ի՛մ · ա՛լէ՛լո°ւիա՛ ։
Տէ՛ր յերկինս է ողորմութի°ւն քո , ճըշմարտու-
թի՛ւն քո՛ մի՛նչև° յա՛մպս · ա՛լէ՛լո°ւիա ալէլուիա՛ ։
Արդարութի՛ւն քո որպէս լերինք աստուած ,
իրաւունք քո որպէս խորք բազումք , զմարդիկ
և զանասուն կեցո՛ւցա՛նե՛ս դո°ւ տէ՛ր · ա՛լէ-
լո°ւիա ալէլուիա՛ ։
Որպէ՛ս զի բազում արարեր զողորմութիւն քո
աստուած , այլ որդիք մարդկան 'ի հովանի
թևո՛ց քո՛ց յո՛ւսա°սցի՛ն · ա՛լէ՛լո՛ւիա ալէլուիա՛ ։
Արբեսցի՛ն նոքա 'ի պարարտութենէ տան քո ,
և զուղխըս փափկութեան քո տացե՛ս ը՛մպե՛լ
նո°ցա՛ · ա՛լէ՛լո°ւիա ալէլուիա՛ ։
Ի քէ՛ն է տէր աղբիւր կենաց , և լուսով երեսաց
քոց տե՛սա՛նե՛մք ը°զլո՛յս , ա՛լէ՛լո°ւիա ալէլուիա՛ ։
Ծագեա՛ զողորմութիւնըս քո ոյք ճանաչեն ըզ-
քեզ , զարդարութիւնըս քո ոյք ո՛ւղի՛ղ ե՛ն
սը°րտի՛ւք · ա՛լէ՛լո°ւիա ալէլուիա՛ ։
Մի՛ եկեսցեն 'ի վերայ մեր ոտք ամբարտաւա-
նից , և ձեռք մեղաւորաց մի դողա՛ցո՛ւսցե՛ն
ը°զմե՛զ · ա՛լէ՛լո°ւիա ալէլուիա՛ ։
Ա՛նդ անկցին ամենեքեան ոյք գործեն զանօ-
րէնութիւն , մերժեսցին և այլ մի կարա՛սցե՛ն
հա՛ստա°տի՛լ · ա՛լէ՛լո°ւիա ալէլուիա՛ ։
Փա՛ռք հօր և որդւոյ և հոգւո՛յն սըրբոյ · Այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտե՛նի՛ց ա°մէ՛ն ·
ա՛լէ՛լո°ւիա ալէլուիա՛ ։

ԴԿ

(Ես ասացի․) Ի վերանալ յինէն աւուրց իմոց տէ՛ր օգնեա՛ ինձ միայն մարդասէր։ Զչարչարանըս խաչի և մահու յանձն առեր․ տէ՛ր օգ"։ Բարեխօսութեամբ սուրբ աստուածածնի և միշտ կուսի․ տէ՛ր օգնեա՛ ինձ մի"։

Ամենասուրբ երրորդութեանդ երկրպագեն զօրք երկնայինք․ և ստեղծուածք անարատ ձեռացդ․ փառաւորելով ըզտէրութիւնըդ քո հանապազ։ Ամենազօր խաչի քո տէր երկրպագեսցուք․ որով բարձեր ըզդատակնիք մահու քո արարածոց․ փառաւո"։ Ամենօրհնեալ աստուածամայր մարիամ․ քերոբէական աթոռ արարչին մերոյ տընօրէնութեան․ զո՛ր երանեցն ամենայն ազինք հանապազ։

Յարեար երևեցար առաքելոցն՝ և մեզ փըրկիչ ողորմեա։ Քե՛զ քրիստոսի թագաւորիդ անմահի․ երկի՛ր պագանեմք և զյարութիւնըդ քո փառաւորեմք։ Փառք փըրկողիդ և միածնիդ անմահի․ փըրկեա՛ զժողովուրդըս քո զոր ըստացար պատուական արեամբըդ քով սըրբո՛վ։ Աղբիւր կենաց բաշխող շնորհաց հոգիդ իջեալ ՚ի բարձանց․ զանապական պարգևըս քո բաժանեցեր յառաքելոյն։ Ո՛ր ՚ի վե-



րայ ջուրցըն գոլո՛վ ստեղծանէիր զարարածս․ իջեալ ՚ի ջուրս աւազանիս ծնանի՛ս որդիս աստուծոյ։ Ո՛ր զարդարեալ նորոգես մի՛շտ ըզնո՛ր քո զեկեղեցի․ պէսպէս շնորհաց քոց պարգևօք փայլե՛ն մանկունըք սորա։

Ի քե՛զ եմք ապաւինեալ քրիստոսի մա՛յր աստուծոյ մերոյ։ Որ քան զերկինըս բարձրագոյն մարիամ, պա՛րծանք եկեղեցւոյ․ քրիստո"։ Որ քան զարեգակըն պայծառագոյն մարիամ․ մի՛ դադարիր բարեխօսել վասըն մեր․ քրիստո"։

Խաչի քո քրիստոս երկրպագեն առ"․ (Տե՛ս էջ 183)

(Այժմ և"․) Ո՞ր ըզգըժո՛խս աւերեցեր և ըզգերեալըսն փըրկեցեր․ և զարգելեալըսն վերածեր ՚ի լոյս կենացըն յաւիտենից․ ողորմեա՛ տէր հրաժարելոյս զոր հրաւիրեա՛լ առ քեզ կոչեցե՛ր։

ԴԿ

Բանդ աստուած որ ՚ի ծոց հօր, վասըն մերոյ փըրկութեան ՚ի յերկնից խոնարհեցար․ զի զմեզ նորոգեսցես ՚ի կեանս․ աստըւած հարցըն մերոց։ Որ հանդերձեալ ես գալ փառօք հօր զարթուցանել ըզննջեցեալսն ՚ի սուրբ անուանըդ քո․ նորոգեա և ըզմեր ննջեցեալսն․ աստըւած"։ Անմահութեանց տըւօղ քրիստոս և

պարգևիչ կենդանութեան. 'ի միասնգամ գալըստեանն և յաշխարհակա՛ն ատենին. թողութիւն շնորհեա մեր նընջեցելոցն. աստը":
Որ նըստի ընդ աջմէ հօր ծընօղի իւրոյ. և մարդասիրապէս խընամէ զարարածըս. բա՛րձր արարէք ըզնա յաւիտեան: Որ զհողացեալ բնութիւն մարդկան նորոգէ իւր աստուածութեամբն և կենագործէ 'ի կեանս անմահ.

բա՛րձր արարէք ըզնա յաւիտեա՛ն:

Լեառըն վիմածի՜ն աղբիւր յորդառատ. բարունակ ծաղկեալ այգի վայելո՛ւչ սրբոյ հոգեղէն. րաբունւոյ բանի՜ն տունկ տնօրէնութեա՛ն, տաղաւար հոգւոյն. առ ծընեալն 'ի քէն միշտ բարեխօսեա՛ անդադար հայցմամբ շնորհել զթողութի՜ւն մեր նընջեցելոյն: փակկութեան դրախտի՜ն բացօղ բանալի, քրիստոսի բարձօղ նըմանօղ երկնից. սափոր ոսկեղէ՜ն լի մանանայի՛ւ, գաւազան ծաղկեալ յարմատոյն յեսսեա՛յ, տաճար լուսոյ մայր. առ ծը": Ցօղ քաղցրածաւա՜լ ցանկալի զուարթնոցն. նիւթեղէն սրբէ գեղ մարգարտափա՛յլ հիմն եկեղեցւոյ. մաքուր աղաւնի ամպ հովա-

նաւո՛ր սուրբ կոյս մարիամ. առ ծըն":

Ով սքանչական որ ծաղկեցար յեղև". (Տե. էջ 179)



(Այժմ և".) Ըզգի՛նս արեան քո յիշեա կենա՛գործօղ աշխարհի, և հանգըստեան արժանա-

ւորեա յերո՛ւսաղէմըն վերի՛ն:

Դա՛րձ անձն ի՛մ 'ի հանգի՛ստ քո՛, զի տէ՛ր
օ՛գնեա՞ց քե՛զ:
Սիրեցի՛ զի լուիցէ տէր ըզձայն աղօթի՛ց իմոց. զի խոնարհեցո՛յց զունկն իւր առ իս, և ես
յաւուրս իմ կարդացի՛ առ նա:
Շըրջեցա՛ն զինև երկունք մահու, և վիշտք
դըժոխոց գըտի՛ն զիս:
Զնեղութի՛ւն և զանձկութիւն գըտի, և զա-
նուն տեառըն կա՛րդացի:
Ո՛ տէր՝ փըրկեա զանձն իմ, ողորմած աստուած
մեր, ողորմի և պահէ ըզտը՛ղայս տէր:
Ե՛ս խոնարհ եղէ և տէր կեցո՞յց զի՛ս:
Դա՛րձ անձն ի՛մ 'ի հանգի՛ստ քո՛, զի տէ՛ր
օ՛գնեա՞ց քե՛զ:

---

Երգ Հարսանեաց:

Նշանի: Ակ

Նըշանաւ ամենայաղթ խաչիւըդ". (Տե. էջ 140)

(Այժմ և".) Ի յամուլ երկրէ այսօր բու". (Տե. էջ 125)

Հալաւի: Բկ

Զքրիստոս թագաւորն որ էն 'ի յա". (Տե. էջ 47)

Այսօր երկնայինքըն ուրախացան ընդ երկրա՛ւորացս նորոգումն. քանզի նորոգօղն էից հո-

գին է՛ջ 'ի սուրբ վերնատունն․ որով նորոգեցա՞ն դասք առաքելոցն։ Այսօր հողանիւթեայ բնութիւնս ցընծա՛յ ընդ հօր հաշտութեան․ քանզի որ եբարձ զհոգին 'ի մարդկանէ՛ մարմին եղելոյ․ դարձեալ վերըստի՞ն ըզնոյն պարգևէ։ Այսօր մանկունք եկեղեցւոյ տօնեն ցընծութեա՛մբ զգալուստ սուրբ հոգւոյն․ որով զարդարեցան 'ի զգեստըս լուսափա՛յլս և գերապայծառս․ երգեն ընդ սրո՛բէ՞ն զերեքսրբեանի՛ն։

Որ զվիճաբանեալըն յաշտարակին բաժանմա՛մբ լեզուացըն քակեաց․ այսօր զբաժանեալ լեզուս ազգաց միաբանեաց դարձեա՛լ 'ի սուրբ վերնատունն․ ա՞մենայն հոգիք օրհնե՛ցէ՞ք զհոգին աստուծո՛յ։ Որ էջ հոգին տեառն և առաջնորդեաց երկոտասան ցեղից իսրայէլի՛ 'ի յանապատին․ այսօր երկոտասան առաքելոցն առաջնորդէ՛ 'ի յաւետարանն․ ա՞մենայն հոգ″։ Որ ելից հոգին տեառն ըզբեսելիէլ ճարտա՛րապետ խորանին․ այսօր չինէ զմարդիկ խորա՛ն սուրբ երրորդութեանն․ ա՞մենայն հոգիք օրհ″։

Ուրա՛խ լեր մա՛յր լուսո՛յ մարի՜ամ, երկիր բա՛նաւո՛ր արե՛գակա՛նն օթա՜րան․ լեր բա՛րեխօ՜ս վա՛սն անձա՜նց մերոց։ Խընդա՛ տաճա՛ր բանի՛ն աստո՜ւծոյ․ բարձող տը՛րտմութեա՛ն նախա՛մօրն եւայի․ լեր բա՛րե″։ Ցընծա՛ իմա՛նալի՛ արե՜ւելք․ քանզի քե՛ւ ծագեա՛ց մեզ լո՛յս երե՛սաց քրի՜ստոս․ լեր բա″։



Ճաշակմամբ մեղաց, ճաշեցի ըզմահ, ճոխս աղքատացայ։ Մեռեալ եմ հոգւովս, մեղորեալ մըտօքս, միայն կամ մարմնովս․ տէր ող″։

Յորոգայթ մահու, յորսողին անկայ, յաղթեցայ յախտից։ Նետից թըշնամւոյն, նըշաւակ եղէ, նոր միշտ խոցոտիմ․ տէր ող″։

Շուրջ պատեալ զինև, շունք բազումք եղեն, շաղախին արեամբս։ Որս եղէ չարին, ուռկանաւ մեղաց, որսացաւ անձն իմ․ տէր ող″։

Ջարաչար վըշտօք, չարչարի անձն իմ, չունիմ դադարումն։ Պարտապան գըտայ, պարտուց յանցանաց, պարտեալս 'ի մեղաց․ տէր ող″։

Ջանամ զըղջանալ, ջեռանիմ դարձեալ, ջեռնում հրով մեղաց։ Ռաբբի կոչեցայ, ռակայ անուանիմ, ռամկական վարուքս․ տէր ող″։

Սիրով ցանկութեան, սաստիկ բարկութեան, սիրտ իմ խոցեալ է։ Վիրօք յանցանաց, վըշտանայ հոգիս, վարանեալ շըրջիմ․ տէր ող″։

Տիրեցին ինձ չարք, տարագիր հանին, տիրական գըրկացն։ Րաբունւոյ բարւոյ, րախճական ձայնին, րոտինս ո՛չ լըսայ․ տէր ող″։

Ցանկութիւն չարեաց, ցանկալի գիմօք, ցաւեցոյց զաչս իմ։ Ւիւրաքանչիւրոց, ւիւսմամբ խուռն ախտից, ւիւծեալ է հոգիս․ տէր ող″։

Փութացի՛ր անձն իմ, փախչիլ 'ի չարեաց, փափագիլ բարեաց։ Քեզ միշա մե՛րձ ծանիր, քուն մահու եկեալ, քըննօղ դատաւոր․ տէր ող″։

Աստուածածնին բարեխօսութեամբ, յիշեա տէ՛ր և ողորմեա՛։

Եւս Տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի ։

Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեա՛ ։ Բղխումն 'ի Հօրէ՛, բղխեա 'ի հոգւոյս, բան քեզ 'ի հաճոյս ։

Գանձդ ողորմութեան, գանձիդ ծածկելոյ, գտող զիս արա ։ Դուռն ողորմութեան, դաւանողիս բաց, դասեցո վերնոց ։

Երրեակ միութիւն, եղելոց խնամող, և ինձ ողորմեա ։ Զարթիր տէր յօգնել, զարթո ըզթմրեալս, զուարթնոց նմանիլ ։

Էդ հայր անըսկիզբն, էակից որդի, է միշտ սուրբ հոգի ։ Ընկալ զիս գթած, ընկալ ողորմած, ընկալ մարդասէր ։

Թագաւոր փառաց, թողութեանց տուող, թող ինձ ըզյանցանս ։ Ժողովող բարեաց, ժողովեա և զիս, ժողովս անդրանկաց ։

Ի քէն տէր հայցեմ, 'ի մարդասիրէդ, ինձ ըժշկութիւն ։ Լեր կեանք մեռելոյս, լոյս խաւարելոյս, լուծանող ցաւոյս ։

Խորհրդոց գիտող, խաւարիս շնորհեա, խորհուրդ լուսաւոր ։ Ծընունդ հօր ծոցոյ, ծածկելոյս տուեալ, ծագեա զլոյս փառաց ։

Կենարար փրկիչ, կեցո ըզմեռեալս, կանգնեա զգլորեալս ։ Հաստեա հաւատով, հաստատեա յուսով, հիմնեցո սիրով ։

Ձայնիս աղաչեմ, ձեռօքս պաղատիմ, ձիր բարեաց շնորհեա ։ Ղամբարամբ լուսոյ, ղեկավար ճարտար, ղօղեալս ամրացո ։



Ճառագայթ փառաց, ճանապարհ ինձ ցոյց, ճեպել 'ի յերկինս ։ Միածինդ հօր, մայծ զիս յառագաստ, մաքուր հարսանեաց ։

Յորժամ գաս փառօք, յահագին աւուրն, յիշեա զիս քրիստոս ։ Նորոգող հնութեանց, նորոգեա և զիս, նորոգ զարդարեա ։

Շնորհատու բարեաց, շնորհեա զքաւութիւն, շնորհեա զթողութիւն ։ Ուրախացո տէր, ոգւոյս փրկութեամբն, որ վասն իմ 'ի սուգ ։

Չար մըշակողին, չար սերմանց նորին, չորացո զպտուղն ։ Պարգեւիչ բարեաց, պարգեւեա իմոյ, պարտեացս թողութիւն ։

Ջուր շնորհեա աչացս, ջերմ հեղուլ արտօսր, ջնջել ըզյանցանս ։ Ռետինդ քաղցու, ռամ հոգւոյս արբո, ռահ ցոյց ինձ լուսոյ ։

Սէր անուն յիսուս, սիրով քով ճըմլեա, սիրտ իմ քարեղէն ։ Վասըն գթութեան, վասըն ողորմութեան, վերըստին կեցո ։

Տենչալւոյդ տեսլեամբ, տուր ինձ յագենալ, տէր յիսուս քրիստոս ։ Րաբունդ երկնաւոր, րոտեա զաշակերտս, րամից երկնայնոց ։

Ցօղ արեան քո տէր, ցօղեա 'ի յոգիս, ցընծացէ անձն իմ ։ Ւիւծեալըս մեղօք, ւիւծեալ աղաչեմ, ւիւսել ինձ բարիս ։

Փրկիչ բոլորից, փութա զիս փրկել, փորձութեանց մեղաց ։ Քաւիչ յանցանաց, քաւեա զորհնաբանս, քեզ երգել ըզփառս ։

Աստուածածնին բարեխօսութեամբն՝ յիշեա տէր՝ և ողորմեա ։

Քարոզ ։

Վասն 'ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց, զտէ՛ր աղա"․ Տէ՛ր ող"։ վասն լսելի լինելոյ տեա՛ռն աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց, զտէր աղա"։ վասն քաւի՛չ և ներո՛ղ լինելոյ աստուծոյ՝ 'ի վերայ մեղաց մերոց, զտէր աղա"։ վասն թողլո՛յ մեզ զամենայն յանցանքս մեր՝ զկամայ և զակամայ, զտէր աղա"։ վասն՝ զի մի՛ ընդ խոտանսն գտանիցիմք յաւուրն պատասխանատուութեան, զտէր աղա"։ վասն հոգւո՛յն հանգուցելոց՝ որք ճշմարիտ և ուղիղ հաւատով 'ի քրիստոս ննջեցին, զտէր աղա"․ Յիշեա՛ տէր և ողո"։ Եւ և՛ս միաբա՛ն վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ, զտէր ա"։ Զանձինս մե՛ր և զմիմեանս տեա՛ռն աստուծոյ ամենակալին յա՛նձն արա՛սցուք․ Քեզ տեառնդ յանձն եղիցուք։ Ողորմեա՛ց մեզ տէր աստուած մե՛ր ըստ մեծի ողորմութեան քում․ ասասցուք ամենեքեան միաբանութեամբ․ տէր ող"․ տէր ող"․ տէր ող"։

Վասն 'ի գիշերի՛ և 'ի տուընջեան և յամենայն ժամու խօսիլ մեզ զբան տեառն, զտէր աղա"։ վասն չանկանելո՛յ մեզ 'ի փորձութիւն, որում ո՛չ կարեմք հանդուրժել, զտէր"։ վասն անբիծ և անդատապարտ կալոյ մեզ առաջի ահեղ ատենին քրիստոսի, զտէր"։ Վասն առաջնորդելո՛յ մեզ 'ի նաւահանգիստն կենաց անվախճանից, զտէր"։ վասն արժանի՛ լինելոյ մեզ վերին կոչմանն և երկնից արքայութեան, զտէր աղ"։



Վասն հոգւոյն"։ Եւ և՛ս"։ Զանձինս"։ Ողորմեաց"։

Վասն ուղղելո՛յ զգնացս մեր 'ի ճանապարհս խաղաղութեան, զտէր աղա"։ վասն ցրելո՛յ 'ի մէ՛նջ զամենայն խորհուրդս չարին, զտէր աղ"․ վասն պարգևելո՛յ մեզ առողջ խորհուրդս և առաքինի վարս, զտէր աղա"։ վասն պահելո՛յ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ, զտէր աղ"։ վասն խորտակելո՛յ զհակառակորդս վաղվաղակի ընդ ոտիւք մերովք, զտէր աղա"․ Վասն հոգւոյն"․ Եւ և՛ս"․ Զանձինս"․ Ողորմեաց"․

Վասն գտանելո՛յ մեզ զշնո՛րհս և զողորմութիւն 'ի բարերար տեառնէ մերմէ, զտէր աղ"․ վասն փրկելո՛յ զմեզ 'ի զրպարտութենէ մարդկան՝ և յորոգայթից սատանայի, զտէր աղա"․ վասն ամենա՛յն անձանց քրիստոնէից և տանց հաւատացելոց, զտէր ա"։ վասն ո՛րք 'ի լերինս և յա՛յրս և 'ի փապարս բնակեալ են սուրբ հարքն մեր, զտէր աղա"․ վասն ո՛րք սաղմոսիւք և օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց․ զտէր աղա"․ Վասն հոգւոյն հան"․ Եւ և՛ս"․ Զանձինս"․ Ողորմեաց"․

Վասն սուրբ տեղւո՛յս շինութեան և բարեկարգութեան՝ զտէ՛ր աղաչե՛սցուք․ Տէ՛ր ող"․ վասն ժողովրդեա՛նս որք մտանեն ընդ դրունս սրբոյ եկեղեցւոյ՝ զտէր աղաչեսցուք․ վասն ընդունելո՛յ զպաղատա՛նս սոցա ըստ մեծի ողորմութեան իւրում՝ զտէր աղաչեսցուք ։ Վասն հոգւոյն"․ Եւ և՛ս"․ Զանձինս"․ Ողորմեաց"։

Օրհնութիւն Երից Մանկանցն․

Օրհնեալ ես տէր աստուած հարցըն մերոց․ օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան․

Յիրաւունս անցուցեր զայս ամենայն ընդ մեզ․ արդար ես դու տէր, և ամենայն գործք քո ճշմարիտ են։

Ճանապարհք քո ուղիղ են, և ամենայն դատաստանք քո արդար են։

Դատաստան արդարութեան ածեր 'ի վերայ մեր, ըստ ամենայնի զոր ինչ ածեր 'ի վերայ մեր և քաղաքի սրբոյ հարցն մերոց Երուսաղեմի։

(և այլն, Տես 'ի ժամագիրս.)

Երգ Մարիամու Աստուածածնին։

Մեծացուսցէ անձն իմ զտէր, և ցնծասցէ հոգի իմ աստուծով փրկչաւ իմով․

Այց արար 'ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ․ այսուհետև երանիցեն ինձ ամենայն ազգք։

(և այլն․ տես 'ի ժամագիրս․)

Ալէլուիա ալէլուիա։

Օրհնեցէ՛ք զտէր յերկնից, օրհնեցէ՛ք զնա 'ի բարձանց,

Օրհնեցէ՛ք զնա ամենայն հրեշտակք նորա, օրհնեցէ՛ք զնա ամենայն զօրութիւնք նորա։

( և այլն․ Տե՛ս 'ի ժամագիրս. )

Սաղմոս։

Օրհնեցէ՛ք մանկունք զտէր, և օրհնեցէք զա՛նուն տեա՛ռն։

Եղիցի՛ անուն տեառն օրհնեա՛լ յայսմհետէ մինչև յա՛ւիտեա՛ն։



Յարևելի՛ց մինչև 'ի մուտս արևու օրհնեալ է ա՛նուն տեա՛ռն։

Բա՛րձր է 'ի վերայ ամենայն ազգաց տէ՛ր, և յերկինս են փա՛ռք նորա՛։

Ո՛վ է որպէս տէր աստուած մեր 'ի բարձունս բնակեա՛լ, և զխոնարհս տեսանէ յերկինս և՛ յերկրի՛։

Յարուցանէ՛ զաղքատս յերկրէ, և բարձր առնէ զտառապեալս յա՛ղբեա՛ց։

Նստուցանէ՛ զնոսա իշխանս՝ ընդ իշխանս ժողովրդեա՛ն իւրո՛յ։

Բնակեցուցանէ՛ `զամուլն 'ի տան ուրախամի՛տ․ որպէս մայր որդւո՛վք բերկրեա՛լ․

Սաղմոս։

Բանից իմոց ո՛ւնկն դիր տէր, և 'ի մի՛տ առ զաղաղակ իմ․

Նայեա՛ 'ի ձայն աղօթից իմոց, թագաւոր իմ և աստուած իմ։

Ես զքեզ աղաչեմ տէր, ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում, ընդ առաւօտս պատրաստ եղէց յանդիման լինիլ առ քեզ․

Ո՛չ թէ դու աստուած կամիս զանօրէնութիւն, և ո՛չ բնակին առ քեզ չարք, և անօրէնք մի՛ բնակեսցին առաջի աչաց քոց։ (և այլն․)

Սաղմոս։

Խոնարհեցո՛ տէր զունկն քո և լո՛ւր ինձ, զի աղքատ և տնանկ եմ ես։

Պահեա՛ զանձն իմ սուրբ՝ տէր, և փրկեա ըզ-

ծառայս քո աստուած որ 'ի քեզ յուսացայ ։
Ողորմեա՛ ինձ տէր՝ զի առ քեզ աղաղակեցի
զօրհանապազ· ուրա՛խ արա զանձն ծառայի քո
զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ ։
Զի դու տէր քաղցր և ուղիղ ես, բազումո-
ղորմ առ ամենեսեան որք կարդան առ քեզ ։
Ո՛ւնկն դիր տէր աղօթից իմոց, և նայեա՛ 'ի
ձայն խնդրուածոց իմոց ։
Յաւուր նեղութեան իմոյ կարդացի առ քեզ և
լուար ինձ ։
Ո՛չ ոք է նման քեզ յաստուածս տէր, և ո՛չ
ոք է որպէս զգործս քո ։
Զամենայն ազգս զոր արարեր՝ եկեսցեն և եր-
կիրպագցեն առաջի քո տէր, և փառաւոր ա-
րասցեն զանուն քո յաւիտեան ։
Մեծ ես դու տէր և առնես սքանչելիս, և
դու միայն ես աստուած ։
Առաջնորդեա՛ ինձ 'ի ճանապարհի քում· և
գնացից 'ի ճշմարտութեան քում, և ուրախ ե-
ղիցի սիրտ իմ յերկնչիլ յանուանէ քումմէ ։
Խոստովան եղէց առ քեզ տէր աստուած իմ
բոլորով սրտիւ իմով· և փառաւոր արարից
զանուն քո յաւիտեան ։
Մեծ եղև 'ի վերայ իմ ողորմութիւն քո տէր,
և փրկեցեր զանձն իմ 'ի դժոխոց ներքնոց ։
Աստուած՝ անօրէնք յարեան 'ի վերայ իմ, և
ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ, և ո՛չ
համարեցան զքեզ աստուած առաջի իւրեանց ։
Այլ դու տէր աստուած իմ գթած ես և ո-



ղորմած, երկայնամիտ, բազումողորմ և ճըշ-
մարիտ . Նայեա՛ առ իս և ողորմեա՛ ինձ ։
Տո՛ւր զօրութիւն ծառայի քո, կեցո՛ զորդի ա-
ղախնոյ քո, և արա՛ առ իս նշան բարութեան ։
Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն· զի դու
տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս ։
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ։
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից
ամէն ։

Ապրեցո՛ զիս տէր 'ի մարդոյ չարէ, յառնէ ա-
նիրաւէ փրկեա՛ զիս ։
Խորհեցան զանօրէնութիւն 'ի սիրտս իւրեանց,
զօր ամենայն պատրաստեցան 'ի պատերազմ ։
Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի, և թոյնք
իժից 'ի ներքոյ շրթանց նոցա ։
Պահեա՛ զիս տէր 'ի ձեռաց մեղաւորի, և 'ի
մարդոյ չարէ փրկեա՛ զիս ։
Խորհեցան խափանել զգնացս իմ, թագուցին
ամբարտաւանք որոգայթ ինձ ։
Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց . շուրջ պշաւ-
ղօք իմովք եդին ինձ գայթագղութիւն ։
Ասացի՝ տէր աստուած իմ ես դու, ո՛ւնկն
դիր տէր ձայնի աղօթից իմոց ։
Տէր՝ տէր զօրութիւն փրկութեան իմոյ, հովա-
նի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի ։
Մի՛ մատներ զիս տէր 'ի ցանկութիւն մեղաւո-
րաց՝ ոյք խորհեցան վասն իմ, ընդ վայր հար-
կանել զիս ։

Զի մի՛ երբէք բարձրասցին, և խորհուրդք նոցա մի՛ կատարեսցին. գլխեան կատարածի նոցա՝ վաստակ շրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա։

Արկցես 'ի վերայ նոցա զկայծակունս հրոյ, և կործանեսցես զնոսա. 'ի տառապանաց մի՛ կարասցեն կեալ։

Մարդոյ լեզուանւոյ մի՛ յաջողեսցի 'ի վերայ երկրի. զայր մեղաւոր՝ չարիք իւր որսասցեն 'ի կորուստ։

Ծանեայ, զի առնես տէր՝ զդատաստանս աղքատի, և իրաւունս տնանկի։

Արդարքն գոհասցին զանուանէ քումմէ. և բնակեսցեն ուղիղք առաջի երեսաց քոց։

Տէր՝ կարդացի առ քեզ և լո՛ւր ինձ. նայեա՛ 'ի ձայն աղօթից իմոց 'ի կարդալ իմում առ քեզ։

Ուղի՛ղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո տէր, համբարձումն ձեռաց իմոց՝ պատարագ երեկոյի։

Դի՛ր տէր՝ պահապան բերանոյ իմոյ, և դուռն ամուր շրթանց իմոց. զի մի՛ խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան։

Ի պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս որք գործեն զանօրէնութիւն. և ո՛չ եղէց կցորդ ընտրելոց նոցա։

Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ և յանդիմա՛ն արասցէ. իւղ մեղաւորի մի՛ օծցէ զգլուխ իմ, այլ աղօթք իմ 'ի կամս նորա։

Արդելան մերձ առ վիմին դատաւորք նոցա, լուիցեն բանից իմոց և քաղցրասցին։



Որպէս թանձրութիւն հողոյ զի սփռեալ է 'ի վերայ երկրի, ցրուեսցին ոսկերք նոցա մերձ 'ի դժոխս։

Առ քեզ տէր տէր՝ են աչք իմ. 'ի քեզ յուսացայ, մի՛ հաներ զհոգի յինէն։

Պահեա՛ զիս յորոգայթէ որ թագուցաւ ինձ, 'ի գայթակղութենէ գործողին զանօրէնութիւն։

Անկցին 'ի ցանցս նորա մեղաւորք. միայն եմ ես մինչև անցից։

Ձայնիւ իմով ես առ տէր կարդացի, ձայնիւ իմով զտէր աղաչեցի։

Սփռեցից առաջի տեառն զաղօթս իմ, և զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից։

Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ, դու տէր՝ ծանեար զշաւիղս իմ. 'ի ճանապարհ յոր և գնայի թագուցաւ ինձ որոգայթ։

Հայէի յաջմէ՝ տեսանէի, և ո՛չ ոք ճանաչէր զիս. կորեաւ յինէն փախուստ իմ և ո՛չ գտաւ խնդրող անձին իմոյ։

Աղաղակեցի առ քեզ տէր՝ և ասացի, դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց։

Նայեա՛ տէր յաղօթս իմ զի ես խոնարհ եղէ յոյժ. ապրեցո՛ զիս 'ի հալածչաց իմոց, զի հզօրք եղեն քան զիս։

Տէր՝ հա՛ն 'ի բանտէ զանձն իմ, գոհանամ զանուանէ քումմէ։

Ի քեզ սպասեն արդարքն մինչև հատուսցես։

Փառք հօր և որ՛՛. Այժմ և միշտ և յա՛՛։

Սաղմոս.

Համբարձի զաչս իմ 'ի լերինս, ուստի եկեսցէ
ինձ օգնութիւն.
Օգնութիւն ինձ 'ի տեառնէ եկեսցէ, որ արար
զերկինս և զերկիր.
(և այլն. տես 'ի ժամագիրս.)

Սաղմոս.

Որ բնակեալն է յօգնութիւն բարձրելոյն, ընդ
հովանեաւ աստուծոյ յերկնից հանգիցէ.
Ասասցէ տեառն՝ ընդունող իմ ես. ապաւէն
իմ աստուած, և ես յուսամ 'ի նա.
Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին, և 'ի
բանիցն 'ի խռովութենէ.
Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. 'ի հովանի
թևոց նորա յուսասցիս.
Որպէս զէն շուրջ եղիցի զքև ճշմարտութիւն նորա.
Ո՛չ երկիցես դու յերկիւղէ գիշերի, և ո՛չ 'ի
նետէ՝ որ թռչի 'ի տուէ.
Յիրէ որ շրջի 'ի խաւարի, 'ի գայթակղութենէ
դիւին 'ի հասարակ աւուր.
Անկցին 'ի կողմանէ քումմէ հազարք, և բիւրք
ընդ աջմէ քումմէ. և առ քեզ ինչ ո՛չ մերձեսցին.
Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու, և զհա-
տուցումն մեղաւորաց տեսցես. զի դու տէր
յոյս իմ ես.
Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն, զի ո՛չ
հասցեն առ քեզ չարք. և տանջանք մի՛ մեր-
ձեսցին 'ի յարկս քո.



Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո,
'ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո.
Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ. զի մի՛ եր-
բէք հարցես զքարի զոտն քո.
Ի վերայ իժից և քարբից գնասցես դու. և առ
ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն.
Քանզի յիս յուսացաւ, և փրկեցից զնա. հո-
վանի եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ.
Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա. և առ
նմա եղէց 'ի նեղութեան.
Փրկեցից և փառաւոր արարից զնա. երկայն
աւուրբք լցուցից, և ցուցից նմա զփրկութիւն իմ.
Առ քեզ տէր համբարձի զաչս իմ. որ բնա-
կեալդ ես 'ի յերկինս.
Որպէս աչք ծառայի 'ի ձեռն տեառն իւրոյ.
և որպէս աչք աղախնոյ 'ի ձեռն տիկնոջ իւրոյ.
Այնպէս են աչք մեր առ քեզ տէր աստուած
մեր, մինչև ողորմեսցիս 'ի վերայ մեր.
Ողորմեա՛ մեզ տէր՝ ողորմեա՛ մեզ. զի բազում
լցաք արհամարհանօք.
Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք.
որք նախատէին զմեզ. և արհամարհանօք ամ-
բարտաւանից.
Աստուած յանուն քում կեցո՛ զիս, և 'ի զօ-
րութեան քում իրա՛ւ արա ինձ.
Աստուած՝ լո՛ւր աղօթից իմոց. ո՛ւնկն դիր
բանից բերանոյ իմոյ.
Օտարք յարեան 'ի վերայ իմ, և հզօրք խընդ-

րեցին զանձն իմ . և ո՛չ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց :

Ահա՛ Աստուած օգնական իմ . և Տէր ընդունող հոգւոյ իմոյ :

Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիսն իմ , ճշմարտութեամբ քով սատակեա զնոսա :

Իս կամօք իմովք պատարագս մատուցից քեզ . և խոստովան եղէց անուան քում՝ Տէր , զի բարի է :

Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս . և 'ի թշնամիս իմ ետես ակն իմ : Փառք". Այժմ" :

Փոխ Կիրակամտէ :

Աստ օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն ըզՏէր . որ կայք 'ի տուն Տեառն , և 'ի գաւիթս Աստուծոյ մերոյ :

Ի գիշերի համբարձէ՛ք զձեռս ձեր 'ի սրբութիւն , և օրհնեցէ՛ք զՏէր :

Օրհնեսցէ զքեզ Տէր 'ի Սիոնէ . որ արար զերկինս և զերկիր :

Խոստովան եղէց քեզ Տէր՝ բոլորով սրտիւ իմով . առաջի հրեշտակաց սաղմոս ասացից քեզ :

Զի լուար զբանս բերանոյ իմոյ . երկիրպագից 'ի տաճար սուրբ քո . և խոստովան եղէց անուան քում , վասն ողորմութեան և ճշմարտութեան քո :

Մեծ արարեր յամենայնի զանուն սուրբ քո . յորում աւուր կարդամ առ քեզ , վաղվաղակի լո՛ւր ինձ . և բազում արասցես զօրութիւն յանձն իմ :



Խոստովան եղիցին առ քեզ ամենայն թագաւորք երկրի , զի լուան զբանս բերանոյ քո , և օրհնեսցեն զճանապարհս քո :

Մեծ են փառք Տեառն . բարձր է Տէր . ըզխոնարհս տեսանէ , և զբարձունս 'ի հեռաստանէ ճանաչէ :

Թէ գնացից ես 'ի մէջ նեղութեանց , կեցուսցես զիս 'ի բարկութենէ թշնամւոյն :

Ձգեցեր զձեռն քո և փրկեաց զիս աջ քո . և Տէր հատուսցէ ընդ իմ :

Տէր՝ ողորմութիւն քո յաւիտեան . զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ :

Աստուած՝ յանուան քում" : Եւ այլն տես էջ 209 :

Սաղմոս :

Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած՝ ըստ արդարութեան . 'ի նեղութեան ինձ անդորր արարեր . ողորմեա՛ ինձ և լո՛ւր աղօթից իմոց :

Որդիք մարդկան՝ մինչև յե՞րբ էք խստասիրտք . ընդէ՞ր սիրէք զնանրութիւն , և խնդրէք զստութիւն :

Ծանիրո՛ւք՝ զի սքանչելիս արար Տէր սրբոյ իւրում . և Տէր լուիցէ ինձ 'ի կարդալ իմում առ նա :

Բարկանայք՝ և մի՛ մեղանչէք . զոր ինչ ասէք 'ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարո՛ւք :

Մատուցէ՛ք պատարագս արդարութեան , և յուսացարուք 'ի Տէր :

Բազումք ասէին թէ ո՞ ցուցցէ մեզ զբարու-

թիւն տեառն. Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութիւն սրտից մերոց։ Ի պտղոյ ցորենոյ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա։

Խաղաղութեամբ յայս և 'ի սոյն ննջեսցուք և զարթիցուք. զի դու տէր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ։

(և այլն. փոխ 'ի ժամոքէր.)

---

Շարական հանգերձի՝ յարժամ գիշերոյ ։

Խորհուրդ խորին անհաս ա՛նսկիզբն. որ զարդարեցեր զվերին պետութի՛ւնդ. 'ի յառագաստ անմատոյց լո՛ւսո``ւս. գերապանծ փառօ՜ք զդասս հրեղինա՛ց։ Անճառահրաշ զօ՜րութեամբ ստեղծեր զադամ պատկեր տիրակա՛ն. և նախելի փառօք զգեստաւորե՛ցե``ր. 'ի դրախտն ադենի՜ տեղի բերկրանա՛ց։ Զարչարանօք քո սուրբ մի՛ածնիդ նորոգեցան արարածք ամենա՛յն. և վերըստին մարդն անմահա՛ցա``ւ. զարդարեալ 'ի զգե՜ստ անկողոպտելի՛։ Անձրևածին բաժակ հրա՜հոսան. որ հեղար յառաքեալսն 'ի սուրբ վերնատա՛նն. հեղ և 'ի մեզ հոգիդ սուրբ աստո՛ւա``ծ. ընդ պատմուճանի՜ն զքո զիմաստութի՛ւն. Տան քում վայելէ սո՛ւրբութիւն. որ բղխեցար բղխայիլչութի՛ւն. սրբութիւն



փառաց ընդ մէջ քո ա՛ծեա``լ. պատեա զմե՜ջս մեր ճշմարտութեա՛մբ։ Որ զարարչագործ բազու՜կըս քո տարածեցեր ընդդէմ առտեղա՛ծց. հաստատեա զբազուկս մեր կարողու՛թեա``մբ. համբարձմամբ ձեռա՜ց առ քեզ միջնորդի՛լ՝ Խիւսմամբ թա՜գ 'ի գլուխ պատեսցես բզմիտս և զըղձ ոյարա՛ցնս. խաչանիշ ուրարմամբ ըստ ահարո՛նի``ն. ծաղկեալ յուսկեթե՜լ 'ի զարդ խորանի՛։ Բազմից բո՜լորից տիրապէս աստուածպետակա՛ցն. Նափորտապատ սիրով զմեզ զգեստաւորե՛ցե``ր. քում սուրբ խորհրդո՜յդ լինել սպասաւո՛ր. Թագաւոր ե՛րկնաւոր՝ զեկեղեցի քո անշա՜րժ պա՛հեա. և զերկրպագուս անուանդ քում պահեա՛ 'ի խաղաղութեա՛ն։

Եւս ։

Ընտրեա՛լըդ յաստուծո՛յ. ով երջանի՛կ սուրբ քահանա՛յ։ Նըմանեա՛լ ահարոնի՛. և մովսէսի՛ մարգարէի՛ն։ (և այլն.)

## ՄԵՂԵԴԻՔ

Ծննդեան և Աստուածածնի։

Նոր ծաղիկ այսօր բըղխէ յարմատոյն յեսսեայ. և որդի գաւթի ծնանի կուսէն աստուծոյ։

Բանին հօր ծոցոյ մարմնարան, արփիահրաշ կոյս մարե բի բի բէյ (և այլն) բիամ ։

Աչքըն ծով 'ի ծով ծիծաղախիտ ծաւալանայր յառաւօտուն երկու փայլակնաձև արև ըէ ըի
ըէ (և այլն) գական նըման։

Կոյս անապական և անխախտ ծնողութե ըէյ
ըէ (և այլն) իւն։

Տեառնընդառաջին։

Քրիստոս փառաց թագաւորն (Տե․ էջ 28)

Ծաղկազարդին։

Ասա եբրայեցւոց մանկունքն զերգ ըզքրոբէ-ից առեալ․ հեթանոսական դասուց տօնակից
վեհիցն եղեալ։

Յարութեան։

Հաւուն հաւուն արթընացեալ գիտելով ըզհե-թանոսս․ ձայնէր ձայնէր տատրակին սիրասը-
նունդ սիրելոյն։

Առ պարտիզպանն ձայնէր մարիամ, միթէ դու
բարձեր զանդրանիկն իմ սէր։

Այսօր ընդ զօրըս հրեշտակաց տօնեմք ըզքո յարութիւնդ, քրէ րի րէյ (և այլն) րիստոս։

Յարեաւ փրկիչն աշխարհի և ազատեաց զազգըս մարդկան 'ի մահուանէ, քրէ րի րէ (և լն․) րիստոս։

Այսօր ողբային առ գերեզմանին, գաբրիէլ գո-
չէր զի՞ լայք, յարեաւ կենդանին։

Այսօր ողբային առ գերեզմանին քրի րէյ րի
(և այլն) րիստոսի։

Ի կոյս վիմէն յարեաւ այսօր, և զգերեալսն 'ի գերողէն ազատեաց քրի րէյ րի (և լն․) րիստոս։



Համբարձման։

Այսօր անդրանիկ հօր միածին որդին, յեր-
կինս ելանայ ադամային կերպիւ։

Հոգեգալստեան։

Նըւագեմք հոգւոյն նըւագս վայելուչս․ վայե-լուչ բանիւ զարարչութիւնն նախ ասեմք։

Եկեղեցւոյ։

Այսօր հարսըն լուսոյ զգեցեալ ծիրանի գե-
ղեցիկ ներկեալ։

Վարդավառին։

Գոհար վարդըն վառ առեալ (կրկ՛), 'ի վեհից
վարսիցն արփենից (կրկնեա՛)։

Խաչի։

Ծարաւեցաւ տէրն 'ի խաչին որպէս ըզմարդ,
այն որ արար զովկիանոս ծով գեղեցիկ։
Սամարացւոյն ջուր խընդրելով ազբիւրըն տէր,
այն որ արբոյց անեզերաց զանմահութիւն։

Ես ձայն զառիւծուն ասեմ (կրկ՛) որ գոչէր 'ի
քառաթևին (կրկնեա՛)։

Հրեշտակաց։

Գովեստ բերկրանաց քաղցրաձայնեալ երգեմք ձեզ, հրեշտակապետք և հրեշտակաց գումարք։

Մարգարէից։

Այսօր մանկունք սիոնի, բերկրեալ ցընծան զուարճալի, յիշատակաւ քո տօնի, սուրբ մար-
գարէ բաղձալի։

Առաքելոց։

Այսօր ցնծացէք եղբարք, պարակից եղեալ վերնոցն. սուրբ զառաքեալն գովել, յոր յե-շատակի նոցին։

Հայրապետաց։

Ի հանդէս տօնի քո ուրախացեալ ցնծամք. հայր և վարդապետ սուրբ հայրապետդ ընտրեալ։

Մարտիրոսաց։

Իսկ 'ի հեղմանէ արեան ձերոյ հոտ անոյշ բու-րեաց 'ի յերկինս, և հոտոտեցաւ տէր 'ի հոտ անուշից ընդ կամաւոր պատարագըս ձեր, ո՜վ սուրբ վկայք։

Շարական Խնկարկութեան Պատարագին։

Յայս յարկ նուիրանաց ուխտի՜ տեառն տա-ճարի. ժողովեալքս աստանօր 'ի խորհուրդ պա-պաշտման պաղատանաց առաջիկա՜յ սուրբ պա-տարագիս. խնկօք անուշիւք խումբ առեալ պարեմք 'ի վերնայնո՜յն սրահըս խորանիս. ուղ-ղութեամբ ընկալ զաղօթս մեր՝ որպէս բուրվառ անուշահոտ խնկոց ստաշխի՜ց և կինամոնաց. և ըզմատուցօղըս պահեա սրբութեամբ միշտ և հանապա՜զ քեզ սպասաւորել. բարեխօ-սութեա՜մբ մօր քո և կուսի՝ ընկալ զպաշտա՜նս քոց պաշտօնէի՜ց. Որ գերագոյն քան զերկինըս պայծառացուցեր սուրբ զեկեղեցի՜ արեամբ քո Քրիստոս. և ըստ երկնայնոցըն կարգեցեր 'ի նմա զդասս առաքելոց և մարգարէի՜ց սուրբ



վարդապետաց. այսօր ժողովեալ դասք քահա-նայից՝ սարկաւագաց՝ դըպրա՜ց և կղերիկոսաց. խունկ մատուցանեմք առաջի քո տէր յօրինակ ըստ հընո՜ւմըն Զաքարիայ. ընկալ առ 'ի մէնջ ըզխընկանուէր մաղթանս՝ որպէս զպատարագն աբելի՝ զնոյի՜ և զաբրահամու. բա՜րեխօսու-թեա՜մբ վերին զօրաց՝ միշտ անշարժ պա-հեա՜ զաթոռ հայկազնեա՜յս։

---

Ճաշու Մարտիրոսաց. ԱՁ (միր)

Ճառագայթ անճառ լուսոյ անքըննելի՜ տէրու-թիւն. յառաջագոյն հրաշացուցեր զտեսողու-թիւն մարգարէից. իջանելո՜վ 'ի ստորինս աստ-ուածային տնօրէնութեամբ. Որք ըզտաճա՜ր հաւատոյ հիմնացուցին շնորհօ՜ք սուրբ հոգւո՜յն. յոր եմո՜ւտ բանն աստուա՜ծ եօթնարփեան ճառագայթիւք. իջանէ"։ Երևեցա՜ւ յաշխար-հի՜ ճշմարիտ մարդեղութեամբ. զոր քարոզե-ցին մեզ հրաւիրօղքըն համագոյ հօր և հո-գւոյն. լուսաւորելով ըզտիեզերս աստուածային տնօրէնութեա՜մբ։

Ճաշու Հայրապետաց. ԳՁ (միր)

Այսօր երկնայնո՜ցն ընդ մեզ տօնախըմբելով զյիշատակ սուրբ հայրապետա՜ցն. որք լու-սաւորեցին զհաւատոյ մա՜նկո՜ւնս. և ընդ

հրեշտակացըն դա՛սս վերակարգեցան ։ Այսօր առաքելոց և մարգարէիցըն դասք, տօնակից դոլով դըստեր վերին սիոնի՛. 'ի յիշատակի սուրբ վարդապետա՛ցն. որք իմաստից նո-ցին զխորո՛ց յայտնեցին զխորհուրդ ։ Այսօր քահանայք և պաշտօնեայք սուրբ եկե՛ղեցւոյ՝ վերապատուեն զյիշատակ սուրբ վարդապե-տա՛ցն. որով զարդարեցան երկնային շնո՛ր-հօքն. երգեն ընդ նոսի՛ն զփառըս յաւի-տեա՛ն ։

Ձայն շարականս Մարգարէից ։ ԱՁ (սիր.)

Պարծեցին սուրբքըն փառօք. և՛ ցընծա-ցե՛ն յաւիտենական 'ի վաստակս իւրեանց յա-ւուր գալըստեան փրկչին. յորժամ գա՛յ փա-ռօք հօ՛ր փառաւո՛ր լինել 'ի մէջ սրբոց իւ-րոց ։ Սիրէ տէր զերկիւղածս իւր և պահէ՛ զը-նոսա՛. և բնակի 'ի հեզս և 'ի խոնարհս 'ի գա-լըստեան իւրոյ. յորժամ": փոխանա՛կ ճըգնու-թեան համբերողաց մատուցանէ յիւրաքանչիւր զանթառամ պըսակն փայլուն որպէս զարե-գակն. յորժամ":

ԱԿ

Ի տաճարի հանգըստեա՛ն սըրբոց վը՛կա՛յից. զաղաչանըս մե՛ր մի՛ անտեսս առնե՛ր որ կա-



դա՛մբք ա՛ռ քե՛զ տէր. սոցա բարեխօսու-թեա՛մբ կե՛ցո զմեզ. Որք վասն անուանդ քո հեղին ըզպատուակա՛ն սուրբ զարի՛ւնս իւ-րեանց. արիաբար մարտեա՛ն ընդդէմ թըշ-նա՛մւոյն և զօրացա՛ն 'ի պատերա՛զմի. սոցա բարե": Պարծեցին սուրբքդ քո տէ՛ր 'ի հան-գի՛ստս իւրեանց. որք տանջանաց անօրինա՛ցն համբերե՛ցին. և անապական պըսակա՛ցն ար-ժանի՛ եղեն. սոցա բարեխօսու":

ԲՁ

Ուրախանան հրեշտակք 'ի յերկի՛նս ընդ չար-չարանըս ճըգնաւորացն. և հրաշանան արա-րա՛ծք ընդ յաղթութի՛ւնըս սրբոցն ։ Մե-ծապէս պատերազմեա՛լք զառաքինութեան ըզ-հա՛նդէս. պըսակեցան 'ի քրիստոսէ՛ ընդ վե-րի՛ն զըւարթունսն ։ Ցընծայ կաթողիկէ՛ զուար-ճանան հաւա՛տա՛ցեալք. աղաղակեն ասելո՛վ. փա՛ռըք քեզ աստուա՛ծ ։

ԲԿ

Յիշեա զմեզ աստուա՛ծ փրկիչ մեր. յորժամ գա՛ս թագաւորութեամբըդ քո. կեցո զմե՛զ բարեխօսութեա՛մբ սրբոց քոց ։ Շնորհեա մե՛զ թողութի՛ւն երկնաւո՛ր թագաւոր. ընկալ զա-ղաչանըս մեր. կեցո ըզ": Յօրհնութիւն 'ի նո՛ր

օրհնեսցուք զՔեզ Քրիստոս Թագաւոր. որ վասն մեր մարմնացար. կեցո զ": Զհայր և զորդի և զսուրբ զհոգին փառաւորեմք ասելով. երեքսրբեան տէրութեան. կեցո զ":

ԳԶ

Պայծառացիր եկեղեցի սուրբ ընդ ճգնութիւն սրբոց վկայիցն. որք նահատակեցան 'ի յերկրի. և 'ի յերկինս պսակեցան: Ուրախանան և հրեշտակք 'ի յերկինս ընդ ճգնութիւն սրբ": համաձայնեալ ընդ նոսին այսօր և մեք տօնեմք զյիշատակ սրբ":

ԳԿ

Ճգնաւորք ճշմարիտք և վկայք Քրիստոսի. որք զչարչարանս և զմահ յանձն առիք վասն տեառն. զձեզ ունիմք բարեխօս առ Քրիստոս վասն անձանց մերոց. Քանզի հեղմամբ արեան ձերոյ պայծառացան սուրբ եկեղեցիք. և զստուերամած խաւար կռապաշտութեանցն բարձիք. զձեզ ու": Երկնային զօրքն իջեալ 'ի պատիւ պատարագի մահուան ձերոյ. և զպսակս անապականս առբերելով 'ի Հօրէ լուսոյ. զ":

ԳԶ

Ճգնութիւնք սրբոց քոյ Քրիստոս հաս-



տատեցին զհիմունս սուրբ եկեղեցւոյ կանգնելով 'ի սմա զխաչն յաղթութեան: Եւ հեղմամբ սուրբ արեանն իւրեանց ազատեցին զտիեզերս 'ի գիշապաշտ մոլորութեանց. և եղեն յաղթօղք 'ի պատերազմի: Ընդ որս և մեք աղաչեմք Քրիստոս ընկալ և զմեզ յերկնային խորանս 'ի լուսեղէն առագաստին. բարեխօսութեամբ և աղօթիւք սուրբ ճգնաւորացն:

ԴԿ

Այսօր եկեղեցի Քրիստոսի պայծառանայ յիշատակաւ սրբոց վկայիցն. որք բարեխօսեն առ տէր վասն մեր: Այսօր 'ի հեղումն արեան սոցա դասք հրեշտակաց խոնարհեալ միաբանութեամբ տօնեն ընդ մարդկան: Եկայք և մեք Քրիստոսի հաւատացեալք. կատարեսցուք զյիշատակ սրբոց վկայիցն. որք բարեխօսեն առ տէր վասն մեր:

Ծաղկ. Շաբ. Բարեկենդանաց ԲՇ. ԳՇ. ԵՇ. (օրհն.) ԳԶ

Քրիստոս աստուած յիշեա զննջեցեալսն 'ի սուրբ անունդ քո: Ըզգենս արեան քո: Եւ տէր յիշեա և հանգո ընդ սուրբս քո: Եւ 'ի միւսանգամ քո գալստեանն զննջեցեալսն մեր յիշեա և հանգո ընդ":

Փոխոց ԴՇ: (օրհն.) ԴԿ

Փառաբանութիւն առաքեմք քեզ Հայր

երկնաւոր. յիշեա զննջեցեալսն մեր և հանգո ընդ սուրբս քո: Որ էակիցդ ես հօր և հոգւոյ որդիդ միածին. յիշ: Որ փառակիցդ ես հօր և որդւոյ հոգիդ ճշմարիտ. յիշ:

Պահոց Ողորմեա: (օրհն.) Դկ

Որ անըսկիզբն յէութեան եկիր յաշխարհ. մարմնացար 'ի կուսէն յաղագս մերոյ պարտեաց. հանգո զննջեցեալսն մեր: Որ 'ի հօրէ լուսոյ լոյս ծագեցեր մեզ և կեանք. միածին որդի հօր համագոյակից. հանգ: Որ 'ի վեր ես քան զմիտս և զխորհուրդս. և խաչի համբերեալ փրկեցեր ըզտիեզերս. հան:

Շաբաթապահոց Ողորմեա Հանգստեան: (օրհն,) Դկ

Որ յանէից ստեղծող գոյից արարչակից հօր բանդ աստուած. թողութիւն շնորհեա ննջեցելոց քոց ծառայից յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր: Որ 'ի հօրէ առաքեցար և մարմնացար 'ի սուրբ կուսէն. թողու: Որ 'ի խաչին անշնչացար զմահու լուծեր զիշխանութիւն. թողու: Որ պսակիչդ ես քոց սրբոց և անվախճան բարեաց բաշխող. թողութիւն շնոր:

———



ՍՐԲԱՍԱՑՈՒԹԻՒՆՔ: Ծննդեան:

Բազմութիւնք հրեշտակաց և զօրաց երկնաւորաց իջեալ 'ի յերկնից ընդ միածին թագաւորին: Որք երգէին և ասէին սա է որդին աստուծոյ, ամենեքեան ասասցուք ուրախ լերուք երկինք և ցնծասցեն հիմունք աշխարհի: Զի աստուածն յաւիտենական 'ի յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ, զի կեցուսցէ զանձինս մեր:

Կիրակէի, Ննջեցելոց, Ծաղկազարդի և Հրեշտակաց:

Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր աստուած զքո սուրբ զեկեղեցի: Հազարք հազարաց հրեշտակապետք կան առաջի քո: Եւ բիւրք բիւրոց հրեշտակք պաշտեն զքեզ տէր. և 'ի մարդկանէ հաճեցար ընդունիլ զօրհնութիւն: Զայնիւ խորհրդականաւ. սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց:

Պահոց Ննջեցելոց:

Վասն յիշատակի հանգուցելոցն ընկալ հայր սուրբ մարդասէր զպատարագս: Եւ համարեա զհոգիս նոցա 'ի թիւ սրբոց քոց յարքայութեանդ երկնից: Մանաւանդ զի հաւատով մատուցաք զպատարագս. հաշտեսցի աստուածութիւնդ և հանգուսցէ զհոգիս նոցա:

Մարտիրոսաց:

Սրբութիւն սրբոց մեծ ես և ահաւոր: Եւ զինուորութիւնք հրեշտակացն օրհնեն զքեզ

և ասեն. փառք ՚ի բարձունս աստուծոյ. և
յերկիր խաղաղութիւն։

Մուրճուրէնց, Աւետեանց և Հայրապետեանց։

Ամենակալ ես տէր զօրութեանց որ թագա-ւորդ ես յաւիտենից։ Որ նստիս յերկնից ՚ի յերկինս և լոյս ծագես յարարածս քո։ Որ խոնարհութեամբ իջեր ՚ի յերկիր. քեզ պա-տարագ մատուցանեմք։ Եւ սուրբ զանու-նդ քո փառաւորեմք. տէր որ պսակիչդ ես քոց (այս անուն)։ վասն զի սուրբ ես մեզ ես քոց. տէր ամենակալ ՚ի քում արքա-յութեանդ։

ՏԱՂՔ

Աւետեաց։

Աւետիս քեզ մարիամ զոր գաբրիէլ սկզբ-նաւորեաց. աւետիս աւետիս աւետիս քեզ մարիամ աւետիս։ Բանաւոր տաճար եղեր դու երկնաւոր թագաւորին. ուրախ լեր ուրախ լեր ուրախ լեր կոյս մարիամ ուրախ լեր։ Գեղեցիկ գեղ գովելի գեղեցկաշէն տաճար մաքուր. աննման աննման աննման կոյս մարիամ աննման։ Գովեան եղեր դրախտին կենաց դուստր իմաս-տուն մօրն եւայի. մայր լուսոյ մայր լուսոյ մայր լուսոյ կոյս մարիամ մայր լուսոյ։

Ծննդեան։

Այսօր տօն է ծննդեան աւետիս.
տեառն մերոյ և յայտնութեան աւետիս։



Այսօր արեւն արդարութեան աւետիս.
երևեցաւ ՚ի մէջ մարդկան աւետիս։
Այսօր սուրբ կոյսն անապական աւետիս.
ծնաւ եբեր զանմահ արքայն աւետիս։
Այսօր հրեշտակք յերկնից իջին աւետիս.
ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն աւետիս։

Երկինք երկնից խմբ արարէք, և երկնայինք դուք խոնարհեցէք. ՚ի բեթղեհէմ ՚ի յայրն ըն-թացէք, զերկնից արքայն ՚ի մսուրն տեսէք. այ օր այ օր օր օր օր. օր օր օր օր օր օր օր. իմ միածին որդեակ օր օր օր. իմ անդրա-նիկ յիսուս օր օր օր։

Յանժամ իսկ գայ ՚ի յորդանան, առ յովհան-նէս ՚ի բանիւն ձայն. և անկարօտըն մաքրու-թեան, առ ՚ի մաքրել զազգըս մարդկան։

Հրճուիմք այսօր մեք հոգեպէս, տօնիւս մա-քուր սուրբ կուսական. զի ծնաւ փրկիչ մեր տէր քրիստոս, որդի դաւթի աբրահամու. ա-ւետիս քեզ հայր մեր ադամ. աւետիս քեզ մայր մեր եւայ. աւետիս քեզ դուստր եւայի կոյս մարիամ։

Ծաղկազարդի։

Այսօր ցնծան արարածք խրախճանապէս օրհ-նութեամբ, երկինք երկիր պար առեալ ծափըս ծափի հարկանեն։

Ննջեցելոց։

Սեաւ եմ գեղեցիկ դուստր եւայի երուսաղէմ. ահա նա հարսն իմ ցանկալի սիրով կապեալ ընդ փեսային։

Յարութեան ։

Եկեալ մարիամ մագդաղենացին ·
յայն առաւօտին միաշաբաթին ։
Մտեալ և տեսին զտէրունեան տեղին ·
ունայն 'ի մարմնոյն յիսուսի փրկչին ։

Ի գերեզմանն յարուցելոյն անմահին, այսօր գոչէր հրեշտակն երկնային · յարեաւ քրիստոս զարթեաւ քրիստոս 'ի կոյս գերեզմանէն 'ի լոյս գերեզմանէն ։

Մարիամու մագդաղենի, ցուցաւ նըման պարտիզպանի · կարծէր ըղձա անյուսալի, բարձող մարմնոյն տիրականի ։

Յայն առաւօտին միաշաբաթին, լուսափայլ հրեշտակն էր նըստեալ 'ի վերայ վիմին ։

Նոր ծաղիկ պայծառ ցուցաւ, այսօր 'ի նոր գերեզմանէն ։ Երփնազարդ հոգւոյըն տունկք, կանանչացան կենդանութեամբ ։

Ո՛վ պարտիզպան, ասա՛ ո՞ւր տարան զյիսուս միածինն, որ կարծեմ թէ դու ես նըման ։

Համբարձման ։

Եւ 'ի յերկինըս վերացեալ · վերայ թևոց հողմոց ելեալ · նովին մարմնովըն համբարձեալ · որով մեռեալն և յարուցեալ ։

Հոգեգալստեան ։

Ներհիւսեսցուք զքաղցր եղանակ, վայելչահիւս երից անձանց · ծընօղին և ծընեցելոյն, և բղխեցելոյ սըրբոյ հոգւոյն ։



Վարդավառի ։

Այսօր ցնծայ լեառըն թաբօր և զուարճանայ մեծըն հերմոն · քանզի լոյսըն աստուածային այսօր ծագեաց այն սուրբ լերին · այ ցընծայ այ ցնծայ · ցընծայ ցընծայ լեառըն թաբօր և զուարճանայ ։

Վերափոխման ։

Այսօր գաբրիէլ հրեշտակապետն եկեալ ·
բերեալ զբրաբիոն պըսակ յաղթօղ կուսին ։
Այսօր կոչելով առ բոլորիցըն տէր ·
զտաճար բարձրելոյն և զընակարան բանին ։
Խընկենին ծառին նըման ես · պըտուղ դու քաղցրահամ ես · զբարի պըտուղ բերեալ ես · աստուածածին մեղայ քեզ ։

Խաչի ։

Աստուածածին կոյսըն մարիամ, կայր առ խաչին խըռով միածնին · հեղոյր արտօսր կըսկծմամբ սըրտին, և զայս ասէր ձայնս ողորմելի · այ ոհ այ ո՛հ զքեզ 'ի խաչ տեսանելս · հազար եղուկ մօրդ այրած սըրտիս ։

Խաչն 'ի նախնումն երևեցաւ, ծաղկեալ 'ի դրախտն աստուածատունկ · մըխիթարիչ եղև սեթայ, նախագուշակ նոյին ադամայ · մեք 'ի յայն փայտն եմք յուսացեալ, յոր տէր յիսուս բևեռեցաւ · և խոնարհեալ երկիրպագեմք, աստուածընկալ սուրբ նըշանին ։ Ի յերկրորդումն երևեցաւ, խաչըն նորոյ նահապետին · առեալ հրաման կազմեալ տապան, օրինակաւ սըրբոյ խաչին · մեք 'ի յայն փայտն եմք յուսա՛

Հաւիկ մի պայծառ տեսի անՆըման. 'ի յայն խաչափայտին վերայ անՆըման. անՆըմանիդ ո՛վ Նըման դու Նըման։

Հրեշտակապետաց։

Անեղ անմահ թագաւորին սուրբ զինուորք. ամենասուրբ երրորդութեան ըսպասաւորք. բարեբանօղք անլռելի խնկականին. ընդ մեր հայցել զձեզ աղաչեմք զօրք երկնայինք։

Առաւօտուց և Մարգարէից։

Պաղատանօք աստուածածնին, անապական և միշտ կուսին. և յովհաննու կարապետին, յանապատէ բարբառ ձայնին։ Առաքելոց մաքուր դասին. մարգարէիցն որք առաջին. որք ըղհոսանս հոգւոյդ արբին. և ընդհանուր մեզ արբուցին։

Հայրապետաց։

Հայրապետաց հանուրց ազգին. վարդապետաց ուղիղ բանին. որ զքեզ որդի հօր միածին. խոստովանիլ մեզ ուսուցին։

Առաւօտուց։

Արեգակն արդար որ 'ի հօրէ ծագեալ. զառաքեալսըն քո անճառ շնորհօք լըցեալ.

Մարտիրոսաց։

Հանդուրժելով չարչարանաց. գլխաբախից բըռնաւորաց. ոչ երկուցեալ 'ի սպառնալեաց. հրոյ և ժանիցըն գազանաց.



Կցուրդ 'ի Համբարձման Առաւօտուց, ձայն 96 : Ա.Զ

Արդ աղաչեմ մայր աստուածոյ ըղծնեայն 'ի քէն վասըն մեր զի ընդ նըմին պահելով սուրբ յարութեամբ նորա նորոգեցուք. առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել ըզմեզ։ Եւ համբարձեալ ըզձայնըն յուդայի խընդրելով 'ի տեառնէ ըզտենչային ամենեցուն սուրբ ըզխաչն. և հաստատեալ գոչէր եկայք երկրպագեսցուք աստուածային սուրբ նըշանին. մեծացուցանելով ըզծընեալըն 'ի կուսէն։

Երգ Ս. Գրիգորի։

Մարմին տէրունական և արիւն փրկչական առաջի. երկնային զօրութիւնքն աներևոյթք երգեն և ասեն անհանգիստ բարբառով. սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց։

Սուրբ, սուրբ, սուրբ, տէր զօրութեանց. լի են երկինք և երկիր փառօք քո. օրհնութիւն 'ի բարձունս։ Օրհնեալ որ եկիր և գալոց ես անուամբ տեառն. ովսաննայ 'ի բարձունս։

Հայր երկնաւոր որ զորդիդ քո ետուր 'ի մահ վասըն մեր՝ պարտապան պարտեաց մերոց. հեղմամբ արեան նորա աղաչեմք ըզքեզ, ողորմեա քո բանաւոր հօտի։

Յամենայնի օրհնեալ ես տէր, օրհնեմք ըզ

քե՛զ գովե՜մք ըզքե՛զ. գոհանա՛մք ըզքէ՛ն
ա՛ղաչե՜մք ըզքե՛զ տէ՛ր աստուա՜ծ մե՛ր։

Որդի՛ աստուծոյ որ պատարագեա՛լ հօր 'ի հաշտութիւն, հաց կենաց բաշխիս 'ի մեզ. հեղմամբ արեան քո սո՜ւրբ աղաչեմք ըզքեզ,
ողորմեա արեամբ քով փրկեալ հօտի՛։

Հոգի՛ աստուծո՛յ որ զփառակցի քո զխորհո՛ւրդ իջեալ 'ի յերկնից կատարես 'ի ձեռըս մեր, հեղմամբ արեան սորա՛ աղաչեմք ըզքեզ
հանգո ըզհոգիս մեր ննջե՛ցե՜լո՛ցն։

Քրիստոս պատարագեալ բաշխի 'ի միջի մերո՛ւմ, ալէլո՜ւիա։ Զմարմին իւր տայ մեզ կերակուր և սուրբ զարիւն իւր ցօղէ 'ի մե՛զ ալէ"։ Մատի՛ք առ տէր և առէ՛ք ըզլո՛յս, ալէ"։ Ճաշակեցէ՛ք և տեսէ՛ք զի քաղցր է տէ՛ր, ալէ"։ Օրհնե՛ցէ՛ք ըզտէ՛ր յե՜րկինս ալէ՜լուիա՛։ Օրհնե՛ցէ՛ք ըզնա՛ 'ի բա՛րձունս, ալէ"։ Օրհնե՛ցէ՛ք ըզնա՛ ամենայ՛ն հրե՛շտա՛կք նո՜րա, ալէ"։ Օրհնե՛ցէ՛ք ըզնա՛ ամենայ՛ն զօրութի՛ւնք նո՜րա, ալէ։

Լցա՛ք 'ի բարութեա՛նց քո՛ց տէր, ճաշակելով ըզմարմի՛ն քո՛ և զա՜րիւն, փա՜ռք 'ի բարձունըս կերակրողի՛դ ըզմե՛զ։ Որ հա՜նապազ կերակրես ըզմե՛զ առաքեա 'ի մեզ ըզհոգեւո՛ր քո զօրհնո՜ւթիւն, փա՜ռք 'ի բարձունըս կերակրո"։ Գոհանա՛մք ըզքէն տէ՛ր որ կերակրեցեր ըզմեզ յանմահական սեղանո՛յ քո՛յ։ Բաշխելո՛վ ըզմարմինդ և զարիւնդ 'ի փրկութիւն աշխարհի.
և կեանք անձանց մե՛րոց։

ՑԱՆԿ

Ալէլուք խաչի . . . . . . . . . 133
» Ծննդեան . . . . . . . . 3
» Յարութեան . . . . . . 72. 81
Այսօր անճառ և ցարածեալ . . . . 60
Այսօր բանն 'ի հօրէ անմեկնելի . . . 29
Աշխարհ ամենայն առ խս նայեցեալ . . 196
Առաւօտ լուսոյ արեգակն արդար . . 198
Արդ աղաչեա մայր աստուծոյ . . . . 229
Երգ կիրակամտից (Լոյս զուարթ) . . 94
» Ճաշու ժամուն (Օրհնեմք զքեզ) . 55
» Միաշաբաթին (Նորաստեղծեալ) . 75
Երգք Արեւագալին . . . . . . . 33
» Խուզարկերից աւետարանին . . . 83
» Ս. Պատարագի . . . . . . . 230
Երրորդութիւն անբաժանելի . . . . 93
Ընտրեալդ յաստուծոյ . . . . . . 213
Թագաւոր յաւիտեան (Այսօր դասք) . 22
Խաչի քո քրիստոս երկրպագանեմք . 64
Կանոն Աւետեաց . . . . . . . . 85
» Ծննդեան Աստուածածնի . . . 128
» Ծննդեան Յովհաննու Մկրտչին . 48
» Համօրէն առաքելոց . . . . . 149
» Մեծի շաբաթուն . . . . . . 63
» Սրբոյն Դաւթի և Յակոբայ . . 157
» Սրբոյ Լուսաւորչին մտանելն 'ի վիրապն 40
» » » ելն 'ի վիրապէն 104
» Սրբոց Հռիփսիմեանց . . . . . 100

Կանոն Սրբոց Հրեշտակապետացն . . 145
» Սրբոյն Յակոբայ Մծբնեցւոյն . 143
» Սրբոցն Յովակիմայ և Աննայի . 124
» » Որդւոյն Որոտման . . 168
» » Պետրոսի և Պօղոսի . . 165
» Սրբոյն Ստեփաննոսի . . . . 160
» Վերափոխման Ա. աւուրն . . . 116
» » Բ. » . . . 120
» Տեառնընդառաջին . . . . 24—29
Կանոնագլուխ ԱՁ (Դատեա տէր) . . 184
Համբարձի Հոգեգալստեան Է. աւուրն . 30
» Առաքելոց . . . . . . 96
Հարց Գիւտի խաչին (Որ փափագեալ) . 143
Ճաշու շարական Բուն Բարեկենդանի . 32
» » Գիւտի խաչին . . . 143
» » Եկեղեցւոյ . . . . 111
» » Զատկին (Յարեաւ քրիստոս)70
» » Խաչի Ա. և Բ. աւուրց 136· 139
» » Ծննդեան Ա. աւուրն . 9
» » Համբարձման . . . 91
» » Հայրապետաց . . . 217
» » Հոգեգալստեան Ա. աւուրն 93
» » Ղազարու յարութեան . 45
» » Ճրագալուցի Ծննդեան 2
» » Մարգարէից . . . . 217
» » Մեծին Ներսէսի . . . 109
» » Նաւակատեաց խաչի . 132
» » Շողակաթին . . . . 115
» » Սրբոց Թագաւորացն . 110



Ճաշու շարական Սրբոց Թարգմանչացն . 144
» » » Ղևոնդեանց . 29
» » Սրբոց Փառասնիցն . . 39
» » Վարդավառի Ա. աւուրն 114
» » » Բ. » 115
» » Տապանակին . . . . 112
» Շարականք Աղուհաց. Կիր. 37· 38· 39 44
» » Մարտիրոսաց . . . 218
» » Յարութեան . . . . 97
» » Ուխտօրէից Ծննդեան . 14
» » Պահոց . . . . . . 221
Մանկունք սրբոյն Դաւթի և Յակոբայ . 195
» Մեծի հինգշաբաթի (Այսօր կանգնե") 53
» Վարդավառի Ա. և Բ. աւուրց 114· 115
Մեղեդիք Տէրունեաց և Սրբոց . . . 213
Շարական Խնկարկութեան Պատարագի . 216
» Հանդերձի (Խորհուրդ խորին) 212
» Սրբոյն Սահակայ Պարթևի . 29
» Սրբուհւոյն Սանդխտոյ . . . 103
» Սրբոց Վարդանանց . . . 30
Շարականք Զատկի . . . . . . . 72
» Խաչահանգստի . . . . . 191
» Խաչվերացի . . . . . . 137
» Ծաղկազարդի . . . . . 46
» Հաղորդութեան և Ոտնալուացի 56
» Հարսանեաց . . . . . . 189
» Ճրագալուցի Զատկին . . 69
» Եւ Երգք Հանգստեան . . 171
» Եւ Տաղք Թափօրի Յարութեան 77

Ողորմեա Աստուածայայտնութ. ճրագալուցի 1
Ոտնալուայի մեծ Քարոզ, Գանձ և Տաղք 56
Սաղմոս Աղաղակեցէք . . . . . . . 32
» Ասաց տէր ցտէր իմ . . . . . 9
» Գովեա երուսաղէմ զտէր . . 70
» Ողորմեա ինձ աստուած . . . 53
» Տէր 'ի զօրութեան քում . . . 80
Սրբասացութիւն Մեծի Հինգշաբաթին . 55
» Յարութեան . . . . 76
Սրբասացութիւնք . . . . . . . . 223
Վասն սխալներոյ ձայնից շարականաց . . 192
Տաղք Տէրունեաց և Սրբոց . . . . . 224
Քարոզ Իւղաբերից Աւետարանին . . . 201
» Ծննդեան (Մայր սուրբ) . . . 7
Քարոզք սաղմոսաց . . . . . . . 200
Օրհնութիւն Աստուածայայտ. ճրագալուցի 1
» Գիւտի խաչին . . . . . 142
» Եկեղեցւոյ (Ուրախ լեր) . 110
» Զատկի . . . . . . . 71
» Խաչի Ա. աւուրն . . . 74. 133
» » Բ. » . . . . . 137
» Համբարձման . . . . . 90
» Հոգեգալստեան Ա. աւուրն 13. 92
» Ծննդեան Ը. աւուրն . . 10
» Ս. Լուսաւորչին գիւտի նշխար. 44
» Վարագայ խաչին . . . . 140
» Վարդավառի Ա. աւուրն . 113
Փոխք և Սաղմոսք . . . . . . 202—211

Ըստ առաջարկութեան բարեկամաց ոմանց՝ կարեւոր համարեալ յաւելուլ աստէն և զյետագայսս :

Երգ Տեառն Ներսէսի Հայոց Կաթողիկոսի
ասացեալ 'ի Պաշտման Գիշերոյ :

Յիշեսցուք 'ի գիշերի զանուն քո տէր :
Բղխեսցեն սիրտք մեր զբան բարի. և լե-
զուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր
թագաւորին :
Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանես-
ցուք ըզքեզ տէր :
Զաղօթս մեր տացուք քեզ տէր 'ի դաւի-
թըս քո 'ի մէջ նոր երուսաղէմի :
Ի գիշերի համբարձցուք ըզձեռըս մեր
սրբութեամբ առ քեզ տէր :
Ի ձայն գոհութեան ամենայն հոգիք օրհ-
նեսցեն ըզտէր :
Զարթիք փառք իմ զարթիք. և ես զար-
թեայց առաւօտուց. ալէլուիա :
Զարթիք ընդ զըւարթունս մանկունք վերինըն
սիօնի. ալէլուիա :
Զարթիք որդիք լուսոյ 'ի յօրհնութիւն հօրըն
լուսոյ. ալէլուիա :
Զարթիք փըրկեալք արեամբ և տուք ըզփա-
ռըս փըրկողին. ալէլուիա :
Զարթիք նոր ժողովուրդք նոր երգս առեալ
նորոգողին. ալէլուիա :

Զարթիք հարսունք հոգւով սպասեալք գալոյ
սուրբ փեսային. ալէլուիա։

Զարթիք վառեալք լուսով ըստ իմաստուն սուրբ
կուսանացն. ալէլուիա։

Զարթիք պատրաստեցէք իւղ լապտերաց զջերմ
արտասուս. ալէլուիա։

Զարթիք և մի ննջէք նըման յիմար կուսից
նիրհէք. ալէլուիա։

Զարթիք երկիրպագցուք և արտասուօք զայս
ասասցուք. ալէլուիա։

Զարթիր ընդ էր ննջես. Տէր մի մերժեր
ըզմեզ իսպառ։

Արի Տէր օգնեա մեզ. տացուք անուա-
նըդ քում ըզփառս։

Այժմ և յաւէտ Հօր և Որդւոյ և սուրբ
Հոգւոյն. ամէն։

Զարթուցեալքս 'ի զբաղմանէ գիշերային
հանգըստենէ։

Շնորհեսցէ մեզ մարդասէր Տէր մըխիթա-
րութիւն և 'ի սփոփանս եկեղեցւոյ։

Անհուն և գոհութեամբ կացցուք 'ի յաղօթս.
Եկեալ խոստովանեսցուք ըզյանցանս.
Եւ դըտցուք 'ի քրիստոսէ զքաւութիւն և
ըզմեծ ողորմութիւն։

. . . . . . . . . . . . . . .

(Յաւիտեանս յաւիտենից.) Ամէն. ալէլուիա.
ալէլուիա. ալէլուիա։

Ամէն. ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա



օթեա առ մեզ խաղաղարար և ննջեսցուք
անխռովարար. և ընդ առաւօտըս կանխես-
ցուք օրհնել ըզքեզ ընդ Հօր Հոգւով. Գոչման
փողոյն զարթիցէ որ 'ի վերջնումըն գիշերի.
լըսել որա զմեզ արժանի և յաջակողմն օդեաց
դասի. անշէջ վառեալ զլոյս լապտերաց ըստ
իմաստուն հինգ կուսանաց. զի ընդ փեսայիդ
'ի յառագաստ հարսունք հոգւով մըտցուք 'ի
փառս։ Հալածեա 'ի մէնջ Տէր նըշանաւ խաչի
քո զընդդիմամարտ և զաներևոյթ գազանն.
և մի տար յապականութիւն զքո ժառան-
գութիւն։ Բարեխօսեա վասըն մեր աստուա-
ծածին Մարիամ. որ ծընար ըզՏէր աստուած
որ հովուէրըն զիսրայէլ. ամենազօր և սքան-
չելի փառօքն իւրովք։

Շարական. Գ.Ձ

Ի քէն հայցեմք հայր գըթութեանց և աստ-
ուած մըխիթարութեանց. 'ի տըխրական գի-
շերային մեկնեալ ժամուս. մըխիթարեա
ըզմեզ 'ի տըրտմութեանց մեղաց. և շնորհեա
ողորմութիւն գործովք արդարութեան. ա-
ղաչանօք սուրբ աստուածածնին և ամե-
նայն արդարոց. ըստ քաղցրագթին աստ-
ուածային քո հրամանի կոչման որդի աստու-
ծոյ. եկեալ եմք առաջի քո յերեկոյիս աշխա-
տեալք և ծանրաբեռնեալք. թեթևացո 'ի
ծանրութեանց մեղաց զանձինս և զօրացո բաւ-

նալ կամաւ ըզքաղցըր լուծ քոց պատուիրա-
նաց. աղաչամ: Պաղատիմք առ քեզ հոգւով
՚ի հանգըստեան հասեալ ժամուս մարդասէր
հոգի աստուծոյ. յորժամ նորոգես զերեսս
երկրի և վերըստին ստանաս զոգիս մարդ-
կան. նորափետուր զարդարեա ըզննջեցեալըն
մեր ըզծննեալսն ՚ի քէն սուրբ աւազանաւն.
աղաչամ: Զկենդանագիր անարատ ծընողի քո
արկանեմք առաջի անոխակալ տէրութեա-
նըդ քո. յորժամ գաս փառօք հօր դատել
ըզթըշնամին խաչին քո. նորեա յանցանաց
մերոց բարեխօսութեամբ մօր քո և կու-
սի. աղաչեմք ըզքեզ տէր պահպանեա ըզ-
մեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ: Հա-
ղորդս արա և ըզմեզ տէր ընդ սրբոց քոց
առաքելոցն. որք արժանի եղեն տեսանել
ըզքեզ ՚ի յարութեան քո. արժանաւորեա
տէր տեսանել ըզքեզ ՚ի միւսանգամ քո
գալըստեանն. օրհնութիւն առաքողին ՚ի
բարձունս: Ի նըստիլ քո յատենի դատաւ-
որ ահեղ. աղաչանօք սուրբ աստուածած-
նին յիշեա զննջեցեալըն մեր. յորժամ
գայցես ահեղ փառօք. քանզի քո են
փառք յաւիտեանս ամէն: